ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-3 (1673) Մարտ 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Իրականությունը որպես մեղադրանք (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Արցախն այսօր: Գլոբալ և տեղական նշանակության մարտահրավերներ (էջ 4-6)

Սարգիս Սարգսյան
Ռուսական բանակի հաջող հարձակումը կարձանագրի համաշխարհային երկու բևեռների դիմակայության գիծը (էջ 7-9)

3- Հայրենի եզերք

Տաթևիկ Աղաջանյան
Շրջափակված Արցախ. ի՞նչ իրավիճակ է ներքին կյանքում (էջ 10-11)

4- Տարածաշրջանային

Վահե Սարգսյան
Աղմկահարույց օրինագծերի հետնախորքը. Վրաստանի ընտրանքը (էջ 12-20)

5- Աշխարհաքաղաքական

Լիանա Պետրոսյան
Թուրքիայի ավերիչ երկրաշարժն ու դրա քաղաքական հետևանքները Ռ. Թ. Էրդողանի համար (էջ 21-23)

Տիգրան Չանդոյան
Թուրքիայի երկրաշարժի ֆիզիկական և քաղաքական հետևանքները (էջ 24-25)

Նարե Գևորգյան
Իսրայելական վերջին հարձակումը Սիրիայում և իրանական արձագանքները (էջ 26-27)

6- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
«Նեմեսիսից» Հայաստանի իշխանության ունեցած վախերի շուրջ (էջ 28-31)

7- Պատմության լուսարձակ

Մարիամ Հովսեփյան
«Նեմեսիս» գործողության ձեռնարկների արձագանքը պոլսահայ պարբերականների էջերում (1920-1922 թթ.) (էջ 32-37)

8- Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Դարձ դէպի հայրենիք (էջ 38-42)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Կուսակցական, անկուսակցական եւ նման եզրեր. փորձ՝ լաւ հասկնալու համար (էջ 43-44)

Իրականությունը որպես մեղադրանք

Սույն թվականի մարտի 4-ին, մյունխենյան համաժողովի շրջանակում գտնվելով Գերմանիայում, Նիկոլ Փաշինյանը հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումից 10 օր անց Փաշինյանը մամլո ասուլիս տվեց հայաստանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների համար: Չնայած հանդիպումների նպատակների և մասնակիցների կազմերի տարբերությանը՝ այս երկու միջոցառումները նման էին իրար նախ և առաջ նրանով, որ, կարճ ներկայացնելով տարբեր բնագավառներում իր գլխավորած իշխանության ձեռքբերումները, Փաշինյանն առաջարկեց մասնակիցներին հարցեր ուղղել իր ներկայացրած և ոչ միայն այդ թեմաներով: Երկու իրադարձությունների հաջորդ նմանությունն այն էր, որ դրանք հարց ու պատասխանի փոխարեն ավելի շուտ վերածվեցին հարցաքննությունների, իսկ ավելի ճիշտ, մեղադրանքների՝ ուղղված անձամբ Հայաստանի ղեկավարի և նրա ղեկավարած իշխանության դեմ: Կարելի է արձանագրել, որ կարճ ժամանակ անց, թե՛ ներկաների, և թե՛ ակնդիրների առջև աղճատվում ու հոդս էր ցնդում այն հեքիաթը, որ հանդիպումների սկզբում Փաշինյանը պատմում էր Հայաստանի տնտեսական առաջընթացի, ժողովրդավարության, կոռուպցիայի դեմ պայքարի, դատական համակարգի բարեփոխումների և այլ ուղղություններով ձեռք բերված «աննախադեպ նվաճումների» վերաբերյալ: Իսկ որ ողբերգական լինելու չափ մտահոգիչ էր, ակնհայտ դարձան երկրի ղեկավարի մակարդակին անհամապատասխան պարզունակ ու վտանգավոր դիրքորոշումները, փաստարկների սնանկությունը ինչպես ներքին կյանքի, այնպես էլ ազգային կենսական հիմնախնդիրների վերաբերյալ: Ժամանակին, երբ Փաշինյանը հաշվետվության խնդիր չուներ և միայն քննադատողի դերում էր, նա կարողանում էր փոքր ճշմարտությունը խառնելով մեծ ստի հետ տրամաբանական շղթա կառուցել և մոլորեցնել շատերին իր հեղափոխական ամբոխավարությամբ:

Այժմ, երբ նա ստիպված է հաշվետու լինել իր ու իր թիմի գործունեության համար, նրա հռետորաբանությունը խամրել է, դարձել հակասական ու անհավաստի: Թեև նա հավատում է, որ եթե անմիջականորեն դիմի մարդկանց դեռ որոշակի զանգվածի, կկարողանա մոլորեցնել:

Իհարկե, ամեն պատեհ ու անպատեհ առիթով նա շարունակում է բոլոր մեղքերի մեջ մեղադրել նախկիններին, բայց հինգ տարվա կառավարման պատկերն ակնառու է, և տրվող հարցերը պատասխաններ են պահանջում կոնկրետ իրողությունների վերաբերյալ: Վերոնշյալ երկու հանդիպումների

ընթացքում, որոնք ընդհանուր հաշվով տևեցին ավելի քան վեց ժամ, կարելի է ասել, որ ներկայացվող հարցադրում - մեղադրանքներից որևէ մեկը չարժանացավ հստակ ու բավարարող պատասխանի, այլ հակառակը, տարակուսանք ու ծիծաղ էին հարուցում՝ ստիպելով հարց տվողներին ի վերջո լռելու սոսկ դիմացինի երկարաբանություններին և կարգավիճակին զիջելով:

Ահա մի քանիսն այդ հարցադրում-մեղադրանքներից, որոնց հետևեցին լղոզված, բուն հարցերից շեղվող, լավագույն դեպքում՝ արտառոց պատասխաններ:

Գերմանիայի հայ համայնքի ներկայացուցիչներից մեկն ասում է, որ բարեգործական նպատակներով Հայաստան բերված բեռն ութ ամիս չեն կարողացել մաքսատնից դուրս բերել, իսկ մեկ ուրիշը ներկայացնում է, որ օտարերկրյա ներդրումներ ապահովելու նպատակով փորձել է իր անունով հաշվեհամար բացել հայաստանյան բանկերում և վեց ամսվա ջանքերն ապարդյուն են անցել:

Հատկանշական է, որ հնչող բազմաթիվ հարցադրում-մեղադրանքները երկրի ղեկավարի մոտ զարմանք կամ վրդովմունք չեն առաջացնում, ընդհակառակը, նա փորձում է անհեթեթ պատասխաններով արդարացնել տեղի ունեցողը, ինչը նշանակում է, որ շատ լավ տեղյակ է այդ ամենի մասին, եթե չենթադրենք, որ այս իրավիճակը հենց իր

թելադրանքով է ստեղծվել:

Փաշինյանը Գերմանիայում դժգոհում է, թե Հայաստանում հիմնական խնդիր է որակյալ կադրերի բացակայությունը, սակայն, երբ Երևանում ասում են, որ դատական համակարգի բարձր պաշտոններն ամբողջովին համալրված են իր նախկին թիմակիցներով, նա անվրդով պատասխանում է. «Բա ովքե՞ր լինեն»: Եթե հարցն ընդարձակվեր, կարելի էր ավելացնել իհարկե, որ ողջ պետական համակարգը, մինչև տեղական իշխանության ավագանիներ, իշխանությունն այսօր լցնում է իր կադրերով կամ աշխատանքից ազատելու պարտադրանքով մարդկանց ստիպում են անդամագրվել Փաշինյանի կուսակցությանը:

Ակնհայտ է, որ երկրի ղեկավարությունը ստանձնած անձն այլևս մոռացել է կամ վատ չի զգում իր նախկին ու ներկա դիրքորոշումների 180 աստիճանի փոփոխությունից, իսկ ավելի մեծ հաշվով ամբողջովին հակասության մեջ մտնելուց «հեղափոխական ու ճշմարտության մունետիկ» նախկին Փաշինյանի հետ: Փաշինյանն առանց քաշվելու և իրեն հատուկ ճարպկությամբ ասուլիսի ժամանակ հրապարակայնորեն արդարացնում է այն փաստը, որ կոռուպցիայի մեջ մեղադրված և մեղադրանքի հիման վրա 5.8 միլիոն դրամ գումար պետական գանձարանում վերականգնած անձը նշանակվել է նորաստեղծ հակակոռուպցիոն դատարանի ղեկավար:

Փաշինյանը շարունակում է արդարացնել իր թիմակիցների արագ հարստացման և թանկարժեք առանձնատների, բնակարանների, մեքենաների և այլ ձեռքբերումների վերաբերյալ ներկայացվող փաստերը: Երբ, օրինակ, Երևանում լրագրողն ասում է, որ պաշտպանության նախարարն էլիտար շենքում բնակարան է ձեռք բերել, որի արժեքը նախապես եղել է չորս հարյուր հազար դոլար, Փաշինյանը ասվածը հերքելու ավելի լավ բան չի գտնում, քան խորհուրդ տալը, որ եթե կարելի է Հայաստանում չորս հարյուր հազար դոլարով բնակարան վաճառել, ապա դու գնիր երեք հարյուր հազարով բնակարան և հարյուր հազար ավելիով վաճառիր: Եվ ասած հիմարությունն այնքան է Փաշինյանին դուր գալիս, որ ասուլիսի ընթացքում մի քանի անգամ կրկնում է նույն անհեթեթությունը:

Իսկ որտե՞ղ է թաքնված իրականությունը: Փաշինյանը գիտի, որ փոքր Հայաստանում, որտեղ բոլորն ամեն ինչի մասին իմանում են, անհնար է թաքցնել «արդարության հեղափոխությամբ» իշխանության հասած իր թիմակիցների արագ և աչքի զարնող հարստացման, նրանց նախկին ու ներկա կյանքի ու կենցաղի միջև եղած «հեղափոխական» փոփոխությունների պատկերը:

Սրանից ավելի կարևոր ու խորքային այլ երևույթ ևս գոյություն ունի: Փաշինյանի «թավշյա հեղափոխությունը» իրականացվել է ազգային արմատներից կտրված, բարոյական և այլ սկզբունքներից զուրկ, արևմտաթուրքական ազդեցությունների ենթակա երիտասարդ մի շերտի կողմից: Նիկոլ Փաշինյանը, որի գլխավորած «հեղափոխությունը» իր էությամբ ու բովանդակությամբ տարբեր չէ այն կրողներից ու իրականացնողներից, չունի իր հետևորդների երկարատև հավատարմությունն ապահովելու այլ արժեք և միջոց, քան շահը: Վերջին տարիների անկասելի գնաճի, հասարակության ավելի աղքատացման և աղքատների շերտի ընդլայնման պայմաններում «ժողովրդասեր իշխանության» նեղ շերտն անընդհատ մեծացնում է սեփական եկամուտները պետական բյուջեից ստացվող աշխատավարձերի բարձրացման, անտրամաբանական պարգևավճարների հաշվին: Սրան զուգահեռ, հասարակության մեջ տարածվում են խոսակցությունները, թե պետական պաշտոնյաներն ինչպես են վարժվում օգտվել պաշտոնի ընձեռած հնարավորություններից: Նիկոլ Փաշինյանը, ուզի կամ չուզի, պետք է մի դեպքում խրախուսի, մեկ այլ դեպքում հանդուրժի այս ամենը, որովհետև իր անգաղափար ու անսկզբունք «հեղափոխական» թիմն ամբողջական և միաձույլ պահելու այլ միջոց չկա, քան նյութական շահագրգռությունը: Ահա և հրապարակայնորեն հակադրվելով իր իսկ հռչակած գաղափարներին և նպատակներին՝ Փաշինյանը պաշտպանում է թիմակիցների անտրամաբանական ճոխությունները, բարգավաճող բիզնեսը և պետական համակարգին շոշափուկներով փաթաթվող կոռուպցիայի ծաղկումը:

Երկրի ղեկավարը հայտարարում է. «Հայաստանի զարգացման ռազմավարությունը ժողովրդավարությունն է»: Մի կողմ թողնենք, թե որտեղից է փչում այս փիլիսոփայությունը և մեր աչքի առջև քանի երկիր է խորտակվել ժողովրդավարության անվան տակ իրականացված ամբոխավարական հեղաշրջումների պատճառով: Երևանյան ասուլիսում լրագրողը վկայաբերում է «Ֆրիդրիխ Հաուս» կազմակերպության գնահատականը, ըստ որի, Հայաս-

տանի իշխանություններն իրականացնում են գաղտնալսումներ, և որ դատական համակարգը լրացվում է իշխող ուժի անդամներով:

Փաշինյանի հրահանգով մի շարք արտերկրյա գործիչների, հիմնականում սփյուռքահայերի համար արգելված է Հայաստան մուտքի իրավունքը: Այդ մարդկանց մեղքն այն է, որ իրենց ապրած երկրներում պայքարում են Հայաստանի ու Արցախի շահերի համար, ինչպես և մասնակցել են Հայաստանում ծավալված վարչապետի հրաժարականի պահանջին: Փաշինյանն ասում է, որ եթե համակարգային կոռուպցիա լիներ Հայաստանում, ինքը դրանում փայ կունենար: Այստեղ կարելի է համաձայնել նրա հետ, որովհետև ողջ իշխանությունը կենտրոնացած է ձեռքում և առանց իր գիտության, եթե չասենք թելադրանքի, ոչինչ չի կատարվում, իսկ, մյուս կողմից, Փաշինյանի հարստացման և տարբեր բիզնեսների մաս կազմելու մասին խոսակցություններն ավելի ու ավելի են տարածվում ժողովրդի մեջ: Փաշինյանն ասում է, թե Հայաստանում որևէ մեկի դեմ գործ սարքել հնարավոր չէ, այնինչ ընդդիմության դեմ իր իշխանության հիմնական զենքը «գործեր սարքելն» է, որոնց շինծու լինելու մասին ամեն օր հայտարարում են փաստաբանները: Բազմաթիվ քրեական գործեր հօդս են ցնդում դատարաններում, իսկ անցնող հինգ տարիներին աղմուկ հանած շատ հանցագործությունների մասին խոսակցությունները մարեցին դրանցում մեղադրվող անձանց որոշ ժամանակ բանտային մեկուսացման մեջ պահելուց հետո: Սրան հակառակ, բոլոր նրանք, ովքեր ընդդիմադիր դիրքորոշում չեն ունեցել կամ դադարեցրել են այդպիսի գործունեությունը, ստացել են ազատորեն գործելու իրավունք:

Փաշինյանը, ում կենսագրության խայտառակ էջերից մեկն էլ Հայ առաքելական եկեղեցու և նրա առաջնորդի դեմ ոտնձգությունների կազմակերպումն էր երևանյան հարցազրույցի ընթացքում անթաքույց դրսևորում է իր քամահրական վերաբերմունքը Հայ Առաքելական սուրբ եկեղեցու և հոգևորականության նկատմամբ, և, ըստ էության, մերժում է վերջինիս հոգևոր իշխանություն լինելու հանգամանքը հայտարարելով, թե՝ Հայաստանում կա մեկ իշխանություն:

Այս հոդվածը գրելիս նպատակ կար, ներքին խնդիրներին թռուցիկ անդրադառնալով, կենտրոնանալ Արցախ-Հայաստանի ինքնիշխանության պահպանման, անվտանգային խնդիրների և այդ հարցերում իշխանությունների որդեգրած քաղաքականության վրա: Բայց անհնար է չհիշել հիմնահարցերը, որոնք ուռճացած են և համընդգրկուն: Մյուս կողմից՝ արտաքին քաղաքականությունն ուղղակիորեն պայմանավորված է ներքին քաղաքականությամբ, քանի որ ներսից հիվանդը չի կարող դրսից առողջ և ուժեղ լինել: Նժդեհն ասում է, որ անբարոյական մարդը չի կարող հայրենասեր լինել և, հետևաբար, մեր շահերը թե որքանով պաշտպանված կլինեն,

անմիջականորեն կապ ունի այն բանի հետ, թե ով է դրանք ներայացնողը:

Վերը հիշատակված գերմանահայության հետ հանդիպումն ու երևանյան մամլո ասուլիսը բավական ժամանակ է, որ տեղի են ունեցել, սակայն այնտեղ արծարծված հարցերը այսօրեական հնչեղություն ունեն: Մասնավորապես դա վերբերում է ազգային-պետական խնդիրներին, որոնց մասին ներկայացված տեսակետներն արտահայտում են Հայաստանի իշխանությունների ի սկզբանե որդեգրած և հետևողականորեն իրականացվող քաղաքականությունը: Այդ հարցերին, սակայն, կանդրադառնանք հաջորդ անգամ:

Արցախն այսօր: Գլոբալ և տեղական նշանակության մարտահրավերներ

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացը հետզհետե նոր երանգներ է ձեռք բերում: Հարցի առնչությամբ փոխվել են ոչ միայն Երևանի ու Բաքվի, այլև Մոսկվայի, Անկարայի, Թեհրանի և այլ ուժային կենտրոնների դիրքորոշումները: Հակամարտությունը վաղուց արդեն դուրս է եկել հայ-ադրբեջանական տիրույթից և աշխարհաքաղաքական լուրջ նշանակություն է ստացել: Հիմա արդեն Արցախի հարցը վերաբերում է ողջ Հարավային Կովկասի ապագային, ինչպես նաև ձևավորվող նոր աշխարհակարգին: Այդ է պատճառը, որ մրցակցությունն այստեղ զգալիորեն ակտիվացել է, և անգամ խոշոր ռազմական բախման վտանգ է ստեղծվել: Իրավիճակը Հայաստանի և Արցախի համար բավական օրհասական է: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ ինչպես արդեն նշվեց, Արցախի խնդիրը դարձել է ավելի մասշտաբային հակամարտության հարց, ինչը զգալիորեն նվազեցրել է բուն Արցախի կարևորությունն աշխարհաքաղաքական կենտրոնների տարածաշրջանային քաղաքականության մեջ: Նրանց համար Արցախը հիմա արդեն ընդամենը պատրվակ է: Նպատակներն ավելի գլոբալ են և եթե դրանց հետապնդման ընթացքում «պատրվակը» տուժի, ոչինչ, Մոսկվան, Թեհրանն ու այլ կենտրոնները պատրաստ են այդ զոհաբերությանը: Իսկ սա նշանակում է, որ Արցախի սուբյեկտայնությունն այսօր գրեթե ոչնչացված է: Ջրոյացված է այն աստիճան, որ նույնիսկ բլոկադան, որը պաշտոնական Բաքվի ցեղասպանական քաղաքականության բացահայտ դրսևորում է, որևէ լուրջ արձագանք չի գտնում միջազգային հանրության շրջանում: Անտարբեր են բոլորը՝ բացի Ռուսաստանից: Ռուսաստանի որոշակի ակտիվությունն էլ պայմանավորված է զուտ այն հանգամանքով, որ Արցախի հարցում պարտավորություններ ունեն ստանձնած, իսկ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունն ուղիղ հարված է Ռուսաստանի միջազգային հեղինակությանը:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ Հայաստանն ինքն է դուրս մնացել տարածաշրջանային գործընթացներից՝ դրանց սուբյեկտից վերածվելով օբյեկտի: Մեր երկրի սուբյեկտայնության վերջին նշույլները ոչնչացվել են 2022 թ. հոկտեմբերի 7-ին, այն բանից հետո, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Պրահայում Իլհամ Ալիևի հետ համատեղ հայտարարություն ընդունեց: Հայտարարության տեքստում մասնավորապես նշված է. «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»[1]:

Երրորդ կարևոր պատճառը, որ ստիպում է խոսել Հայաստանի ու Արցախի դրության օրհասականության մասին, մեր տարածաշրջանում ձևավորված ուժերի նոր հավասարակշռությունն է: Հաղթելով 44-օրյա պատերազմում՝ թուրք-ադրբեջանական դաշինքը լավ հնարավորություն է ստացել հավակնելու ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի տարածքներին: Բաքուն և Անկարան ընդլայնել են պահանջատիրության սահմանները և հիմա ողջ Հարավային Կովկասը դիտարկում են որպես իրենց ազդեցության գոտի: Թուրք-ադրբեջանական դաշինքի ախորժակի մեծացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանն ու Իրանը զբաղված են այլ տարածաշրջաններում առկա հակամարտություններով և չեն կարող լիարժեք սպասարկել աշխարհաքաղաքական մրցակցության մի քանի ճակատներ: Մյուս կողմից՝ փետրվարի 6-ին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը զգալիորեն կասեցրեց Անկարայի նվաճողական քաղաքականության տեմպը մեր տարածաշրջանում: Հայաստանի համար սա, իհարկե, լավ լուր է: Կա հույս, որ ստորգետնյա ցնցումներին Թուրքիայիում կհաջորդեն նաև քաղաքական ցնցումներ՝ վերականգնվելու ևս որոշ ժամանակ ընձեռելով Հայաստանին: Հիշեցնենք՝ ընդամենը երկու ամիս անց Թուրքիայում նախագահական ընտրություններ են տեղի ունենալու:

Եվ վերջին, բայց ամենակարևոր պատճառը, նոր աշխարհակարգի ձևավորումն է: Մեծ հաշվով Հայաստանի և Արցախի, ինչպես նաև վերոնշյալ բոլոր խնդիրների հիմնական պատճառը հենց այս գործընթացն է: Հարավային Կովկասում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունները շատերը պայմանավորում են 2020 թ. Ադրբեջանի և Արցախի միջև տեղի ունեցած 44-օրյա պատերազմով և դրան հետևած զարգացումներով: Ու թեև ադրբեջանաարցախյան պատերազմն իսկապես մեծ ազդեցություն է ունեցել մեր տարածաշրջանի վրա, այնուամենայնիվ պատերազմը չէ, որ դարձավ փոփոխությունների հիմնական պատճառ: Թերևս ավելի ճիշտ կլինի ասել, որ 44-օրյա պատերազմն ինքն էր այդ փոփոխությունների հետևանքն ու կուլմինացիան:

Այս ամենի հետևանքով մեր տարածաշրջանում ի հայտ են եկել մի շարք իրողություններ, որոնք միանգամայն նոր են Հարավային Կովկասի համար: Դրանց հիմնական մասին անդրադարձել եմ վերջերս Թեհրանում տեղի ունեցած «Կովկասի աշխարհաքաղաքական հավասարումները և տարածաշրջանային ու արտատարածաշրջանային դերակատարները» խորագրով համաժողովում[2]: Այստեղ կարճ կնշեմ, որ խոսքը վերաբերում է Հարավային Կովկասի երկրների սահմանների փոփոխությանը, տարածաշրջանում այլ երկրների ռազմական ներկայությանը, մեր տարածաշրջանն Արևելք-Արևմուտք տրանզիտային գոտու վերածելու որոշ տերությունների ծրագրերին, աշխարհաքաղաքական մրցակցության նոր աստիճանին և այլն:

Այս բոլոր իրողությունների պարագայում սպասելիորեն նոր լույսի ներքո է դիտարկվում նաև Արցախի խնդիրը: Դրա գլոբալ առանձնահատկություններին հոդվածի սկզբում արդեն անդրադարձանք: Բայց բնական է, որ վերածվելով աշխարհաքաղաքական մրցակցության պատրվակի՝ Արցախն այնուամենայնիվ չի դադարում հայ-ադրբեջանական հակամարտության գործոն հանդիսանալ: Եվ ահա այս հարթության վրա նույնպես ի հայտ են եկել նոր զարգացումներ, որոնք լրացուցիչ սպառնալիքներ են ստեղծում հայկական երկրորդ պետության համար:

Այս լույսի ներքո, իհարկե, պետք է խոսել արդեն ավելի քան երեք ամիս շարունակվող բլոկադայի մասին: «Դրօշակի» նախորդ համարում այս խնդրին անդրադառնալու առիթ արդեն ունեցել եմ[3]: Ցավոք, անցած մեկ ամսվա ընթացքում հիշատակված հոդվածում ներկայացված հնարավորություններից Արցախի իշխանությունները չկարողացան օգտվել: Ճիշտ հակառակը՝ փետրվարի 23-ին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, ենթարկվելով Ալիևի պահանջներին, պաշտոնից ազատել է պետնախարար Ռուբեն Վարդանյանին՝ ըստ էության ցույց տալով, որ հայկական երկրորդ պետության իշխանությունները տրամադրված չեն Ադրբեջանի հետ դիմակայության և այդ կերպ սեփական շահերը պաշտպանելուն: Սա մեծ հարված դարձավ Արցախի սուբյեկտայնությանն ու հետագա խնդիրները լուծելու տեղի բնակչության՝ մի քանի անգամ հստակ կերպով բարձրաձայնած կամքին: Ռուբեն Վարդանյանի պաշտոնանկությունից հետո Ադրբեջանի իշխանությունները, ինչպես և կարելի էր կանխատեսել, չվերացրեցին Արցախի պաշարումը: Ճիշտ հակառակը՝ նրանք նոր պահանջներ դրեցին Ստեփանակերտի և Երևանի առջև:

Մարտի 6-ին տեղի ունեցած Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում Արայիկ Հարությունյանը տեղեկացրել է, որ ադրբեջանական կողմը իր խողովակներով փոխանցել է. «Կամ ընդունում եք ինտեգրացիոն քաղաքականությունը, կամ առկա խնդիրներին որևէ լուծում չի լինելու, հակառակը՝ լինելու են ավելի կոշտ և կտրուկ քայլեր[4]: Եվ սա հաջորդ իրողությունն է, որ ի հայտ է եկել արցախյան հիմնախնդրում, «ինտեգրացիան» ադրբեջանական կողմը դարձրել է իր քաղաքական նոր պահանջը: Բաքվի այս մոտեցմանը պաշտոնական Երևանը պատասխանում է քար լռությամբ: Դիմադրություն, այն էլ շատ թույլ, կա միայն Արցախում: Մարտի 13-ին Ալիևի աշխատակազմն Արցախի ներկայացուցիչներին հրավիրել է Բաքու՝ հանդիպման, սակայն արժանացել պաշտոնական Ստեփանակերտի մերժմանը: Արցախի իշխանությունները պահանջում են, որպեսզի նման հանդիպումները տեղի ունենան ՌԴ խաղաղապահների միջնորդությամբ նախկին հանդիպումների վայրում[5]:

Երրորդ կարևոր խնդիրը, որն առաջացել է Արցախում, հայկական երկրորդ պետության ներքին քաղաքական լարվածությունն է: Արդեն տևական ժամանակ է մամուլը լուրեր է տարածում այն մասին, որ

Արայիկ Հարությունյանը ցանկանում է հրաժարական տալ նախագահի պաշտոնից: Արցախում, սակայն, լավ են գիտակցում, որ ստեղծված իրավիճակում նախագահական նոր ընտրություններ կազմակերպելը շատ դժվար կլինի: Այդ իսկ պատճառով այնտեղ որոշել են փոխել սահմանադրությունը և Ազգային Ժողովին նախագահ ընտրելու լիազորություն տալ: Թե ինչ կստացվի այդ ամենի արդյունքում, դժվար է ասել: Բայց հիմա արդեն պարզ է, որ ներքաղաքական այդ ճգնաժամից օգտվում են որոշ հակապետական էլեմենտներ, որոնք փորձում են Արցախում զավթել իշխանությունը: Սա, իհարկե, մեծ վտանգ է հայկական երկրորդ պետության համար:

Այդ ամենին գումարվում է, այսպես կոչված, խաղաղության պայմանագրի շուրջ ընթացող հայ-ադրբեջանական բանակցությունների վտանգավոր հետևանքների հեռանկարը: Թե ինչ տրամաբանությամբ են ընթանում այդ բանակցությունները, հեշտ կարելի է դատել Նովրուզ Բայրամի առթիվ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ իր ժողովրդին ուղղած շնորհավորանքի տեքստից, որտեղ նա մի շարք սպառնալիքներ է հնչեցրել Հայաստանի հասցեին: «Եթե Հայաստանը ցանկանում է հանգիստ ապրել 29 հզ. ք/կմ տարածքում, ապա պետք է ընդունի Ադրբեջանի պայմանները, պաշտոնապես ճանաչի Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս, մեր պահանջների հիման վրա իրականացնի դելիմիտացիա», - մասնավորապես ասել է Ալիևը[6]: Ահա այսպես՝ ոչ ավել, ոչ պակաս:

Ներկայացված բոլոր իրողությունները վկայում են այն մասին, որ հայկական երկու պետություններն իսկապես գտնվում են չափազանց ծանր վիճակում: Մեր թշնամին ագրեսիվ է և անկուշտ: Դաշնակիցները՝ այլ հակամարտություններով տկարացած: Իշխանությունները՝ դավաճան: Հուսադրողը միայն այն է, որ ժողովրդի մեջ կա ներքին և արտաքին մարտահրավերներին դիմադրող թեկուզ փոքր, սակայն գործուն տարր: Բացի այդ՝ ակնհայտ է, որ աշխարհաքաղաքական կենտրոնները դեռևս զգուշանում են մեր տարածաշրջանում միմյանց դեմ ուղիղ առճակատման մեջ մտնելու հեռանկարից: Այս փուլում նրանք բավարարվում են մկանների ցուցադրմամբ և հավանական հակառակորդին զսպող հայտարարություններով: Կա հավանականություն, որ դրությունը մեր տարածաշրջանում ավելի չի բարդանա, և առկա իրողություններով նոր ստատուս քվո կձևավորվի: Բայց այդ հավանականությունը, ցավոք, մեծ չէ: Ուստի Հայաստանը պարզապես պարտավոր է ավելի հաշվարկված և հավասարակշռված քաղաքականություն վարել դաշնակիցների հետ: Իսկ դրա համար մեր երկրին նախ և առաջ իշխանափոխություն է պետք: Գործող իշխանությունները նման խնդիր չեն կարող լուծել: Ոչ էլ ցանկանում են: Նրանք միանգամայն այլ՝ Հայաստանի շահերի հետ որևէ առնչություն չունեցող շարժառիթներով են առաջնորդվում: ■

Հղումներ

1- Վարչապետ Փաշինյանի, նախագահ Ալիևի, նախագահ Մակրոնի և նախագահ Միշելի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման հայտարարությունը, 07.10.2022 թ., https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/07/Nikol-Pashinyan-Announcement/:

2- Անվտանգային բացերն ու Իրանի հյուսիսարևմտյան սահմանների վիճակը. Մարտահրավերներ և հետևանքներ, 05.03.2023 թ., https://times.am/776120/:

3- Արցախի շրջափակում՝ ռիսկեր ու հնարավորություններ, Հրանտ Մելիք-Շահնազարյան, «Դրօշակ», Թիվ-2 (1672), փետրվար 2023 թ.:

4- Նախագահ Հարությունյանը հրավիրել է Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստ. քննարկվել է Հանրապետությունում ստեղծված իրավիճակը, 06.03.2023 թ., http://president.nkr.am/am/news/consultations/5733/:

5- Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, 13.03.2023 թ., http://www.nkr.am/hy/news/2023-03-13/Statement:

6- Ինչ է սպառնացել Ալիևն օկուպացրած Թալիշից, 18.03.2023 թ., https://www.panorama.am/am/news/2023/03/18/%D4%B1%D5%AC%D5%AB%D6%87-%D4%B9%D5%A1%D5%AC%D5%AB%D5%B7/2808890:

Ռուսական բանակի հաջող հարձակումը կարձանագրի համաշխարհային երկու բևեռների դիմակայության գիծը

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող

Ռուս խաղաղապահներն ունեն առաքելություն՝ ապահովելու Բերձոր-Լաչինի միջանցքի անխափան գործունեությունը: Ենթադրելի է, որ Ռուսաստանի ռազմաքաղաքական վերնախավը գտնում է, որ այն ապահովելու ձևերը տարբեր են: Եթե տևական ժամանակ բանակցություններն օգուտ չեն տալիս, խաղաղապահներն իրավունք ունեն՝ ինչ-որ ձևով վերականգնելու երթևեկությունը և կապը: Սակայն խնդիրն այն է, որ ռուսական կողմի համար բավականին բարդ իրավիճակ է ստեղծվել, որի երկու ելքերն էլ կարող են բացասական լինել հենց Ռուսաստանի համար: Եթե Ռուսաստանը չի բացում ճանապարհը, դա հեղինակազրկում է ռուսական խաղաղապահ զորախմբին ու, ըստ էության, ավելորդ է դարձնում զորախմբի ներկայությունը: Երկրորդ՝ եթե ռուսական կողմը որոշի ուժային եղանակով բացել միջանցքը, անմիջապես հետևելու է Ադրբեջանի պահանջը՝ սահմանված ժամկետից շուտ ռուսական խաղաղապահներին դուրս բերել Արցախից: Ռուս խաղաղապահների տեղակայման առաջին իսկ օրից Ադրբեջանը նրանց ներկայությունը համարել է լուրջ խոչընդոտ իր վերջնական նպատակներին հասնելու ճանապարհին: Հետևաբար Ռուսաստանն ինչ որոշում էլ կայացնի, այն իր համար բարդ հետևանքներ է ունենալու: Պատերազմը Ուկրաինայում, Արևմուտքի հետ աննախադեպ լարված հարաբերությունները ստիպում են Ռուսաստանին շատ զարգացումներ անտեսել, քանի որ ստեղծված իրավիճակից օգտվող շատերը կարող են լինել, իսկ ելքերի հնարավորությունները՝ քիչ: Ռուսաստանում կա համոզմունք, որ ստեղծված իրավիճակից նվազագույն կորուստներով կարելի է դուրս գալ՝ առանց ուժային ազդեցության բացելով միջանցքը: Սակայն ձգձգվելու հանգամանքը ևս մեծ խնդիր է խաղաղապահների հեղինակության համար: Մյուս կողմից՝ Ադրբեջանում չեն կարող չգիտակցել, որ Լաչինի միջանցքի շրջափակումը չհանգեցրեց արցախահայության արտագաղթի և արտատարածքային միջանցքի ձեռքբերման հիմնական նպատակներից և ոչ մեկին: Այս ենթատեքստում ուշագրավ է այն հանգամանքը, որ ռուսական լրատվամիջոցները հատուկ ուշադրության արժանացրին Պուտին-Ալիև հեռախոսազրույցը: Դժվար է հասկանալ, թե ստեղծված պայմաններում հայ-ադրբեջանական օրակարգի ինչ թեմաներ կարող են քննարկել երկու մարդ, որոնք իրենց ստորագրություններով երաշխավորել են միջանցքի անխափան գործունեությունը: Ռուսական քաղաքագիտական շրջանակների ներկայացուցիչների հետ զրույցներից կարելի է ենթադրել, որ Ռուսաստանը փորձում է իր նորաթուխ «դաշնակցին» հնարավորինս փոքր զոհողություններով դուրս բերել միջազգային հանրության պարսավանքին արժանացած այս «բնապահպանական աղետից»: Հիշենք, որ 2022 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում Վլադիմիր Պուտինը և Իլհամ Ալիևը ստորագրեցին դաշնակցային համագործակցության մասին հռչակագիր՝ կազմված 43 հոդվածներից: Ըստ հռչակագրի 11-րդ հոդվածի՝ «Ռուսաստանի Դաշնությունը և Ադրբեջանի Հանրապետությունը վճռականորեն զսպում են իրենց տարածքներում կազմակերպությունների և անձանց գործունեությունը՝ ուղղված մյուս կողմի պետական ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության դեմ»: Դժվար չէ նկատել, որ վերոնշյալի միակ թիրախը ռուսահայ կառույցներն են:

Լուրջ մտորումների տեղիք են տալիս Ադրբեջանի Միլլի Մեջլիսի խոսնակ Սահիբա Գաֆարովայի հետ հանդիպման ընթացքում Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի խոսնակ Վյաչեսլավ Վոլոդինի հնչեցրած հայտարարությունները՝ կապված Հայաստան գործուղվող ԵՄ քաղաքացիական առաքելության (EUMA) հետ: Հայտնի է, որ դիտորդական առաքելության գործողության գոտին կընդգրկի Ադրբեջանի հետ սահմանի ամբողջ երկայնքը՝ ներառյալ Նախիջևանի հատվածը: Հանդիպման ընթացքում Վոլոդինը խիստ, անգամ սպառնալից շեշտադրումներով թիրախավորելով նաև Հայաստանը՝

ակնարկել է Եվրախորհրդարանի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ)՝ թնջուկները լուծելու անկարողության մասին: Իրականում երկու կառույցն էլ որևէ կապ չունեն ընդունված որոշման հետ: ԵՄ քաղաքացիական առաքելության՝ Հայաստան գործուղման որոշումն ընդունվել է ԵՄ արտաքին հարաբերությունների խորհրդի կողմից: Հիշեցնենք, որ Եվրոպական միության խորհուրդը (պաշտոնական անվանումը՝ Խորհուրդ, սովորաբար կոչվում է նախարարների խորհուրդ) Եվրոպական խորհրդարանով հանդերձ Եվրոպական միության երկու օրենսդիր մարմիններից մեկն է: Խորհրդի կազմի մեջ են մտնում 27 նախարարներ՝ մեկական նախարար Եվրամիության անդամ պետությունների կառավարություններից: Այս հիշեցումը կարևոր է նաև այն առումով, թե մեր ռազմավարական դաշնակցի պետական վերին ատյանները որքանով են տիրապետում «մանրուքներին» այն հարցերում, որտեղ մանրուքներ ուղղակի չեն կարող լինել: Ընդ որում, Վոլոդինի ուղարկած ազդակին շատ արագ արձագանքեց և այն ողջունեց Ադրբեջանի խորհրդարանի ռուսատյաց պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը, որը 2014-ից սկսած նախանձելի հետևողականությամբ Ռուսաստանին «դուրս է շպրտում Ուկրաինայից»: Այս համայնապատկերին բնականաբար՝ ակտիվացավ ՀԱՊԿ-ի ղեկավարությունը. փետրվարի 14-ին մամուլի ասուլիսի ընթացքում ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ, գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորովը, պատասխանելով հարցին, թե արդյոք իր տարածքում ՀԱՊԿ զորավարժություններ չանցկացնելու մասին Հայաստանի որոշումը կազդի՞ կազմակերպության աշխատանքի վրա, հայտարարեց. «Եթե իրավիճակը հանկարծ պահանջի կովկասյան տարածաշրջանում հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների ներգրավում, կա փորձ, մշակվել են նաև որոշակի ծրագրեր, և կարծում եմ, որ ՀԱՊԿ անդամ երկրները պատրաստ կլինեն իրենց դաշնակցին թիկունք դառնալ կովկասյան տարածաշրջանում»:



Դժվար է հասկանալ, թե էլ ինչ պետք է կատարվի, որպեսզի Հայաստանը որպես նեցուկ տեսնի ՀԱՊԿ-ին: Ասերկբա է, որ Ուկրաինայում, Այսրկովկասում, Միջին Ասիայում տեղի ունեցող իրադարձությունները «Խորհրդային կայսրության փլուզում» կոչվող երկրաշարժի հետցնցումներն են, որոնք, ցավոք, շարունակական են լինելու: Այս առումով որքան շուտ կողմնորոշվի Ռուսաստանը, որքան շուտ հրաժարվի «բոլորն իմ բարեկամներն են» բանաձևից, այնքան շուտ գոնե որոշակի հստակություն կլինի տարածաշրջանային զարգացումներում: Որքան էլ Հայաստանի քաղաքական ներկապնակի արևմտամետ թևը փորձի նսեմացնել Ռուսաստանի դերակատարությունը հայ ժողովրդի ճակատագրում՝ բերելով նաև մեծապետական քաղաքական անհետևողականության օրինակներ, աքսիոմա է այն փաստը, որ Ռուսաստանի 300-ամյա ներկայությունը տարածաշրջանում հայերիս համար հիմնականում եղել է դրական՝ բոլորիս հայտնի բացառություններով. չմոռանանք: Նման գնահատական չենք կարող տալ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի 100-ամյա իրավաքաղաքական հարաբերություններին. պետական ճգնաժամը ակնառու է և ունի 100 տարվա պատմություն: Քաղաքագիտության մեջ վաղուց օգտագործվում է «ֆրենեմի» տերմինը (friend՝ բարեկամ, և enemy՝ թշնամի բառերի համադրությունն է): 21-րդ դարի աշխարհաքաղաքական գլոբալ փոփոխությունները հանգեցրել են նրան, որ նախկին կամ դե յուրե «բարեկամները» ձեռք են բերել ավելի շատ տարակարծություններ, իսկ դե ֆակտո «թշնամիները» ստեղծում են ժամանակավոր, կասկածելի միություններ: Որպես օրինակ՝ ռուս-թուրքական հարաբերությունները և ռուս-ադրբեջանական «դաշինքը»: Մասնավոր խոսակցություններում ռուս քաղաքագետները չեն թաքցնում, որ և՛ Ադրբեջանը, և՛ Թուրքիան իրավիճակային դաշնակիցներ են: Հայաստանը երբեք նման գնահատականի չի արժանանում: Մյուս կողմից՝ միջպետական հարաբերություններում ձևավորվել է, այսպես կոչված, «գործարքային կամ կորպորատիվ» էթիկա, ինչը ենթադրում է դաշնակցային պարտավորությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն: Եվրոպական քաղաքական «a la carte»-ի (հայեցողական) սկզբունքը, երբ ասենք՝ Ֆրանսիան դը Գոլի օրոք մաս կազմելով Հյուսիսատլանտյան դաշինքի քաղաքական կառույցին՝ 1967-ին դուրս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական ստորաբաժանումից, տեղափոխվում է նաև Ռուսաստանի ազդեցության գոտի:

Եվս մեկ հանգամանք. Խորհրդային Միության արտաքին քաղաքական ուղեծիրը գործում էր որպես անբեկանելի վարդապետություն (դոկտրինա): Հայերս պետք է արձանագրենք, որ ներկա Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը դոկտրինալից (վարդապետականից) վերածվում է կիրառականի,

ինչը նշանակում է, որ ռուսական արտաքին քաղաքական գերատեսչությունը ձեռք է բերել իրեն ոչ բնորոշ, իրավիճակային, եթե կուզեք՝ հրշեջային գործառույթներ: Մեր դեպքում խնդիրն այն է, որ երբ մեր դաշնակիցը նույն պայմաններով դաշինք է առաջարկում մեր հակառակորդին, դա ենթադրում է նաև ձեռքերի աշխարհաքաղաքական ազատություն: Եթե կարելի է քեզ, ինչու՞ չի կարելի ինձ: Չի կարող Թուրքիան լինել Հունաստանի դաշնակիցը և միաժամանակ՝ Կիպրոսի թշնամին: Ունենք այս պատկերը: Ռուսաստանի դիրքերի թուլացումը ձեռնտու է Հայաստանի կոսմոպոլիտ ղեկավարությանը, որի հիմնական ցանկությունը «Հայաստանը և իրենց «հաղթանակի» պտուղները վայելելն է»: Արձանագրենք, որ մի կողմից՝ ներքին քաղաքականության դաշտում «հեղափոխական նիհիլիստների» թիմը տապալեց ազգային արժեքները արժեզրկելու, ազգային դարավոր ինստիտուտները պախարակելու և ոչնչացնելու կամ առնվազն իր քիմքին հարմար վերաձևելու, ազգային ինքնատիպությունը ձևախեղելու իր առաքելությունը: Մյուս կողմից՝ ի դեմս դաշնակցային պարտավորություններից հրաժարվող, իր բազմաբևեռության մեջ մոլորված, հակասական, իրարամերժ ցանկություններ դրսևորող Ռուսաստանի՝ գտավ հարմար դաշնակցի: Չաշխատեց մեր պետականության, արժեքային համակարգի ձևախեղման ներքաղաքական գործիքակազմը, կաշխատի արտաքին քաղաքական գործիքակազմը, որի կիրառումը հնարավոր դարձավ այդ թվում նաև տարածաշրջանում օրեցօր իր դիրքերը զիջող Ռուսաստանի կրավորականության հետևանքով: Եթե Հայաստանի անկախացման ակունքներում կանգնած քաղաքական ուժերի համար Արցախի անկախությունը և որպես արդյունք՝ Հայաստանի հետ միավորումը «զարգանանք՝ առանց զիջելու» կարգախոսով առաջընթացի գրավական էր, ապա «երիտհայերի» համար և՛ Արցախը, և՛ Հայ դատը

Հայաստանի զարգացման խոչընդոտներ են: Հետևաբար հետևողականորեն սերմանվում է «ֆրենեմիի» սկզբունքը: Մենք չենք կարող չգիտակցել, որ աշխարհաքաղաքական առաջնահերթությունների դաշնակիցների և գործընկերների փոփոխությունը բերելու է ազգային ինքնագիտակցության և աշխարհընկալման փոփոխության արդեն մոտակա սերունդների համար: Հայ դատը, Մեծ եղեռնը, Արևմտյան Հայաստանի և Արցախի հայկականությունը դոգմաներ չեն, և ոչ էլ՝ Սևակի բառերով՝ «որբի գլուխ»:

Բոլորն են հասկանում, որ երկրաշարժի հետևանքով Թուրքիան աշխարհաքաղաքական հարթությունում դիրքային նկատելի կորուստներ է ունեցել և դեռ ունենալու է, դա վկայում են և՛ լավատեղյակ ռուս, և՛ իրավիճակը փայլուն պատկերացնող իրանցի փորձագետները: Իրավիճակ է փոխվել, և Թուրքիան երկար ժամանակ կարող է հայտնվել կրավորական խաղացողի վիճակում:

Ի դեպ, վերջերս հետաքրքիր հայտարարություն արեց Բելոռուսի նախագահ Լուկաշենկոն՝ այս անգամ հարվածելով Թուրքիայի մեկ այլ սրտակից դաշնակցին՝ Ղազախստանին: ՀԱՊԿ անդամ երկրներին նկատի ունենալով՝ նա ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղար Տասմագամբետովի հետ հանդիպման ժամանակ ասաց. «Եթե ինչ-որ մեկը մտածում է, որ Ուկրաինայի և Ռուսաստանի միջև հակամարտությունը մեր հակամարտությունը չէ, որ մենք ինչ-որ տեղում հանգիստ կնստենք, նման բան չի լինի: Գալիս է ժամանակը, բառացիորեն վաղը, երբ անհրաժեշտ կլինի որոշել և որոշակի դիրքորոշում որդեգրել»: Այս համատեքստում հայերս պետք է արձանագրենք, որ տպավորությունը, թե ռուսական ազդեցության թուլացման հետևանքով Արևմուտքի աջակցությամբ նրա տեղը կարող էր լրացնել Թուրքիան գոնե մի որոշ ժամանակ, կարելի է ուղարկել պատմության գիրկը: Ռուսական կողմի պասիվացումը ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ Հարավային Կովկասն ու Հայաստանը ռազմավարական նշանակություն ունեն այդ երկրի համար: Եվ պատահական չէ, որ ՀՀ-ում ՌԴ դեսպան Կոպիրկինը հայտարարեց, թե Հայաստանից և Հարավային Կովկասից հեռանալը ՌԴ ծրագրերի մեջ չեն մտնում: Վստահորեն կարելի է ասել մեկ բան. եթե ռուսներին հաջողվի իրականություն դարձնել իրենց գարնանային հարձակման նպատակները, ապա դա կտա մի շարք աշխարհաքաղաքական հարցերի պատասխանը, ինչպես նաև կհստակեցնի իրար դեմ կանգնած երկու համաշխարհային բևեռների դիմակայության գիծը: Սա արդեն բոլորի համար է վերջնական կողմնորոշման պահանջ: ■

Շրջափակված Արցախ. ի՞նչ իրավիճակ է ներքին կյանքում

Տաթևիկ Աղաջանյան
Լրագրող, Արցախ

Ադրբեջանի կողմից 2022 թ. դեկտեմբերի 12-ից իրականացվող շրջափակումը ամբողջությամբ փոխել է Արցախի ներքին կյանքի բոլոր ոլորտները: Բնակչությունը փորձում է կյանքը հարմարեցնել նոր պայմաններին, այստեղ նույնիսկ կատակում են, թե արդեն տնային տնտեսուհիները չեն որոշում, երբ են զբաղվելու կենցաղային գործերով, այլ էլեկտրաէներգիայի հովհարային անջատումների գրաֆիկը: Բնապահպանական կեղծ պատճառաբանությամբ Հայաստանի հետ կապող ճանապարհի արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակում աշխատանքները համակարգելու համար Արցախի կառավարությունում ստեղծվել է օպերատիվ շտաբ:

Շրջափակումն Արցախի ժողովրդի վրա ունեցել է հետևյալ ազդեցությունները՝ ազատ տեղաշարժի սահմանափակում, կենսական ենթակառուցվածքների աշխատանքի խափանում և հոգեբանական ահաբեկչություն:

Հունվարի 9-ից ամբողջությամբ խափանելով Հայաստանից ստացվող էլեկտրամատակարարումը, իսկ շրջափակման ողջ ընթացքում պարբերաբար կասեցնելով գազամատակարարումը՝ ադրբեջանական կողմը միտումնավոր ստեղծել է շարունակական էներգետիկ ճգնաժամ: Արցախում անցել են էներգետիկ համակարգի ճգնաժամային կառավարման՝ ամբողջ ծավալով գործարկելով տեղի հիդրոէլեկտրակայանները և հնարավորինս սահմանափակելով սպառումը: Այս ընթացքում մեծապես պակասել են Սարսանգի ջրամբարի ջրային պաշարները, քանի որ ջրամբար մուտք գործող ջրային պաշարների համեմատությամբ ավելի շատ ջուր է բաց թողնվել: Այժմ կրիտիկական վիճակ է:

Սարսանգի ջրամբարի միջոցով բավարարվում է ներքին էներգետիկ պահանջարկի միայն 60 տոկոսը, ինչի հետևանքով ՀՀ-ից Արցախ հասնող էլեկտրագծի վթարի հենց հաջորդ օրվանից «Արցախէներգո» ՓԲԸ-ն ստիպված է եղել անցնելու հովհարային անջատումների, նախ՝ օրական 2, այնուհետև՝ 4, իսկ այժմ էլ՝ 6 ժամյա անջատմամբ:

Շրջափակման առաջին շաբաթվա ընթացքում դատարկվել են մրգի և բանջարեղենի խանութները, այնուհետև՝ աստիճանաբար խանութների ցուցափեղկերը: Հատկապես զգալի է սննդամթերքի, դեղորայքի, մանկական կերերի, հիգիենայի պարագաների սղությունը:

Բնակչության նվազագույն պահանջները բավարարելու համար հունվարի 17-ից սահմանվել է կտրոնային համակարգ, որի միջոցով յուրաքանչյուր անձ կարող է մեկ ամսվա ընթացքում գնել 1 լիտր արևածաղկի ձեթ, մեկական կգ մակարոնեղեն, բրինձ, շաքարավազ և հնդկաձավար: Իսկ փետրվարի 20-ից մթերքների այս ցանկին ավելացել են միրգը, բանջարարեղենը, ձուն և լվացքի փոշին:

Կորոնավիրուսային համավարակ, պատերազմ,

այժմ էլ՝ շրջափակում: Այս աղետների հետևանքով մեծապես տուժել է նաև Արցախի կրթական համակարգը: Ինչպես նախորդ դեպքերում, շրջափակման ժամանակ ևս հնարավոր չի եղել ապահովել նորմալ դասընթաց, քանի որ 7 անգամ Ադրբեջանը արգելափակել է Արցախ մտնող գազատարը, որով ջեռուցվում է դպրոցների մեծ մասը, նախադպրոցական հաստատությունները: Փաստացի, պարբերաբար խաթարվել է 30.000 երեխայի կրթության իրավունքը: Բացի դրանից՝ արցախցի դիմորդները չեն կարողացել մասնակցել Հայաստանում բուհական ընդունելության առաջին փուլի (ձմեռային) միասնական քննություններին: Այժմ թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի կրթության ոլորտի պատասխանատուները քննությունները հանձնելու այլընտրանքային տարբերակներ են քննարկում:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարել է, որ փետրվարի 27-ից Արցախի Հանրապետությունում գործող բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում լիարժեքորեն կվերսկսվի ուսումնադաստիարակչական գործընթացը: Հաշվի առնելով գազամատակարարման մասնակի վերականգնումը՝ փետրվարի 20-ից վերսկսվել էր գազով ջեռուցվող հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերի և 1-8-րդ դասարանների, արտադպրոցական (երաժշտական և արվեստի դրպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ) ու նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասընթացը, որը կասեցված էր փետրվարի 7-ից:

Շրջափակման հենց առաջին օրերից տուժել է տնտեսության 41 ոլորտ, ավելի քան 5100 մարդ կորցրել է աշխատանքը կամ եկամտի աղբյուրը, հատկապես՝ սպասարկման ոլորտում: Մեծածախ ու

մանրածախ առևտրի ոլորտը տուժել է ապրանքի բացակայության, իսկ արտադրողները՝ հումքի ներկրման անհնարինության պատճառով: Տուժել են մանածագործական, հագուստի, խմիչքների արտադրության, միրգ-բանջարեղենի, մսի և մսամթերքի մշակման ու պահածոյացման ոլորտները, հանրային սննդի կազմակերպման ծառայությունները, ինչպես նաև՝ հյուրանոցային տնտեսությունները: Կառավարությունն աջակցության մի շարք ծրագրեր է մշակել՝ շրջափակման հետևանքով աշխատանքից զրկված ընտանիքների սոցիալական բեռը թեթևացնելու համար:

Հատկապես շրջափակման օրերին շատ է խոսվում ներքին արտադրությունը զարգացնելու մասին: Սակայն գրեթե անհնար է գարնանացան մշակաբույսերի սերմերի, պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, իսկ անասնաբուծության ոլորտում՝ հատիկային և խտացրած կերերի ներկրումը:

Հանրապետությունում խնդրահարույց է վառելիքի սակավությունը, ինչի հետևանքով կաթվածահար են լինում գյուղատնտեսության բոլոր ճյուղերի ընթացիկ աշխատանքները:

Այս պահին տեղական արտադրության բուսաբուծական մթերք վաճառքում չկա կամ շատ չնչին քանակով է, քանի որ ստեղծված իրավիճակում գյուղացիներն ամբարած բերքը պահում են սեփական կարիքները հոգալու և որպես սերմացու օգտագործելու համար:

Ինչպես հաղորդում են ԱՀ գյուղատնտեսության նախարարությունից, գարնանացանի աշխատանքները կատարվելու են պահուստային պաշարների, ինչպես նաև Արցախում գործող ագրոմարկետներում առկա սերմերի մնացորդների հաշվին: Նույն կերպ է լուծվելու նաև այդ աշխատանքների համար անհրաժեշտ վառելիքի խնդիրը:

Արտակարգ տնտեսման ռեժիմով է աշխատում առողջապահական համակարգը. դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների սահմանափակ պաշարները բավարարելու համար Արցախի պետական բուժհաստատություններում դադարեցված են պլանային բոլոր միջոցառումները՝ ներառյալ վիրահատությունները և հետազոտությունները: Ստեփանակերտի ծննդատան, մանկական հիվանդանոցի և հանրապետական բժշկական կենտրոնի դեղամիջոցների պաշարները չափազանց սուղ են, շրջափակման պայմաններում հնարավոր չէ ներմուծել անհրաժեշտ քանակությամբ բժշկական նշանակության ապրանքներ: Առկա է նաև ջեռուցման խնդիր, քանի որ բուժհիմնարկները հիմնականում ջեռուցվում են սեփական կաթսայատների միջոցով, և գազի ու էլեկտրականության պարբերական անջատումները լրացուցիչ դժվարություններ են ստեղծում հիվանդների բուժման համար:

Առողջապահության համակարգում զգացվում է մասնագետների պակաս, որը մինչև շրջափակումը լրացվում էր Հայաստանից և այլ երկրներից եկող մասնագետների հաշվին: Ավելի քան երկու ամիս է, ինչ բարեգործական ծրագրերով Արցախին մշտապես աջակցող տասնյակ բժիշկներ չեն կարողանում հասնել Արցախ և համապատասխան բուժօգնություն ցուցաբերել:

Եթե օպերատիվ շտաբի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ քիչ թե շատ կարգավորվել են տնտեսական, սոցիալական ոլորտները, ապա նույնը չի կարելի ասել քաղաքական ոլորտի մասին: Շրջափակման օրերին նշանակվել են նոր նախարարներ և ազատվել, իսկ մի շարք նախարարություններ դեռևս գլխավորում են ժամանակավոր պաշտոնակատարները:

Փետրվարի 18-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ Բաքուն պատրաստ է քննարկել Ղարաբաղի հայերի իրավունքներն ու անվտանգությունն այն պայմանով, որ բանակցողը չպետք է լինի Ռուբեն Վարդանյանը: Մի քանի օր անց՝ փետրվարի 23-ին, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը կառավարության նիստում հրապարակել է Ռուբեն Վարդանյանին պետական նախարարի պաշտոնից ազատելու մասին հրամանագիրը: Նա բարձր է գնահատել Վարդանյանի ջանքերը թե՛ Արցախի մասին միջազգային իրազեկման բարձրացման և թե՛ շրջափակման ընթացքում ներքին բազմաթիվ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Իր պաշտոնավարման ժամանակ պետական նախարարը մեծ դեր է ունեցել հատկապես շրջափակմանն առնչվող խնդիրները բարձրաձայնելու գործում՝ հարցազրույցներ տալով մի շարք հեղինակավոր լրատվամիջոցներին:

Փետրվարի 24-ին տեղեկություն տարածվեց, որ Արցախի Հանրապետությունում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը կազմակերպել է հանդիպում Արցախի և Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչների միջև: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ քննարկվել են Արցախի շրջափակման վերացմանը, բնական գազի և էլեկտրականության կայուն ու անխափան մատակարարմանը վերաբերող հարցեր: Այսօրվա դրությամբ այս ուղղությամբ տեսանելի քայլեր չեն կատարվել: Ինչ վերաբերում է ճանապարհի արգելափակման վերացմանը, ապա ՌԴ պաշտպանության նախարարությունը պարբերաբար հաղորդում է. «Խաղաղապահ զորախմբի հրամանատարությունը շարունակում է բանակցությունները հայկական և ադրբեջանական կողմերի հետ՝ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհով (Բերձորի միջանցք) տրանսպորտային միջոցների երթևեկությունը վերականգնելու վերաբերյալ»:

Արցախում ապրողներին Հայաստանի հետ կապող միակ ճանապարհի շուտափույթ բացման անհրաժեշտությունից բացի, ավելի շատ մտահոգում է այն հարցը, թե ինչ գնով է դա արվելու: Ի վերջո, երեք ամսից ավելի կենցաղային զրկանքների ու հոգեբանական ճնշման ենթարկված մարդիկ ուզում են վստահ լինել, որ դա չի արվելու ի հաշիվ իրենց իրավունքների և արժանապատիվ ապագայի:

Աղմկահարույց օրինագծերի հետնախորքը. Վրաստանի ընտրանքը

Վահե Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող

Ովքե՞ր են օրինագծի հեղինակները

2022 թ. հունիսի 28-ին իշխող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության (հետայսու՝ «Վրացական երազանք») գործադիր քարտուղար Մամուկա Մդինարաձեն հայտարարեց, որ իշխող կուսակցության երեք պատգամավորներ՝ Սոզար Սուբարին, Դմիտրի Խունդաձեն և Միխեյիլ Ղավելաշվիլին լքում են «Վրացական երազանք» կուսակցությունն ու խորհրդարանական խմբակցությունը և կշարունակեն իրենց գործունեությունը որպես անկախ պատգամավորներ: Իշխող կուսակցությունից դուրս գալու պատճառը պատգամավորները հիմնավորել են քաղաքական իրադարձությունների մասին կուլիսներից ավելի շատ տեղեկատվություն տարածելու անհրաժեշտությամբ, ինչը հնարավորություն կտար ճշգրիտ եզրահանգումներ կատարելու հասարակությանը: Պատգամավորների կարծիքով՝ դա չէին կարող անել, եթե գընտվեին «Վրացական երազանքի» հովանու ներքո, և թիմի ներսում որոշակի անհարմարություններ չստեղծելու համար անհրաժեշտ էր պատգամավորական ազատ մանդատ[1]: Մեկ ամիս անց՝ հուլիսի 28-ին, նույն պատճառաբանությամբ «Վրացական երազանքից» անջատվեց և նշված եռյակին միացավ նաև պատգամավոր Գուրամ Մաճարաշվիլին: Ձևավորված քառյակը 2022 թ. օգոստոսի 2-ին հայտարարեց «Ժողովրդի ուժ» շարժումը հիմնելու մասին: Ինչպես նշվում է հայտարարության մեջ, նրանց նպատակն էր հասարակությանը ճշմարտությամբ զինելը՝ Վրաստանի ազգային շահերը պաշտպանելու համար[2]:

Օրինագծի բովանդակությունը և ներկայացումը խորհրդարանին

Հիմնադրման օրվանից Արևմուտքին քննադատած, վերջինիս բազմաթիվ սուր հարցադրումներ ներկայացրած և Վրաստանի պետական շահերից բխող հայտարարություններով ու նախաձեռնություններով հանդես եկած նորաստեղծ շարժումը 2023 թ. փետրվարին շրջանառության մեջ դրեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի շատ կարևոր նախագիծը[3]: Հեղինակներն առաջարկում էին օտարերկրյա ազդեցության թափանցիկությունն ապահովելու նպատակով ստեղծել օտարերկրյա ազդեցության գործակալների ռեգիստր, որտեղ կգրանցվեին շահույթ չհետապնդող բոլոր իրավաբանական անձինք և լրատվամիջոցները, որոնց եկամուտների ավելի քան 20 տոկոսը ֆինանսավորվում է օտարերկրյա ուժերի կողմից[4]:

«Ժողովրդի ուժ» շարժման առաջնորդների խոսքով՝ իրենք կարծում են, որ, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներից ելնելով, հանրությանը պետք է հայտնի լինեն ոչ միայն պետության մեջ որոշումներ կայացնող քաղաքական գործիչների, այլև հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների եկամտի աղբյուրները, քանի որ նրանք ազդում են հասարակական որոշումների վրա և մասնակցում հանրային կարծիքի ձևավորմանը: Փետրվարի 14-ին նրանց տարածած հայտարարության համաձայն՝ առաջարկված օրենքով արտաքին ազդեցության թափանցիկությունն ապահովելու համար կստեղծվի արտաքին ազդեցության գործակալների ռեեստր, որտեղ կգրանցվեն բոլոր այն ոչ ձեռնարկատիրական իրավաբանական անձինք և լրատվամիջոցները, որոնց եկամուտների ավելի քան 20 տոկոսը կազմում է արտաքին ուժերի ֆինանսավորումը: Վերոնշյալ սուբյեկտներին որպես օտարերկրյա ազդեցության գործակալ գրանցելու հարցը պետք է ապահովեր Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունը, իսկ գրանցումից խուսափող անձանց համար նախատեսված էին համապատասխան վարչական տույժեր: Միևնույն ժամանակ, տույժի վճարումը սուբյեկտին չէր ազատում որպես օտարերկրյա ազդեցության գործակալ գրանցվելու պարտականությունից[5]:

Իշխող ուժը սկզբից ևեթ պաշտպանեց օրենս-

դրական նախաձեռնությունը: «Վրացական երազանք» խմբակցության նախագահ Մամուկա Մդինարաձեն փետրվարի 20-ին հայտարարեց, որ ընդհանուր սկզբունքների շուրջ կա համաձայնություն՝ հավելելով, որ օրինագիծը նախատեսում է ընդամենը տասնօրյա ժամկետում գրանցվելու պարտավորություն. *«Եթե որևէ կազմակերպության արտաքին ֆինանսավորումը գերազանցում է 20 տոկոսը, ապա այն ռեգիստրում գրանցվելու համար ունի 10 օր: Իսկ հետո մեկ տարվա ընթացքում պետք է հայտարարագիր ներկայացնի իր եկամուտների ու ծախսերի մասին: Այս թափանցիկությունից բացի այլ բան չի դիտարկում: Ուստի, անհնար է փաստարկել, թե ինչու կարելի է մերժել այս սկզբունքը»*[6]:

Մեկ օր անց՝ փետրվարի 21-ին, իշխող «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» վրացական օրենքի նախագիծը լիովին համապատասխանում է մարդու իրավունքների չափանիշներին, ի տարբերություն արտերկրում ընդունված օրենքների: Ի. Կոբախիձեն նկատի ուներ ԱՄՆ-ում և ՌԴ-ում ընդունված համանման օրենքները[7]:

Ի դեպ, օրենքի նախագծում օգտագործված տերմինաբանությունը՝ «օտար ազդեցության գործակալ», այլ ոչ՝ «օտարերկրյա գործակալ», ինչպես օրենքի օտարերկրյա նմանօրինակներում է, ևս պատահական չի ընտրվել: «Արտասահմանյան գործակալ» տերմինի օգտագործումը, հեղինակների կարծիքով, խարանման վտանգ է պարունակում[8]: Օրենքի ընդունման դեպքում՝ «օտարերկրյա ազդեցության գործակալ» ճանաչվելուց հրաժարվելու կամ ֆինանսական հայտարարագիր չներկայացնելու համար տուգանքը կկազմեր 25 հազար լարի (մոտ 9,5 հազար դոլար), իսկ հայտարարագրում առկա թերությունները շտկելուց հրաժարվելը՝ 10 հազար լարի (մոտ. 3,8 հազար դոլար), կրկնակի մերժումը կենթադրեր 20 հազար լարի (մոտ 7,6 հազար դոլար) տուգանք:

Փոթորիկ՝ մեկ բաժակ ջրում

Ինչպես և սպասելի էր՝ նախագիծն արժանացավ արտերկրից սնվող հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ու Արևմուտքի հզոր քարոզչական ազդեցության թիրախում եղած հասարակական զանգվածների հուժկու դիմադրությանը: Ամենևին ոչ պատահականորեն հայտարարվեց, որ այն, իբր, ՌԴ-ում 2012-ից գործող «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի կրկնությունն է[9]: Դրա հետևանքով այն պիտակավորվեց որպես «ռուսական օրենք» և, իբրև «սև սատանա», հրամցվեց տարիներով հակառուսական քարոզչության զոհը դարձած Վրաստանի հասարակական տարբեր շերտերին, հատկապես՝ երիտասարդությանը:

Փետրվարի 23-ին տարածվեց 260 ՀԿ-ների և լրատվամիջոցների համատեղ հայտարարությունը[10], որով վերջիններս աղաղակում էին, թե իբր, օրենքը նպատակ ունի խոչընդոտելու սոցիալապես անապահով ընտանիքներին, ֆերմերներին, հանքափորներին, ապօրինի աշխատանքից ազատվածներին, տեղահանվածներին, անօթևաններին, ազատազրկվածներին, բարձրլեռնային և այլ շրջաններում ապրող մարդկանց ու այլ քաղաքացիներին աջակցելուն[11]:

Փետրվարի 27-ին գրեթե նմանատիպ բովանդակությամբ հայտարարությամբ հանդես եկավ նաև Վրաստանում ՄԱԿ-ի գրասենյակը[12]: Բացի Վրաստանի ընդդիմադիր շրջանակներից՝ օրինագիծը սուր քննադատության արժանացավ Վրաստանի նախագահի, ԱՄՆ պետքարտուղարության[13], Եվրամիության[14], Եվրախորհրդի կողմից[15]:

Կտրուկ դեմ արտահայտվելով օրենքին՝ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, ըստ էության, չի մտել բովանդակային քննարկման դաշտ և դիրքորոշում չի հայտնել այս կամ այն հոդվածի առնչությամբ, նա հայտարարել է՝ ամեն դեպքում վետո է դնելու, քանի որ օրենքը, ըստ նրա, Վրաստանին Եվրոպայից օտարելու համար է[16]: Վրաստանի խորհրդարանի ղեկավար Շալվա Պապուաշվիլին Վրաստանի նախագահի այդ քայլը համարել է ժողովրդավարական քննարկումների վրա տաբու դնելու փորձ և վտանգավոր ազդանշան[17]: Խորհրդարանի խոսնակն իր հակադարձումներում ուշագրավ վիճակագրություն է ներկայացրել: Պարզվում է՝ Վրաստանում բոլոր կուսակցությունների բյուջեները միասին վերցրած ավելի փոքր է, քան միայն չորս ՀԿ-ներինը: Օրինակ՝ 2022 թվականին կուսակցությունները պետբյուջեից ստացել են 12 մլն լարի, և ևս 750 հազար լարի՝ որպես նվիրատվություն[18]:

Քայլ, որն ամեն ինչ դուրս բերեց ջրի երես

Վրաստանի նախագահի, ընդդիմադիր շրջանակների, Արևմուտքից սնվող կազմակերպությունների, Արևմտյան կառույցների ու դրանց կողմից Վրաս-

տանում թիրախավորված հասարակական շրջանակների (հատկապես՝ երիտասարդության) կողմից օրինագծի խեղաթյուրման, այն իբրև ռուսական օրենք որակելու և դրա ընդունմանը դեմ դուրս գալու պայմաններում օրինագծի հեղինակները կատարեցին շախմատային հաջողված քայլ՝ հրապարակի վրա դնելով նշված ոլորտը կարգավորող երկրորդ օրինագիծը: Փետրվարի 27-ին Վրաստանի խորհրդարանի կողմից գրանցված ***«Օտարերկրյա գործակալների գրանցման մասին»*** նոր և այլընտրանքային օրինագիծն ամերիկյան համանման օրենքի պատճենն էր: *«Մենք գրանցել ենք սա [«Օտարերկրյա գործակալների գրանցման ակտ» (Foreign Agent's Registration Act (FARA))] ամերիկյան օրենքի պատճենը – աղբյուրի խմբ.), որպեսզի հանրությունը հնարավորություն ունենա տեսողականորեն համեմատել այս երկու օրինագծերը հանձնաժողովի լսումների ժամանակ և տեսնել, թե որքան լավ է մեր կողմից ներկայացված սկզբնական տարբերակը»*, - հայտարարել է պատգամավոր, «Ժողովրդի ուժի» անդամ Էկա Սեպաշվիլին[19]:

Իրապես, օրինագծի տոյն՝ ամերիկյան տարբերակն ուներ անհամեմատ խիստ պահանջներ: Օրինակ, այն իրավաբանական անձանց հետ մեկտեղ օտարերկրյա գործակալ է համարում նաև ֆիզիկական անձանց կամ ֆիզիկական անձանց ցանկացած այլ միավորում: «Սպուտնիկ Վրաստան» լրատվամիջոցի ներկայացրած աղյուսակում երկու օրինագծերի միջև առկա են մի քանի հիմնական տարբերություններ, որոնք ի ցույց են դնում օրինագծի հեղինակների (այդ թվում՝ Վրաստանի իշխանությունների) փաստարկված, արդարացի մոտեցումներն ու ընդդիմախոսների տարածած ողջ կեղծիքը .

Վրաստանի խորհրդարանի նիստը

Իշխող *«Վրացական երազանք»* կուսակցությունը հայտարարեց, որ կաջակցի օտարերկրյա գործակալների մասին օրենքի նախագծի երկու տարբերակներին էլ[21]: Իսկ քննադատները հետայդու հայտարարեցին (ավելի ճիշտ կլինի ասել՝ Արևմուտքը որոշեց), որ Վրաստանին նման օրենքներ ընդհանրապես պետք չեն, և այս ամենը միայն կվտանգի երկրի եվրաինտեգրմանը: Իսկ թե ինչու՞ կամ ինչպե՞ս կվտանգեր՝ չկար այդ մասին որևէ պատճառ կամ հոդաբաշխ հիմնավորում: Այդպիսի հիմնազուրկ տեսակետ-պահանջի ցայտուն օրինակ է Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելի Դեգնանի հայտարարությունը, ըստ որի՝ Վրաստանին պետք չէ «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի ոչ մի տարբերակ, որն առաջարկել է «Ժողովրդի ուժը». *«Ակնհայտ է, որ Վրաստանին պետք չէ այդ օրենքը, նույնիսկ այս տարբերակը (ամերիկյան FARA-ի նմանօրինակը)»*,- լրագրողներին ասել է դեսպանը[22]:

Հետաքրքիր է, որ «Ժողովրդի ուժ» շարժման առաջնորդներից և նշված օրինագծերի հեղինակներից է «Ազատություն» ռադիոկայանի նախկին լրագրող, «Վարդերի հեղափոխության» ակտիվ մասնակից, Սահակաշվիլու իշխանության տարիներին որպես Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան պաշտոնավարած Սոզար Սուբարին, որը հենց այդ տարիներից էլ աչքի է ընկել իբրև լուսավոր, առաջադեմ, Վրաստանում ապրող քարթվելական և ոչ քարթվելական ժողովուրդների ազգային, լեզվական ու կրոնական ավանդույթները հարգող անձնավորություն. հենց այդ պատճառով էլ հաճախ հակադրվել է Սահակաշվիլու բռնատիրական ու ծայրահեղ արևմտաթուրքամետ իշխանությանը:

Իրականում՝ Արևմուտքը լավ է հասկացել, որ Վրաստանը, շնորհիվ ներկայիս ղեկավարության հավասարակշռված և պետականամետ քաղաքականության, դանդաղ, բայց հաստատուն կերպով վերականգնում է երկրի ինքնուրույնությունն ու դադարում է լինել արևմտաթուրքական վասալ, ինչ որ էր Սահակաշվիլու օրոք: Հենց այդ հանգամանքն է, որ լրջորեն սկսել է անհանգստացնել արևմտյան ճամբարին:

Առաջին ընթերցմամբ օրինագծի ընդունում, Արևմուտքի ողջ զինանոցի մոբիլիզացիա

Հրապարակի վրա դրվեց և խորհրդարանում քննարկման ներկայացվեց երկու նախագիծ՝ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» և «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին»: Հեղինակները՝ «Ժողովրդի ուժ» շարժումը, ինչպես նաև իշխող «Վրացական երազանքը», բազմիցս հայտարարել են, որ երկրորդ տարբերակը՝ ամերիկյան օրենքի (FARA) պատճենը, ի տարբերություն մարդու իրավունքների չափանիշներին լիովին համապատասխանող «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» առաջին օրինագծի, չափա-

«Ժողովրդի ուժ» շարժման հիմնադիրները

զանց խիստ է, և Վրաստանում նման օրենքի ընդունումը սխալ կլինի:

Օրենքի քննարկումը խորհրդարանի հանձնաժողովներում ուղեկցվեց ընդդիմադիր խմբակցությունների («Եվրոպական Վրաստան», «Ռազմավարություն՝ Աղմաշենեբելի», «Հանրապետական», «Միացյալ ազգային շարժում» և այլ կուսակցություններ ու ուժեր) պատգամավորների հետ բուռն առճակատումներով և բողոքի զանգվածային գործողություններով (դրսում ակտիվ էին Վրաստանում կանեփի օրինականացման համար պայքարող «Գիրչի-Ավելի շատ ազատություն» կուսակցության անդամները՝ ղեկավար Ջուրաբ Ջափարիձեի գլխավորությամբ և այլք)[23]: Պատկան հանձնաժողովներում դրական եզրակացություն ստանալուց հետո օրինագծերը մարտի 7-ին մտցվեցին խորհրդարանի լիագումար նիստ: Քննարկումն առավել շիկացավ «Ռազմավարություն Աղմաշենեբելի» ընդդիմադիր կուսակցության պատգամավոր Գեորգի Վաշաձեի ելույթի ժամանակ, որին հաջորդեց քաշքշուկը[24]: Մեկնաբանելով ստեղծված ճգնաժամը, փաստելով, որ օրինագծերից մեկը թարգմանվել է ամերիկյան օրենքից, որը 1930-ական թթ. գործում է ԱՄՆ-ում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշել է. «Չեմ կարծում, որ որևէ մեկը ցանկություն ունի դատապարտելու, թե ինչու է Ամերիկայում գործում նման օրենք: Համանման օրենք գործում է նաև այլ երկրներում: Սա յուրաքանչյուր երկրի ինքնիշխան որոշումն է... Մենք, մեր իշխանություններն ամեն ինչ անում ենք մեր երկրի ինքնիշխանությունն ամրապնդելու համար: Մեր գլխավոր խնդիրը մեր երկրի անկախությունն է»[25]:

Մարտի 7-ի ուշ երեկոյան, բազմահազար ցուցարարների վանկարկումների ներքո Վրաստանի խորհրդարանը 76 կողմ, 13 դեմ ձայների հարաբերակցությամբ առաջին ընթերցմամբ ընդունեց նախագծերից վրացական տարբերակը՝ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագիծը: Հայտարարվեց, որ մոտ ժամանակներս խորհրդարանը կքննարկի նաև օրենքի ամերիկյան տարբերակը: Իշխող «Վրացական երազանք» խմբակցության նախագահ Մամուկա Մդինարաձեն քվեարկությունից հետո հայտարարեց, որ մոտ ապագայում օրինագծերի քննարկումը կդադարեցվի, քանի որ հեղինակները կսպասեն Վենետիկի հանձնաժողովի եզրակացությանը: Ըստ Մ. Մդինարաձեի՝ խորհրդարանը հավանաբար դրանց քննարկմանը պիտի վերադառնար այս տարվա հունիսին[26]:

Օրինագծի առաջին ընթերցմամբ ընդունմանը հաջորդեցին ինչպես զանգվածային անկարգությունները երկրի մայրաքաղաքում, այնպես էլ արևմտյան ճամբարի երկրների ու կազմակերպությունների ներկայացուցիչների հուժկու քննադատությունները: Վերջիններս այն աստիճան սուր էին և բազմաթիվ, որ, կարելի է ասել, Վրաստանի իշխանություններն ուղիղ կպել էին Արևմուտքի բաց նյարդին:

Մարտի 7-ի երեկոյան և լույս 8-ի գիշերը խորհրդարանի շենքի մոտ տեղի ունեցած զանգվածային ցույցը վերածվեց ոստիկանների հետ առճակատման: Ցուցարարները Մոլոտովի կոկտեյլներ նետեցին հատուկ ջոկատայինների վրա: Ոստիկանությունը պատասխանեց արցունքաբեր գազով և ջրցան մեքենաներով[27]: ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Նեդ Փրայսն արագորեն իրենց պաշտպանության տակ վերցրեց ցուցարարներին՝ հայտարարելով, որ Վրաստանում բողոքի ցույցերը ճնշելու համար պատասխանատուները կարող են ենթարկվել ԱՄՆ պատժամիջոցների, իսկ Վրաստանում «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունումը կարող է վտանգել Վաշինգտոնի և Թբիլիսիի գործընկերությունը[28]: Կրկին դատապարտելով օրինագծի ընդունումը՝ մարտի 7-ին Նյու Յորքից ցուցարարներին պաշտպանող հայտարարությամբ հանդես եկավ նաև Վրաստանի նախագահ Ս. Ջուրաբիշվիլին: Նա կրկին վերահաստատեց, որ օրենքի վրա վետո է դնելու[29]: Օրինագծի ընդունումը դատապարտեց ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը՝ հայտարարելով, որ նախագիծը հակասում է ԵՄ-ին անդամակցելու երկրի նպատակին[30]: Նախագիծը խստորեն անհանգստացրել էր նաև Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելին, ով հայտարարել էր, որ անհանգստացած է Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններով, իսկ օրենքի ընդունումը համահունչ չէ ԵՄ անդամակցության ձգտումներին[31], իսկ Վրաստանում ԱՄՆ դեսպանատունը մարտի 7-ը հայտարարել է «սև օր» Վրաստանի ժողովրդավարության համար[32]: «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Եվրամիության դիրքորոշումն էր արտահայտված Վրաստանում Գերմանիայի դեսպան Պիտեր Ֆիշերի հայ-

տարարության մեջ, ըստ որի՝ դրա ընդունումն անհամատեղելի է դեպի Եվրամիություն Վրաստանի ձգտումների և Եվրամիության նորմերի ու արժեքների հետ[33]: Արևմուտքի համար պահն այնքան էր կարևոր, որ մարտի 7-ին Թբիլիսի է ժամանել ԱՄՆ պետքարտուղարի օգնական Թոդ Ռոբինսոնը՝ հայտարարելով, թե իբր այս օրենքը բխում է ոչ թե Վրաստանի, այլ Ռուսաստանի շահերից[34]: Ի դեպ, դիպուկ է արտահայտվել Վրաստանի իշխող ուժի նախագահ Իրակլի Կոբախիձեն՝ մարտի 8-ի առավոտյան հատուկ հայտարարությամբ անդրադառնալով ստեղծված իրավիճակին. «Այս ամենը ոչ մի ընդհանուր բան չունի Եվրոպայի և եվրոպական արժեքների հետ: Եթե մենք չպաշտպանենք մեր պետությունը լրտեսական ծրագրերից, մենք ոչ միայն չենք անդամակցի ԵՄ-ին, այլև կկորցնենք մեր ինքնիշխանությունը»[35]: Ուշագրավ է, որ Ի. Կոբախիձեն իրերը կոչել է իրենց անուններով, այն է՝ 2003 թ. տեղի է ունեցել ոչ թե «Վարդերի հեղափոխություն», այլ *«Լրտեսների հեղափոխություն». «2003 թ. Վրաստանում տեղի ունեցավ լրտեսների հեղափոխություն, որը Վրաստան բերեց 9 հակաեվրոպական տարիներ՝ մարդկանց խոշտանգումներ, բիզնեսի ոեկետ, լրատվամիջոցների առևանգում և վրացական տարածքների 20 տոկոսի կորուստ: Հետո լրտեսները կարողացան շահարկել հանրության անկեղծ զգացմունքները և ստիպեցին նրանց սկզբունքորեն սխալվել: Այսօր վրացական հասարակությունը բավականաչափ հասունացել է, որպեսզի թույլ չտա նույն լրտեսների կողմից նոր հեղափոխություն և վերադարձ դեպի անցյալ»*[36]:

Մարտի 8-ին, նույն օրը ժամը 15:00-ին վերսկսված և շուրջ 16 ժամ շարունակված հանրահավաքի և Արևմուտքի ուժգին դիմադրության պայմաններում Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին նամակ հղեց Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով կարծիք պատրաստել Վրաստանի խորհրդարան ներկայացված երկու օրինագծերի վերաբերյալ: Դրան ի պատասխան՝ հանրահավաքն առաջնորդող ընդդիմության ներկայացուցիչները («Ռազմավարություն Աղմաշենեբելի» կուսակցության առաջնորդ Գիորգի Վաշաձե և այլք) վերջնագրի տեսքով երկու պահանջ ներկայացրին իշխանություններին՝ հետ վերցնել օրինագիծը խորհրդարանից և ազատ արձակել ձերբակալվածներին[37]: Չստանալով պատասխան՝ ցուցարարներն առավել սրեցին իրադրությունը՝ զանգվածային անկարգություններով, պետական գույքը վնասելով, ոստիկանական ու այլ մեքենաներ շրջելով և ջարդուփշուր անելով, կանգառների տաղավարները կոտրելով և ոստիկանների հետ ուղիղ առճակատման պայմաններում գրոհելով խորհրդարանի շենքի վրա: Ցուցարարները որոշել էին շրջափակելով շենքը՝ թույլ չտալ, որպեսզի խորհրդարանի նիստը մարտի 9-ին տեղի ունենա[38]: Մարտի 8-ի լույս 9-ի գիշերը տարածվեց նաև Վրաստանի Պատրիարքարանի հայտարարությունը: Հետաքրքրական է, որ պետության և հասարակության որոշումների վրա խոշոր ազդեցություն ունեցող այդ ինստիտուտն այս անգամ որևէ հստակ դիրքորոշում չէր հայտնել օրինագծերի վերաբերյալ, չէր պաշտպանել կամ դատապարտել կողմերից որևէ մեկին՝ միայն հայտնելով, որ եկեղեցին աղոթում է խաղաղության համար, և որ բևեռացված արմատական հայտարարությունները խաղաղությունը խախտելու փորձեր են[39]:

Թեժ գործընթացի ավարտական փուլը

Մարտի 9-ի առավոտյան տարածվեց «Վրացական երազանքի», «Ժողովրդի ուժի» և խորհրդարանական մեծամասնության համատեղ հայտարարությունը, ըստ որի՝ առաջին ընթերցմամբ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագիծը առանց վերապահումների հետ էր կանչվում: *«Մենք տեսնում ենք, որ ընդունված օրենքի նախագիծը հասարակության մեջ կարծիքների տարաձայնություններ է առաջացրել: Ստի մեքենան կարողացավ օրինագիծը ներկայացնել բացասական լույսի ներքո և մոլորության մեջ գցել հանրության որոշակի հատվածին: Օրենքի նախագծին փակցվել է «ռուսական օրենք»* կեղծ պիտակը, որի առաջին ընթերցմամբ ընդունումը հանրության մի մասի աչքում ներկայացվել է որպես շեղում եվրոպական կուրսից: Բացի այդ, արմատական ուժերը կարողացել են երիտասարդության մի մասին ներքաշել անօրինական գործողությունների մեջ»,- նշված էր հայտարարության մեջ[40]:

Արևմուտքը չնայած ողջունեց[41] այդ քայլը, սակայն Վրաստանի իշխանությունների հաշվարկված գործողությունների և շախմատային վերջին հաջողված քայլի՝ օրինագիծը հանկարծակի հետ կանչելու արդյունքում բոլորի համար այլևս պարզորոշ էր մեկ բան. Արևմուտքի իրական մտահոգությունը ոչ թե այդ օրինագիծն էր, այլ Վրաստանի դանդաղ, բայց հաստատուն կերպով դուրս գալը վասալական կարգավիճակից և պետական ինքնուրույնության վերականգնումը: Վրաստանի իշխանությունների հետկանչի այս քայլով երկրում լայնածավալ իշխանափոխության պատրաստվող արևմտյան գործակալական ցանցը հանկարծակիի եկավ. ձեռքից բաց թողնվեց այդ «հրաշալի» առիթը, և, չնայած անխնա փորձերին, դրանից հետո դժվար էր զանգվածային անկարգություններ հրահրելու և երկիրը նոր ցնցումների տանելու պատճառներ գտնել: Իսկ որ այդ շրջանակները հեղաշրջման էին պատրաստվել և դրա համար կանաչ լույս ստացել՝ փաստեցին այդ օրերին «Ռուսթավի 2» հեռուստաընկերության տարածած երկու գաղտնազերծված տեսանյութերը, որոնցում ընդդիմադիր առաջնորդները, այդ թվում՝ Մ. Սահակաշվիլու օրերի բարձր պաշտոնատար անձինք, խոսում են հեղաշրջման և դրա համար «կանաչ լույս» ստանալու մասին[42]: Ավելին՝ դատելով օրինագծի հետկանչման մասին հայտարարության բովանդակության տողատակերից[43]՝ Վրաստանի իշ-

խանությունների այս նահանջը տակտիկական էր. վերջիններս լավագույնս բացահայտեցին գործակալական ցանցի առավել վտանգավոր օջախները: Ի դեպ, բառացի այդ մասին էր ակնարկում իշխող ուժի ղեկավար Իրակլի Կոբախիձեն, ով մարտի 10-ին խոսեց հետ կանչված օրինագծերի երեք կարևոր ուղերձների ու ձեռքբերումների մասին[44]:

Արևմուտքը և այնտեղից ֆինանսավորվող – ուղղորդվող շրջանակները, բնականաբար, օրինագծի հետկանչումից հետո փնտրեցին բազմաթիվ պատճառներ ու պատրվակներ, որպեսզի հետցնցումների, նոր հանրահավաքների նախաձեռնման միջոցով վերստին թեժացնեն իրադրությունը երկրում և հասնեն հեղաշրջման[45]: Այդուհանդերձ, իշխող քաղաքական ուժի ղեկավար Իրակլի Կոբախիձեն մարտի 9-ին հայտարարեց, որ քաղաքական որոշումն արդեն կայացված է, մնացել են միայն տեխնիկական խնդիրները[46], ՆԳ նախարարությունը հայտարարեց, որ ձերբակալված 133 անձինք ազատ են արձակվել[47], նույն օրը խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին դիմեց Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով այլևս չքննարկել օրենքների նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացություն պատրաստելու դիմումը[48], իսկ մարտի 10-ին կայացած Վրաստանի խորհրդարանի լիագումար նիստում «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագիծը պաշտոնապես և օրենքով սահմանված կարգով հետ կանչվեց[49]:

Գործընթացի հնարավոր ազդեցությունները տարածաշրջանի, այդ թվում՝ ՀՀ-Արցախի վրա

Ակնհայտ է՝ Վրաստանի իշխանություններն այլևս «սառը պատերազմի» մեջ են արևմտյան ճամբարի հետ, և կողմերն այս գործընթացի մեջ փորձարկեցին ուժերը: Արևմուտքը փորձարկեց իր աճեցրած գործակալական ցանցի ներուժը՝ ձգտելով հասկանալ, թե հնարավո՞ր է այս փուլում Վրաստանում ստեղծել նոր ճակատ, հեռացնել իրեն այլևս չենթարկվող ու Վրաստանի պետական շահով առաջնորդվող իշխանություններին՝ վերականգնելով վասալ-սյուզերեն նախկին («սահակաշվիլիական») իրավիճակը: Վրաստանի իշխանություններն էլ փորձեցին հասկանալ՝ ինչպիսի՞ դիմադրություն կառաջանա իրենց բոլոր այն նախաձեռնությունների դեպքում, որոնք միտված են պետական ինքնուրույնության վերականգնմանը, Արևմուտքի և ընդդիմության՝ ՌԴ-ի դեմ երկրորդ ճակատ բացելու ծրագրի չեզոքացմանը և Արևմուտք-ՌԴ բալանսավորված քաղաքական գծի որդեգրմանը:

Իսկ որ Վրաստանի՝ Արևմուտքի խամաճիկ ընդդիմությունն իրականում ոչ թե պայքարել էր օրինագծերի ընդունման դեմ, այլ այդ պայքարի շղարշի տակ ծրագրել էր զավթել իշխանությունն ու ՌԴ-ի դեմ բացել երկրորդ ճակատը՝ գրեթե բացեիբաց խոստովանել է Մ. Սահակաշվիլու աջ ձեռքը՝ Վրաստանի ՆԳ նախկին նախարար ու նախկին վարչապետ՝ ոչ անհայտ Վանո Մերաբիշվիլին: Վերջինս, «Ուկրինֆորմ» մեդիա կենտրոնում, հանդես գալով Մ. Սահակաշվիլիին նվիրված «SAVE MISHA» («Փրկե՛ք Միշային») հաղորդաշարում, հայտարարել է, որ իրենց հիմնական նպատակը Վրաստանում իշխանությունը փոխելն է արևմտամետ, ուկրաինամետ կառավարությամբ, որպեսզի Ուկրաինան միայնակ չմնա[50]՝ առանց այլևայլության հավելելով.



Հանրահավաք Վրաստանի խորհրդարանի շենքի առջև

«Ես ամաչում եմ, որ Վրաստանը չի մասնակցում և Ուկրաինայի կողքին չէ այս պատերազմում»[51]: Բնականաբար՝ այս անկեղծ և ընդդիմության իրական մտադրությունները ջրի երես հանող հայտարարությունն արժանացավ Վրաստանի իշխանությունների բուռն արձագանքին: Բացի այդ, մարտի 10-ին ուշագրավ հայտարարություն արեց նաև Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ, իշխող «Վրացական երազանք» կուսակցության առաջնորդներից Գիա Վոլսկին՝ հայտնելով, որ Մ. Սահակաշվիլու՝ Ուկրաինայում մարտնչած կողմնակիցները ժամանել են Վրաստան, որոնց նպատակն է երիտասարդությանը մղել պետական հեղաշրջման: Ըստ նրա, խոսքը վերաբերում է քաղաքական թիմին, որը ներկայումս գլխավորում է Լևան Խաբեիշվիլին (ամենամեծ ընդդիմադիր կուսակցության՝ Մ. Սահակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցության նախագահը)[52]:

Արձագանքելով ստեղծված իրադրությունում հնչող նման հայտարարություններին և գործընթացներին՝ վարչապետ Ի. Ղարիբաշվիլին մեղադրել է Եվրախորհրդարանի պատգամավորներին և «կործանարար ընդդիմությանը» երկրում «երկրորդ ճակատ» բացելու փորձի մեջ և նշել, որ նրանց նպատակը «իշխանությունն ուժով տապալելն» է, իսկ հետո երկիրը ներքաշելը պատերազմի մեջ. «Մեզ հարցնում են, թե ինչու չենք մտնում պատերազմի մեջ: Պատկերացնենք, որ այսօր Վրաստանում պատերազմ է, բոլորս էլ գիտենք, թե այստեղ ինչ է լինելու՝ մեր գեղեցիկ երկիրը վերածվելու է պոլիգոնի»[54]: Իշխանափոխություն իրականացնելու Վ. Մերաբիշվիլու փորձերի և 2-րդ ճակատ բացելու մասին հայտարարությունը դատապարտեցին և այն ամոթալի որակեցին նաև Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն[55], խորհրդարանական մեծամասնության պատգամավոր, «Վրացական երազանքի» առաջնորդներից Իրակլի Կադագիշվիլին[56] և այլք:

Պարզորոշ է՝ Վրաստանի զարգացումները ոչ միայն կարևոր, այլև ճակատագրական նշանակություն ունեն ՀՀ-ի համար, և, եթե Արևմուտքին հաջողվի շարունակական դարձնել ու խորացնել ճգնաժամը երկրում, ավելին՝ հասնել խամաճիկ իշխանության ձևավորմանը, ապա տարբերակներից ամենահավանականը, որը կարող է տեղի ունենալ, պարփակված է հետևյալ կետերում.

- Վրաստանի միջոցով կբացվի ՌԴ-ի դեմ 2-րդ ճակատը, երկիրը լայնորեն կներքաշվի ռազմական գործողությունների մեջ,
- Ռուսաստանը Վրաստանի և ՀՀ-ի հետ կապող միակ ցամաքային երթուղին՝ Ռազմավիրական ճանապարհը կփակվի, երկիրն ամբողջությամբ կմեկուսացվի ՌԴ-ից՝ 2006-2009 թթ. օրինակով (միջանկյալ նշենք՝ Արևմուտքի քաղվերլուծաբանները վաղուց խորը անհանգստություն են հայտնում առ այն, որ Վրաստան-ՌԴ կարգավորվող տնտեսական հարաբերությունները բերելու են նաև քաղաքական հարաբերությունների կարգավորմանն ու բալանսի վերականգնմանը),
- ՀՀ-ի համար կենսական կարևորություն ունեցող և ռազմավարական դաշնակից ՌԴ-ի հետ միակ ցամաքային կապի խզումը, տնտեսական շրջափակման իմաստով արդեն թերակղզու վերածված (առայժմ կմնա միայն Իրանի հետ ցամաքային կապը) ՀՀ-ն ուղղակի նվեր կլինի ՀՀ-ում գործող նույնատիպ (գործակալական դաշտի վրա ձևավորված և խամաճիկ) իշխանությունների համար, որոնք անմիջապես ձեռնամուխ կլինեն իրենց վաղեմի երազանքի իրագործմանը՝ ցանկացած զոհաբերությամբ (Արցախի լիակատար հանձնում, Սյունիքի՝ միջանցքի, կամ ամբողջական հանձնում, «սովետական անկլավների», միջպետական ճանապարհների, չի բացառվում նաև՝ առանձին շրջանների հանձնում Ադրբեջանին) բացել Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հաղորդուղիները,
- կսկսվի ՀՀ-ում և Արցախում ռուսական ռազմական ներկայության «ավելորդ լինելու» մասին լայն արշավ,
- Արևմուտքն ամբողջովին իր ձեռքը կվերցնի տարածաշրջանի համակարգումը, որտեղ իր առանցքային դերը կստանձնի Թուրքիան՝ ձգտելով ամեն կերպ դուրս գալ «ուղեծրից» և կառուցել Մեծ Թուրանի հիմքերը,
- կսկսվի Իրանի լայնածավալ մեկուսացումն ու կազմաքանդումը,
- զուգահեռ կընթանան Չինաստանին զսպող գործողությունները (հիշենք, որ Վրաստանի ներկայիս իշխանությունները լայն նախագծեր են իրագործում Չինաստանի հետ՝ փորձելով Աջարիայից և այլ վայրերից դուրս մղել արևմտաթուրքական կապիտալը):

Եզրակացություն. Վրաստանի իշխանությունների՝ այս փուլում մղած պայքարն ուղղակիորեն բխում է ՀՀ-Արցախի շահերից և, կարող ենք արդեն առանց վարանելու ասել, որ այդ պայքարի ելքը նաև որոշելու է հայոց անկախ պետականության և Այսրկովկասում հայոց քաղաքակրթական գոյության ապագան: ■



Բախումներ Թբիլիսիում

Հղումներ

1. სუბარი, ყაველაშვილი და ხუნდაძე „ქართულ ოცნებას“ ტოვებენ, https://civil.ge/ka/archives/498580 (մուտք՝ 20.02.2023):
2. სოზარ სუბარი, დიმიტრი ხუნდაძე, მიხეილ ყაველაშვილი და გურამ მაჭარაშვილი საზოგადოებრივ მოძრაობა „ხალხის ძალას“ აფუძნებენ და არ გამორიცხავენ, რომ პოლიტიკურ პარტიადაც გარდაიქმნას, https://1tv.ge/news/sozar-subari-dimitri-khundadze-mikheil-yavelashvili-da-guram-macharashvili-sazogadoebriv-modzraoba-khalkhis-dzalas-afudzneben-da-ar-gamorickhaven-rom-politikur-partiadac-gardaiqmn/ (մուտք՝ 20.02.2023): Հայտարարության մեջ նշված է, որ պատգամավորների՝ իշխող կուսակցությունից դուրս գալու հիմնական պատճառը պատերազմն (ռուս – ուկրաինական – Վ.Ս.) Վրաստանի ներգրավվելու սպառնալիքն էր, սաղրանքի փորձը, որը կապված է նույն արտաքին ուժերի հետ: «Մենք կարծում ենք, որ պատերազմի վտանգը դեռևս իրական է, և դրա կանխման երաշխիքներ կարելի է ստեղծել միայն հանրությանը պատշաճ իրազեկելու միջոցով: Տեղեկատվության պակասի պայմաններում հասարակությունը կարող է խոցելի մնալ Վրաստանում երկրի խաղաղությանն ու անկախությանը սպառնացող վտանգների նկատմամբ: …Մեր հիմնական նպատակներից մեկը ոչ թե արևմտյան ինստիտուտների վրա հարձակումն է, այլ ավելի շուտ Վրաստանում արևմտյան կառույցների հեղինակությունը պաշտպանելն ու փրկելը: Մեր շարժումը կանի ամեն ինչ վերականգնելու վրացական հասարակության վստահությունը արևմտյան ինստիտուտների նկատմամբ»,- նշել էին պատգամավորները հայտարարության մեջ՝ հավելելով՝ եթե տեսնեն, որ իշխանությունն այլևս չի կարող դիմակայել պատերազմի հետ կապված ճնշումներին, ապա չեն բացառի, որ հասարակական շարժումը կվերածեն քաղաքական կուսակցության:
3. 2023 թ. փետրվարի 20-ին «Ժողովրդի ուժ» շարժման նախաձեռնած «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագիծը ներառվել էր խորհրդարանի բյուրոյի նիստի օրակարգում և ներկայացվել իրավական հանձնաժողովի քննարկմանը: Բյուրոյի նիստն ուղեկցվել էր որոշ զանգվածային լրատվամիջոցների՝ խորհրդարանում նախաձեռնված բողոքի գործողությամբ: Նրանց կարծիքով՝ «ռուսական» օրենքի ընդունումը խոչընդոտելու էր իրենց գործունեությանը:
4. В парламенте Грузии инициировали закон об иноагентах, https://sputnik-georgia.ru/20230214/v-parlamente-gruzii-initsiirovali-zakon-ob-inoagentakh-274859061.html (մուտք՝ 20.02.2023):
5. შეიქმნება უცხოური გავლენის აგენტების რეესტრი - "ხალხის ძალა" კანონპროექტს პარლამენტში აინიცირებს, https://mtavari.tv/news/112823-sheikmneba-utskhouri-gavlenis-agentebis-reestri (մուտք՝ 20.02.2023):
6. "ქართული ოცნების" სახელით შემიძლია ვთქვა, რომ პრინციპების დონეზე შევთანხმდით და მხარს დავუჭერთ "ხალხის ძალის" მიერ წარდგენილ კანონპროექტს - მამუკა მდინარაძე, https://rustavi2.ge/ka/news/249362, (մուտք՝ 25.02.2023):
7. Грузинский законопроект об "иноагентах" лучше зарубежных аналогов – Кобахидзе, https://sputnik-georgia.ru/20230221/gruzinskiy-zakonoproekt-ob-inoagentakh-luchshe-zarubezhnykh-analogov---kobakhidze-275107192.html (մուտք՝ 25.02.2023):
8. Грузинский законопроект об "иноагентах" - все самое главное, https://sputnik-georgia.ru/20230221/gruzinskoy-zakonoproekt-ob-inoagentakh---vse-samoe-glavnoe-275109797.html (մուտք՝ 25.02.2023): Կարևոր մեկ հանգամանք՝ օրինագիծը կոչված էր ապահովելու օտարերկրյա ազդեցության գործակալների գրանցումը և կարգավորելու նրանց գործունեության թափանցիկության հետ կապված խնդիրները, բայց ոչ սահմանափակելու նրանց գործունեությունը: Օրինագծով օտարերկրյա ազդեցության գործակալներ են համարվում շահույթ չհետապնդող իրավաբանական անձինք, որոնք չեն հիմնադրվել վարչական մարմնի կողմից և չեն հանդիսանում մարզական ֆեդերացիա կամ արյան հարցերով զբաղվող կազմակերպություն, հեռարձակողները, տպագիր լրատվամիջոցների սեփականատեր իրավաբանական անձինք, իրավաբանական անձինք, ովքեր տիրապետում կամ օգտագործում են վրացական տիրույթ և/կամ հոսթինգ՝ համացանցում վրացերենով զանգվածային տեղեկատվության տարածման համար: Վերոնշյալները համարվում են օտարերկրյա ազդեցության գործակալ, եթե նրանց տարեկան եկամտի 20%-ի աղբյուրը «օտար ուժ» է: Օրինագծով սահմանված էր նաև «օտար ուժ» հասկացությունը:
9. Փաստենք, որ Վրաստանում առաջարկվող օրինագիծն արմատապես տարբերվում է ՌԴ-ում գործող օրենքից. ՌԴ-ում այն հավասարապես տարածվում է թե՛ լրատվամիջոցների, թե՛ ֆիզիկական անձանց վրա, նախատեսում է մինչև 2500 ռուբլի տուգանք ֆիզիկական անձանց համար և մինչև 500.000 ռուբլի՝ կազմակերպությունների համար:
10. რუსული კანონი არ არის საქართველოს არჩევანი - არასამთავრობო და მედიაორგანიზაციების ერთობლივი განცხადება, https://www.radioatinati.ge/regioni/article/81615-rusuli-kanoni-ar-aris-saqarthvelos-archevani-arasamthavrobo-da-mediaorganizaciebis-erthoblivi-ganckhadeba.html (մուտք՝ 25.02.2023):
11. Արձագանքելով ՀԿ-ների հայտարարությանը՝ Վրաստանի փոխվարչապետ Թեա Ծուլուկիանին կոչ է արել ոչ կառավարական հատվածին համագործակցել արտաքին ազդեցության թափանցիկության մասին օրենքի նախագծի քննարկման հարցում: «Լավ կլիներ, որ ոչ կառավարական հատվածը համագործակցեր և համաձայնվեր, որ թափանցիկությունը ճանապարհ է, այդ թվում՝ իրենց վերականգնման ճանապարհը», - հայտարարել է փոխվարչապետը (տես Закон об иноагентах – вице-премьер Грузии несогласна с реакцией НПО, https://sputnik-georgia.ru/20230226/zakon-ob-inoagentakh---vitse-premer-gruzii-nesoglasna-s-reaktsiey-npo-275259534.html, (մուտք՝ 30.02.2023)):
12. ООН обеспокоена грузинским законопроектом "О прозрачности иностранного влияния", https://sputnik-georgia.ru/20230227/oon-obespokoena-gruzinskim-zakonoproektom-o-prozrachnosti-inostrannogo-vliyaniya-275283989.html (մուտք՝ 30.02.2023):
13. ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Նեդ Փրայսի հայտարարության համաձայն՝ առաջարկվող օրինագիծը խարանելու և լռեցնելու է Վրաստանի քաղաքացիների անկախ ձայնը և պոտենցիալ վտանգ է ներկայացնելու Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման համար: Նա նաև նշել է, որ օրինագիծը հիմնված է ոչ թե ԱՄՆ օտարերկրյա գործակալների գրանցման ակտի (FARA), ինչպես ասում են, այլ Ռուսաստանի և Հունգարիայի օրենսդրության վրա: Օրինագծի հեղինակները, բերելով բազմաթիվ փաստեր և համեմատություններ, կտրականապես անընդունելի են համարել օրինագծի նույնականացումը ամերիկյան և ռուսական համանման օրենքների հետ: Ըստ այդմ՝ Նեդ Փրայսի հայտարարությունը օրինագծի վերաբերյալ անվանվել է տագնապալի, իսկ ռուսականի հետ համեմատելը՝ խայտառակ շահարկում (տես Чем грузинский законопроект об иноагентах отличается от законов в США и РФ?, https://sputnik-georgia.ru/20230220/chem-zakonoproekt-ob-inoagentakh-otlichaetsya-ot-zakona-v-ssha-i-rf--otvet-deputatov-275037573.html, (մուտք՝ 30.02.2023)): Քննադատելով Նեդ Փրայսի հայտարարությունը՝ իշխող «Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Սանդրա Միլինարաձեն ասել է, որ Պետքարտուղարի հայտարարությունները՝ չպետք է հիմնված լինեն կեղծ նարատիվի վրա: «Երբ խոսում է մեր բարեկամ երկրի՝ ռազմավարական գործընկերոջ ներկայացուցիչը, ես կարծում եմ, որ յուրաքանչյուր բան պետք է ավելի ապահովագրված լինի և չպետք է հիմնված լինի Վրաստանում մշակված կեղծ նարատիվի վրա, թե դա ռուսական օրենք է»,- նշել է Մ. Միլինարաձեն (տես В "Грузинской мечте" ответили на критику представителя Госдепа США, https://sputnik-georgia.ru/20230228/v-gruzinskoy-mechte-otvetili-na-kritiku-predstavitelya-gosdepa-ssha-275334279.html (մուտք՝ 30.02.2023)): Բավական խիստ էր նաև իշխող «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կորթախիձեի արձագանքը, ըստ որի՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակ Նեդ Փրայսին մոլորության մեջ են գցել, ինչի արդյունքում նա կեղծ տեղեկություններ է հնչեցրել օրենքի նախագծի մասին (տես Лидер "Грузинской мечты" обвинил представителя Госдепа во лжи, https://sputnik-georgia.ru/20230227/lider-gruzinskoy-mechty-obvinil-predstavitelya-gosdepa-vo-lzhi-275286846.html (մուտք՝ 30.02.2023)):
14. Եվրոպական արտաքին կապերի ծառայության հայտարարության մեջ ասվում է, որ օրենքի նախագիծը հակասում է Վրաստանի՝ ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստանալու պայմաններին և Եվրամիության նորմերին (տես ЕС раскритиковал проект закона об "иноагентах" в Грузии, https://sputnik-georgia.ru/20230225/es-raskritikoval-proekt-zakona-ob-inoagentakh-v-gruzii-275234149.html (մուտք՝ 30.02.2023)): Վրաստանի իշխանությունների արձագանքն այս քննադատությանը համեմատաբար մեղմ էր. խորհրդարանի խոսնակ Շ. Պապուաշվիլին հայտարարեց, որ օրենքի նախագծի քննարկման ժամանակ Վրաստանի խորհրդարանը հաշվի կառնի իր գործընկերների մտահոգությունները (տես Спикер парламента Грузии ответил на критику ЕС о законе об "иноагентах", https://sputnik-georgia.ru/20230225/spiker-parlamenta-gruzii-otvetil-na-kritiku-es-o-zakone-ob-inoagentakh-275235419.html (մուտք՝ 30.02.2023)): Այսպիսի պատասխանը, անշուշտ, կապված էր Վրաստան-ԵՄ ինտեգրացիոն գործընթացների հետ. 2022 թ. հունիսին Եվրոպական խորհուրդը որոշել է ճանաչել Վրաստանի եվրոպական հեռանկարը և պատրաստակամություն հայտնել նրան տալ թեկնածու երկրի կարգավիճակ, հենց որ կատարվեն 12 հայտնի նախապայմանները, այդ թվում՝ բևեռացման վերացում, ապաօլիգարխացում, լրատվամիջոցների բարելավում, դատական իշխանության լիարժեք անկախության միջավայրի ապահովում և այլն: Վրաստանն ակնկալում է ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստանալ 2023 թ.:
15. Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դ. Միյատովիչը Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիին ուղարկած իր նամակում գրել է. «Թեև թափանցիկությունը կարող է օրինական մտահոգություն լինել, այն չպետք է ձեռք բերվի ոչ առևտրային կազմակերպությունների և լրատվամիջոցների կողմից իրենց իրավունքների և ազատությունների արդյունավետ և օրինական գործունեության իրականացման հաշվին»: Դ. Միյատովիչը հիշեցրել է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել է օտարերկրյա գործակալների մասին ռուսական օրենքը որպես մարդու իրավունքները ոտնահարող (տես Зачем Грузии закон об "иноагентах"? Аргументы сторонников и противников, https://sputnik-georgia.ru/20230302/zachem-gruzii-zakon-ob-inoagentakh-argumenty-storonnikov-i-protivnikov-275399930.html (մուտք՝ 02.03.2023)):
16. პრეზიდენტი - როცა მეტი ქალი იქნება ქართულ პოლიტიკაში, პოლარიზაცია, ეს უდიდესი სენი, უფრო დაძლეული იქნება, https://president.ge/index.php?m=209&news_id=1830&lng=geo (մուտք՝ 30.02.2023):
17. "Опасный сигнал" - спикер парламента о планах президента Грузии по закону об иноагентах, https://sputnik-georgia.ru/20230228/opasnyy-signal---spiker-parlamenta-prokommentiroval-plany-prezidenta-nalozhit-veto-275340599.html (մուտք՝ 30.02.2023):
18. Зачем Грузии закон об "иноагентах"? Аргументы сторонников и противников, https://sputnik-georgia.ru/20230302/zachem-gruzii-zakon-ob-inoagentakh-argumenty-storonnikov-i-protivnikov-275399930.html (մուտք՝ 02.03.2023): Նույն աղբյուրում բերված «Ժողովրդի ուժը» շարժման առաջնորդների փաստարկների համաձայն՝ դրսից ՀԿ-ներին ֆինանսավորելու ներկայիս պրակտիկան սպառնալիքներ է ստեղծում երկրի ինքնիշխանության համար: Ըստ նրանց՝ ԱՄՆ-ից ստացվող ֆինանսավորման մեծ մասը նախատեսված է հատուկ ՀԿ-ների համար. այդ գումարները ստանում է ոչ թե Վրաստանը, այլ ամերիկյան գործակալական ցանցը:
19. Парламент Грузии зарегистрировал американский вариант закона об иноагентах, https://sputnik-georgia.ru/20230227/parlament-gruzii-zaregistriroval-amerikanskiy-variant-zakona-ob-inoagentakh-275289339.html (մուտք՝ 30.02.2023):
20. Законопроект "О регистрации иностранных агентов" отозвали из парламента Грузии, https://sputnik-georgia.ru/20230310/zakonoproekt-o-registratsii-inostrannykh-agentov-otozvali-iz-parlamenta-iz-gruzii-275664337.html (մուտք՝ 13.03.2023):
21. "Грузинская мечта" поддержит обе версии законопроекта об иноагентах, https://sputnik-georgia.ru/20230227/gruzinskaya-mechta-podderzhit-obe-versii-zakonoproekta-ob-inoagentakh-275288076.html (մուտք՝ 13.03.2023):
22. Зачем Грузии закон об "иноагентах"? Аргументы сторонников и противников, https://sputnik-georgia.ru/20230302/zachem-gruzii-zakon-ob-inoagentakh-argumenty-storonnikov-i-protivnikov-275399930.html (մուտք՝ 02.03.2023):
23. Драка, перепалка и акция – как идет рассмотрение законопроектов об "иноагентах" в Грузии, https://sputnik-georgia.ru/20230306/draka-perepalka-i-aktsiya---kak-idet-rassmotrenie-zakonoproekta-ob-inoagentakh-v-gruzii-275477431.html (մուտք՝ 15.03.2023): Ի դեպ, խիստ անհրաժեշտ համարելով օտարերկրյա ազդեցության գործակալների մասին օրենքի ընդունումը՝ «Կովկասի իսլամական հետազոտությունների կենտրոնի» տնօրեն Շոթա Ափիսաձեն հայտնել է ուշագրավ վիճակագրություն: Ըստ այդմ՝ 1993 թվականից ի վեր Վրաստանի ՀԿ-ները արևմտյան տարբեր հիմնադրամներից ստացել են մոտ 470 մլն ԱՄՆ դոլար: Դրանց թվում են Ջորջ Սորոսի «Բաց հասարակության» հիմնադրամը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Եվրասիա հիմնադրամը, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը և այլ ամերիկյան հիմնադրամներ: Ըստ Շ. Ափիսաձեի՝ իրականում քաղաքացիական հասարակության զարգացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը միայն դեկլարատիվ նպատակներ են, իսկ ահա այս փողի կոնկրետ նպատակը քաղաքական գործընթացները կառավարելն է, սեփական էլիտաների ստեղծումը և հետագայում սեփական ազդեցության գործակալների միջոցով երկիրը կառավարելը (տես Грузии необходим закон об "иноагентах" – директор "Центра Исламских исследований Кавказа", https://sputnik-georgia.ru/20230306/gruzii-neobkhodim-zakon-ob-inoagentakh---direktor-tsentra-islamskikh-issledovaniy-kavkaza--275495963.html (մուտք՝ 15.03.2023)):
24. Мат и драка в парламенте Грузии – страсти вокруг законопроекта об иноагентах не утихают, https://sputnik-georgia.ru/20230307/mat-i-draka-v-parlamente-gruzii--strasti-vokrug-zakonoproekta-

ob-inoagentakh-ne-utikhayut-275523027.html (մուտք՝ 15.03.2023):
25. Премьер Грузии выступил в поддержку законопроекта об иноагентах, https://sputnik-georgia.ru/20230307/premer-gruzii-vystupil-v-podderzhku-zakonoproekta-ob-inoagentakh-275530113.html (մուտք՝ 15.03.2023):
26. Парламент Грузии принял проект закона об "иноагентах" в первом чтении, https://sputnik-georgia.ru/20230307/parlament-gruzii-prinyal-proekt-zakona-ob-inoagentakh-v-pervom-chtenii-275546189.html (մուտք՝ 15.03.2023):
27. ՆԳ նախարարության հաղորդագրության համաձայն՝ գիշերվա իրադարձությունների արդյունքում բերման է ենթարկվել 66 մարդ, վիրավորվել՝ 50 ոստիկան, որոնցից մի քանիսը վիրահատական միջամտության կարիք են ունեցել: Մանր խուլիգանության և ոստիկանության օրինական պահանջին չհնազանդվելու փաստերով հարուցվել են գործեր, այդ թվում՝ երկու քրեական գործ: Ձերբակալվել էր նաև «Գիրչի - ավելի շատ ազատություն» կուսակցության առաջնորդ Ջուրաբ Ջափարիձեն:
28. Госдеп: виновные в подавлении протестов в Грузии могут попасть под санкции США, https://sputnik-georgia.ru/20230308/gosdep-vinovnye-v-podavlenii-protestov-v-gruzii-mogut-popast-pod-sanktsii-ssha-275560510.html (մուտք՝ 16.03.2023):
29. პრეზიდენტი - მე პირველივე დღიდან ვთქვი, რომ ამ კანონს ვეტოს დავადებდი და დავადებ ვეტოს!, https://president.ge/index.php?m=210&news_id=1840&lng=geo (մուտք՝ 16.03.2023):
30. Боррель раскритиковал грузинский закон об "иноагентах", https://sputnik-georgia.ru/20230308/borrel-raskritikoval-gruzinskiy-zakon-ob-inoagentakh-275576845.html (մուտք՝ 15.03.2023):
31. Шарль Мишель обеспокоен последними событиями в Грузии, https://sputnik-georgia.ru/20230308/sharl-mishel-obespokoen-poslednimi-sobytiyami-v-gruzii-275591945.html (մուտք՝ 16.03.2023):
32. ԱՄՆ դեսպանատուն. Այսօր սև օր է Վրաստանի ժողովրդավարության համար, https://1tv.ge/lang/am/news/amn-despanatun-aysor-sev-or-e-vrastani-zhoghovrdavaruthyan-hamar-xorhrdarani-koghmic-kremli-koghmic-ogeshnchvatc-orenkhneri-khnnarkman-sharunakuthyunn-anhamategheli-e-yevropayi-het-integrvelu-cankut/ (մուտք՝ 16.03.2023): Ի պատասխան դրա՝ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կորախիձեն հայտարարել է. «Ես ձեզ ուղղակի կասեմ, որ այս «սև օրը» արմատական ընդդիմության ու նրա երկրպագուների համար է, միայն նրանց համար, դա պարզ է ու պարզ է ամեն ինչից, այդ թվում՝ օրենքի նախագծի բովանդակությունից» [տես Իրակլի Կորախիձե. «Սև օրն» այսօր միայն արմատական ընդդիմության և դրա հետ կապված ուժերի համար է, https://1tv.ge/lang/am/news/irakli-kobaxidze-sev-orn-aysor-miayn-armatakan-%e2%80%8b%e2%80%8behnddimuthyan-ev-dra-het-kapvatc-uzheri-hamar-e/ (մուտք՝ 16.03.2023)]:
33. აგენტების შესახებ კანონპროექტის მიღება ევროკავშირში მისწრაფებებთან შეუსაბამო იქნება - ფიშერი, https://www.radiotavisupleba.ge/a/32304009.html (մուտք՝ 16.03.2023):
34. Помощник госсекретаря США выражает обеспокоенность законопроектом об «агентах», https://civil.ge/ru/archives/529344 (մուտք՝ 16.03.2023):
35. ირაკლი კობახიძე - თუ სახელმწიფოს არ დავიცავთ ჯაშუშების გეგმებისგან, არა მხოლოდ ევროკავშირის წევრები ვერ გავხდებით, არამედ სუვერენიტეტსაც დაკარგავთ, https://1tv.ge/news/irakli-kobakhidze-tu-sakhelmwifos-ar-davicavt-jashushebis-gegmebisgan-ara-mkholod-evrokavshiris-wevrebi-ver-gavkhdebit-aramed-suverenitetsac-davkargavt/ (մուտք՝ 16.03.2023):
36. ირაკლი კობახიძე - არ გვახსენდება არასამთავრობო ორგანიზაციებისა და სხვა სუბიექტების მღელვარება, როდესაც რადიალური ოპოზიცია ჩვენი ხელისუფლების სტიგმატიზაციას ცდილობდა, არ გვახსენდება იარლიყების მიწებების დაგმობა, https://1tv.ge/news/irakli-kobakhidze-ar-gvakhsendeba-arasamtavrobo-organizaciebisa-da-skhva-subieqtebis-mghelvareba-rodesac-radikaluri-opozicia-chveni-khelisuflebis-stigmatizacias-cdilobda/ (մուտք՝ 16.03.2023):
37. Оппозиция выдвинула ультиматум властям на акции в Тбилиси, https://sputnik-georgia.ru/20230308/oppozitsiya-vydvinula-ultimatum-vlastyam-na-aktsii-v-tbilisi-275596399.html (մուտք՝ 16.03.2023):
38. Тбилиси приходит в себя после бурной ночи: что происходит в эпицентре протеста, https://sputnik-georgia.ru/20230309/tbilisi-prikhodit-v-sebya-posle-burnoy-nochi-chto-proiskhodit-v-epitsentre-protesta---275609875.html (մուտք՝ 16.03.2023): Մարտի 9-ին, վաղ առավոտյան ՆԳ նախարարությունը հայտարարեց մարտի 7-8-ը Թբիլիսիի կենտրոնում տեղի ունեցած բողոքի ցույցերի ժամանակ 133 մարդու ձերբակալության մասին:
39. საპატრიარქო - ქვეყანა მტკიცე სახელმწიფოდ ჩამოყალიბების ურთულეს გზას გადის, დღეს უდიღესი სიფრთხილის გამოჩენა გვმართებს როგორც სახელმწიფო ინსტიტუციების, ასევე საზოგადოების მხრიდან, https://1tv.ge/news/sapatriarqo-qveyana-mtkice-sakhelmwifod-chamoyalibebis-urtules-gzas-gadis-dghes-udidesi-sifrthkilis-gamochena-gvmartebs-rogorc-sakhelmwifo-instituciebis-aseve-sazogadoebis-mkhridan/ (մուտք՝ 16.03.2023):
40. Խորհրդարանական մեծամասնությունը որոշել է հետ կանչել «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագիծը, https://1tv.ge/lang/am/news/xorhrdaranakan-metcamasnuthyuneh-oroshel-e-het-kanchel-otarerkrya-azdecuthyan-thaphancikuthyan-masin-orenkhi-naxagitceh/ (մուտք՝ 16.03.2023):
41. Վրաստանում Եվրամիության ներկայացուցչությունը, ողջունելով օրենքի նախագիծը հետ կանչելու մասին իշխող կուսակցության հայտարարությունը, կոչ էր արել Վրաստանի բոլոր քաղաքական առաջնորդներին վերսկսել եվրոպամետ բարեփոխումները՝ ներառական, կառուցողական ձևով և 12 առաջնահերթություններին համապատասխան թեկնածուի կարգավիճակի հասնելու համար [տես Եվրամիության ներկայացուցչություն. մենք ողջունում ենք իշխող կուսակցության հայտարարությունը «արտաքին ազդեցության» օրինագիծը հետ կանչելու մասին https://1tv.ge/lang/am/news/yevramiuthyan-nerkayacucchuthyun-menkh-oghjunum-enkh-ishxogh-kusakcuthyan-haytararuthyuneh-artakhin-azdecuthyan-orinagitceh-het-kanchelu-masin-menkh-bolor-khaghakhakan-arajnordnerin-koch-enkh-anum-v/ (մուտք՝ 16.03.2023)]: Օրինագծի հետ կանչելը կարևորեցին, միաժամանակ՝ Վրաստանի իշխանություններին խիստ զգուշացնող ուղերձներ պարունակող հայտարարություններ տարածեցին Եվրախորհրդարանի պատգամավորներ Վիոլա ֆոն Կրամոն-Տաուբադելը, Միրիամ Լեքսմանը, Լիտվայի նախկին արտգործնախարար Լինաս Լինկևիչուսը, Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեյը, ԵՄ՝ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ջոզեպ Բորելը և այլն: Օրինագծի հետկանչման որոշումը ողջունեց նաև Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, ով այդ առիթով շնորհավորեց Վրաստանի հասարակությանը:
42. Кто дал "зеленый свет" на переворот в Грузии?, https://sputnik-georgia.ru/20230309/kto-dal-zelenyy-svet-na-perevorot-v-gruzii-275615810.html (մուտք՝ 16.03.2023):
43. «Քանի որ հուզական ֆոնը մարում է, մենք ավելի լավ կըացատրենք հանրությանը, թե ինչի համար էր օրինագիծը և ինչու էր կարևոր մեր երկրում արտաքին ազդեցության թափանցիկության ապահովումը: Դա անելու համար մենք կսկսենք հանդիպումներ ընակչության հետ և լայն հանրությանը տեղյակ կպահենք խնդրի յուրաքանչյուր մանրուքի մասին ճշմարտությունը»,- նշված էր հայտարարության մեջ:
44. Ըստ Ի. Կորախիձեի՝ առաջին ձեռքբերումն այն է, որ բոլորը գիտակցեցին՝ գործակալ լինելը ամոթալի բան է, անկախ նրանից, թե ում գործակալն ես: Երկրորդը՝ բոլորն իմացան նաև այն կազմակերպությունների մասին, որոնք զբաղվում են տարբեր հակապետական գործունեությամբ: Երրորդ կարևոր ուղերձն այն է, որ երկրի ամենամեծ ընդդիմադիր կուսակցությունը՝ «Միացյալ ազգային շարժմանը», ՀԿ-ների ձեռքով իշխանության վերադարձնելու ծրագիրը երբեք չի իրականացվի [տես "Они уже сделали свое дело" – Кобахидзе о скандальных законопроектах, https://sputnik-georgia.ru/20230310/oni-uzhe-sdelali-svoe-delo--kobakhidze-o-skandalnykh-zakonoproektakh-275675913.html?fbclid=IwAR3uoxGHgYGAzeqEWsU2zehVLJv-Z_qPfFg-kZYIr8BEm9zfdTPROKnftbns (մուտք՝ 16.03.2023)]:
45. «Գիրչի-ավելի շատ ազատություն» ընդդիմադիր կուսակցությունից Թբիլիսիի սակրերուլյի անդամ Ցոտնե Կորերիձեն հայտարարել էր, որ իրենք մարտի 9-ի երեկոյան ևս անցկացնելու են հանրահավաք, քանի որ, իբր, չեն վստահում «Վրացական երազանքին» և կարծում են, որ իրենք են երկրի՝ Արևմուտքի մաս դառնալու երաշխավորը [տես "Не доверяем!" – активисты анонсировали новую акцию протеста в Тбилиси, https://sputnik-georgia.ru/20230309/ne-doveryaem---aktivisty-anonsirovali-novuyu-aktsiyu-protesta-v-tbilisi-275619362.html (մուտք՝ 16.03.2023)]:
46. Почему "Грузинская мечта" отказалась от скандальных законопроектов – ответ главы партии, https://sputnik-georgia.ru/20230309/pochemu-gruzinskaya-mechta-otkazalas-ot-skandalnykh-zakonoproektov--otvet-glavy-partii-275644779.html (մուտք՝ 16.03.2023): Իշխող «Վրացական երազանքի» գործադիր քարտուղար Մ. Մդինարաձեն հայտնել է, որ «Ժողովրդի ուժի» ներկայացուցիչները նամակ են ուղարկել խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի անունով և հետ կանչել «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրինագիծը [օրինագծի տվյալ (ամերիկյան) տարբերակը դեռևս չէր դիտարկվել լիագումար նիստում և չէր դրվել քվեարկության, տես Как "Грузинская мечта" собирается отозвать скандальные законопроекты, https://sputnik-georgia.ru/20230309/kak-gruzinskaya-mechta-sobiraetsya-otozvat-skandalnye-zakonoproekty-275635761.html (մուտք՝ 16.03.2023)]:
47. Все задержанные на акциях в Тбилиси освобождены – МВД, https://sputnik-georgia.ru/20230309/vse-zaderzhannye-na-aktsiyakh-v-tbilisi-osvobozhdeny---mvd-275647114.html (մուտք՝ 16.03.2023):
48. შალვა პაპუაშვილმა ვენეციის კომისიის პრეზიდენტს მიმართა, აღარ განიხილონ თხოვნა კანონპროექტებზე სამართლებრივი მოსაზრების მომზადების თაობაზე, https://1tv.ge/news/shalva-papuashvilma-veneciis-komisiis-prezidents-mimarta-aghar-ganikhilon-tkhovna-kanonproeqtebze-samartlebrivi-mosazrebis-momzadebis-taobaze/ (մուտք՝ 16.03.2023):
49. Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ տապալեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագիծը, https://1tv.ge/lang/am/news/xorhrdaraneh-erkrord-ehnthercmamb-tapalec-otarerkrya-azdecuthyan-thaphancikuthyan-masin-orinagitceh/ (մուտք՝ 16.03.2023): Նախագծին կողմ քվեարկեց 1, դեմ՝ 35, ձեռնպահ՝ 58 պատգամավոր, ընդհանուր առմամբ նիստին գրանցվել էր 112 պատգամավոր:
50. «Մեր հիմնական նպատակը Վրաստանում իշխանությունը փոխելն է արևմտամետ, ուկրաինամետ կառավարությամբ, որպեսզի Ուկրաինան միայնակ չմնա, քանի որ մենք գործնականում դաշնակիցներ ենք: Մենք պետք է միասին լինենք և միասին տոնենք ոչ միայն Ռուսաստանի դեմ հաղթանակը, այլև Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին մեր անդամակցությունը»,- հայտարարել է Վ. Մերաբիշվիլին [(տես Вано Мерабишвили пообещал Грузии “интересную весну”. Реакции, https://www.newsgeorgia.ge/vano-merabishvili-poobeshhal-interesnuju-vesnu-reakcii/ (մուտք՝ 16.03.2023)]:
51. "მრცხვენია, რომ საქართველო არ მონაწილეობს და არ არის უარაინის გვერდით ამ ომში"-ვანო მერაბიშვილი, https://rustavi2.ge/ka/news/250903 (մուտք՝ 16.03.2023):
52. «Տեղեկություններ կան, որ երիտասարդների որոշակի խումբ պատրաստվում է ինչ-որ կերպ միջամտել քաղաքական գործընթացների զարգացմանը»,- լրագրողներին ասել է Գ. Վոլսկին [(տես В Грузии готовится госпереворот – в "Грузинской мечте" рассказали подробности, https://sputnik-georgia.ru/20230310/v-gruzii-gotovitsya-gosperevorot---gruzinskaya-mechta-275681978.html?fbclid=IwAR0Gdf8mdbKCDMhHR9AGRXkgODqXcd4Groz6vA7FCIhmoGZ-HWTDeQjSuzY (մուտք՝ 16.03.2023)]:
53. Հիշեցնենք, որ ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից շուրջ 1 ամիս անց՝ 2022 թ. մարտի 22-ին, Ուկրաինայի Ազգային անվտանգության և պաշտպանության խորհրդի ղեկավար Ա. Դանիլովը հայտարարել էր, որ այլ երկրների տարածքում ՌԴ շաների ղորտում լրացուցիչ ճակատների բացումը մեծապես կօգնի Ուկրաինային: Որպես երկրորդ ճակատ բացելու օրինակ, բացի Վրաստանի տարածքից, նա նշել էր Կուրիլյան կղզիները, Կալինինգրադի մարզը, Մերձդնեստրը, Լեռնային Ղարաբաղը: Դրանից 1 ամիս անց՝ 2022 թ. ապրիլի 27-ին, Ուկրաինայի նախագահի գրասենյակի ղեկավարի խորհրդական Ա. Արեստովիչը կածիք էր հայտնել, որ Վրաստանը «պատմական հնարավորություն ունի գրավելու Աբխազիան և Հարավային Օսիան»: Մեկ տարի անց՝ 2023 թ. Մարտի 8-ի լույս 9-ի գիշերը, Թբիլիսիի ցուցարարներին իր աջակցությունն էր հայտնել Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկին՝ շնորհակալություն հայտնելով նրանց, ովքեր Վրաստանի հրապարակներում ու փողոցներում ուկրաինական դրոշներ են պահել, ինչեցրել Ուկրաինայի օրհներգը: Վրաստանի իշխանությունները խստորեն դատապարտել են Ուկրաինայի իշխանությունների այս արկածախնդիր վարքագիծը՝ հայտարարելով, որ թույլ չեն տա որևէ մեկին բացել 2-րդ ճակատ և Վրաստանը ներքաշել ռազմական գործողությունների մեջ:
54. პრემიერი თბილისის საპროტესტო აქციებს „დესტრუქციული“, „ანარქისტული“ ძალებს უკავშირებს, https://civil.ge/ka/archives/530999 (մուտք՝ 17.03.2023): Մեկնաբանելով մարտի 7-9-ը տեղի ունեցած իրադարձությունները՝ Իրակլի Ղարիբաշվիլին հիշատակել է նաև «Վրաստանի համալսարանի» հիման վրա գործող և կրթական ծրագրեր իրականացնող «Ֆրանկլինի ակումբ» ՀԿ-ի և կանեփի օրինականացման համար պայքարող Ջ. Ջափարիձեի գլխավորած «Գիրչի - ավելի շատ ազատություն» կուսակցության երիտասարդներին, որոնք եղել են «ամենասադրիչն ու հանդուգնը»: Վարչապետի խոսքով՝ «Ֆրանկլինի ակումբը» թռնավորում է երիտասարդներին և «լվանում ուղեղները», ինչը, ըստ Ի. Ղարիբաշվիլու, հակապետական, դիվերսիոն գործողություն է:
55. "Они глубоко заблуждаются" – Каладзе о революционных планах оппозиции, https://sputnik-georgia.ru/20230313/oni-gluboko-zabluzhdayutsya--kaladze-o-revolyutsionnykh-planakh-oppozitsii-275744993.html (մուտք՝ 17.03.2023):
56. Депутат: цель радикальной оппозиции – открыть в Грузии второй фронт, https://sputnik-georgia.ru/20230312/deputat-tsel-radikalnoy-oppozitsii--otkryt-v-gruzii-vtoroy-front-275718208.html (մուտք՝ 17.03.2023):

Թուրքիայի ավերիչ երկրաշարժն ու դրա քաղաքական հետևանքները Ռ. Թ. Էրդողանի համար

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս, պատմ. գիտ. թեկնածու

Սույն թվականի փետրվար ամսին Թուրքիայի Հանրապետության տարածքում տեղի են ունեցել 1939 թ. ի վեր ամենաավերիչ և հզոր երկրաշարժերը: Մասնավորապես՝ փետրվարի 5-ի լույս 6-ի գիշերը երկրի հարավը ցնցվել է 7,8 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժից, իսկ ցերեկը 7,5 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել երկրի հարավ-արևելքում:

Հաջորդող օրերին ևս տարբեր ուժգնության հետցնցումներ են գրանցվել երկրի զգալի տարածքներում: Երկրաշարժից տուժել է նաև հարևան Սիրիան, որտեղ նույնպես տներ են փլուզվել, մեծ թվով մարդիկ զոհվել ու վիրավորվել են:

Երկրաշարժերի պատճառով ավերվել են մշակութային ժառանգության օբյեկտները: Թուրքիայի Գազիանթեփի նահանգում հնագույն ամրոց է վնասվել, իսկ Սիրիայում՝ Հալեպի միջնաբերդը: Երկրաշարժից տուժած երկու տեսարժան վայր էլ ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Անկասկած է, որ տեղի ունեցածը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ ինչպես Թուրքիայի ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ՝ ընտրություններից առաջ ազդելով երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի վարկանիշի վրա:

Երկրաշարժից հետո Թուրքիայի ղեկավարն ասել է, որ Թուրքիային օգնություն են առաջարկել 45 երկրներ, ՆԱՏՕ-ն և Եվրամիությունը: Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը, Իսրայելի նախագահ Ի. Հերցոգը, Հնդկաստանի վարչապետ Ն. Մոդին և Մեքսիկայի կառավարության ներկայացուցիչը իրենց սոցցանցերում աջակցությունն են հայտնել Թուրքիային: Իսկ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը առաջիններից էր, որ արձագանքեց տեղի ունեցածին: Նա ցավակցություն է հայտնել Թուրքիայի և Սիրիայի ղեկավարներին և օգնություն առաջարկել փետրվար 6-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքները վերացնելու համար[1]:

Երկրաշարժը նման ավերածություններ է առաջացրել նախևառաջ իր ուժգնությամբ: 84 տարի առաջ Արևմտյան Հայաստանի Երզնկա (ներկայում՝ Թուրքիայի Էրզինջան) քաղաքում տեղի ունեցած նույն ուժգնությամբ երկրաշարժը (7.8 բալ) հանգեցրեց ավելի քան 30 հազար մարդու մահվան, շուրջ 100 հազարը վիրավորվեց: Այն համարվում է Թուրքիայի ամենամեծ երկրաշարժերից մեկը: Մեծ կորուստների հանգեցրած մյուս գործոնը հանկարծակիությունն է: Երկրաշարժը տեղի է ունեցել առավոտյան ժամը 4-ի սահմաններում: Տները փլուզվել են անմիջապես քնած կամ քնաթաթախ մարդկանց վրա, որոնք չեն

հասցրել դիմակայել վտանգին կամ պաշտպանվել:

Հատկանշական է նաև, որ դեռևս 2022 թ. մարտին Անկարայի Մերձավոր Արևելքի տեխնիկական համալսարանի գիտնականները հրապարակեցին մի հետազոտություն, որը ենթադրում էր, որ Գազիանթեփի շրջանի կենտրոնը կարող է լրջորեն վնասվել 6.5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժից:[2] Դա պայմանավորված էր նրանով, որ հարավային Թուրքիայի շենքերի մեծ մասն ամենևին սեյսմակայուն չէ: Դրանք իրար մոտ կառուցված, չամրացված աղյուսով և ցածր բետոնե շրջանակներով շինություններ են:

Երկրաշարժից գրեթե անմիջապես հետո Թուրքիայի նախագահը երկրի՝ երկրաշարժից տուժած 10 նահանգներում, որտեղ ապրում է մոտ 15 միլիոն մարդ, երեք ամսով արտակարգ դրություն է հայտարարել և նշել, որ իշխանությունները ավելի քան 53 մլն դոլար են հատկացրել դրա հետևանքները վերացնելու համար:

ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալների համաձայն՝ Թուրքիայի ներկայիս երկրաշարժի տընտեսական արժեքը կարող է կազմել ՀՆԱ-ի մոտ 2%-ը (ըստ պաշտոնական տվյալների՝ 2021 թ. այն 819.04 մլրդ դոլար էր, 2022 թ. թվերը չեն հրապարակվել)[3]: Ամենաշատը տուժել է Գազիանթեփի նահանգը, որը նաև հարավային Թուրքիայի տնտեսական կենտրոնն է համարվում: Ըստ 2021 թ. տվյալների՝ այնտեղ ապրում է ավելի քան 2.13 մլն մարդ, արտադրվում է Թուրքիայի արդյունաբերական արտադրանքի մոտավորապես 4%-ը և թեթև արդյունաբերության ապրանքների 6%-ը:

Երկրաշարժը խաթարել է նաև նյութատեխնիկական ապահովումը: Չոր բեռներ, կոնտեյներային նավեր և տանկերներ ընդունող Իսկենդերուն նավահանգստում (Հաթայ նահանգ) մեծ հրդեհ է բռնկվել. հրդեհվել են կոնտեյներներ, և աշխատանքները դադարեցվել են: Նաև դադարեցվել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի աշխատանքը՝ չնայած այն հանգամանքին, որ օբյեկտը չի վնասվել: Խողովակաշարի շահագործող «Botaş International Anonim Şirketi»-ն կասեցրել է նավթի տեղափոխումը նավթատարից դեպի լցանավեր: Հաթայի օդանավակայանում ավերվել է միակ թռիչքուղին, այն նույնպես դադարել է գործել: Բացի դրանից՝ փակվել են Քահրամանմարաշի և Գազիանթեփի օդանավակայանները, ինչը դժվարացնում է փրկարարների աշխատանքն ու օգնություն ցուցաբերելը: Թուրքիայի տնտեսության համար կարևոր զբոսաշրջության ոլորտը գրեթե չի տուժել, քանի որ աղետի գոտում հայտնի հանգստավայրեր չկան: Արդեն փետրվարի 6-ին նավթի համաշխարհային գները սկսեցին աճել, ինչի հիմնական պատճառներից էին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժը և Իսկենդերուն նավահանգստում նավթի մատակարարումների դադարեցումը: Երկրաշարժի անմիջական ազդեցությունն արտահայտվեց թուրքական լիրայի կտրուկ անկմամբ (ի սկզբանե լիրան 1 դոլարի նկատմամբ արժեզրկվեց մինչև 18.85-ի, բայց հետո վերադարձրեց կորուստների մեծ մասը): Իսկ երկրի հիմնական ֆոնդային ինդեքսը տարերային աղետի օրը նվազել է 1,35%-ով:

2023 թ. Թուրքիայում գլխավոր քաղաքական իրադարձությունը պետք է լինեին նախագահական և խորհրդարանական ընտրությունները, որոնք անցկացվում են նույն օրը: Համաձայն ազգային օրենսդրության՝ ընտրությունների օրը սահմանում է խորհրդարանը, սակայն եթե պատգամավորները համաձայն չեն, ապա այն հնարավոր է սահմանել նախագահի հրամանագրով: Սկզբունքորեն ընտրություններն ավելի վաղ ժամկետ առաջադրելը ձեռնտու էր իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանը, քանի որ ընդդիմությանը քիչ ժամանակ էր թողնում՝ ընտրազանգվածին մոբիլիզացնելու համար: Եթե Էրդողանը հաղթի, նա չորրորդ անգամ կզբաղեցնի երկրի ղեկավարի պաշտոնը: Ընտրությունների անցկացման ամսաթիվը կախված կլինի ավերված նահանգներում ընտրությունների անցկացման համար պատշաճ պայմանների ապահովումից և ժամկետների հստակեցման՝ Ռ. Թ. Էրդողանի համաձայնությունից:

Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերաբերյալ կանխատեսումներին, ապա տուժած տարածքները՝ հազվադեպ բացառություններով, աջակցում են նախագահի կուսակցությանը կամ նրա հետ դաշնակից «Ազգայնական շարժում» կուսակցությանը: 600 տեղանոց ազգային խորհրդարանում ամենամեծ թվով պատգամավորներ ընտրվում են Ադանա (15) և Գազիանթեփ նահանգներում գտնվող ընտրատարածքներից (14): 2018 թ. վերջին խորհրդարանական ընտրություններում Ադանայում հինգ պատգամավոր ընտրվել է ԱԶԿ-ից, չորսը՝ «Ժողովրդահանրապետական կուսակցությունից», Գազիանթեփում՝ ութ պատգամավոր ԱԶԿ-ից, մնացածը՝ տարբեր, այդ թվում՝ ընդդիմադիր կուսակցություններից:

Այժմ ԱԶԿ-ն խորհրդարանում ունի 290 պատգամավորական մանդատ, «Ազգայնական շարժում» կուսակցությունը՝ 49, իսկ ամենամեծ ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական կուսակցությունը»՝ 144:

Դեռևս ընթացիկ տարվա հունվարին անցկացված հարցումները ցույց են տվել, որ հարցվածների 40-42%-ը պատրաստ է քվեարկել Էրդողանի և իշխող կուսակցության օգտին: Այժմ նրանց վարկանիշը կարող է նվազել: Նախ՝ հարց է առաջանում ոչ միայն շինարարական ընկերությունների, այլև իշխանությունների պատասխանատվության հետ կապված առ այն, որ սեյսմավտանգ տարածաշրջանում կառուցված բնակելի շենքերը ցնցումների նկատմամբ անկայուն են եղել: Ի վերջո, երբ 1999 թ. երկրաշարժի հետևանքով հազարավոր մարդիկ զոհվեցին, Թուրքիան օրենքով խստացրեց քաղաքաշինության չափանիշները: Սակայն երկրաշարժի հետևանքով ավերված տների թվում են նաև վերջին տասնամյակում կառուցվածները: Արդեն կան կոռուպցիային վերաբերող մեղադրանքներ, և ընդդիմությունը պահանջում է, որ փլատակների մաքրման աշխատանքներն ավարտելուց հետո հետաքննություն սկսվի՝ պարզելու, թե ինչպես են կառուցվել տները, և ով է թույլտվություն տվել: Ամենայն հավանականությամբ կարելի էր խուսափել նման թվով զոհերից, եթե պահպանվեին շինարարական կանոնները:

Երկրորդ՝ իշխանությունների և մասնավորապես Էրդողանի վարկանիշի վրա ազդելու է այն, թե ճգնաժամային կառավարումը որքան արդյունավետ կհաղթահարի երկրաշարժի հետևանքները: Փրկվածներին ժամանակավոր կացարաններում պետք է տեղավորել և նրանց անհրաժեշտ օգնություն

տրամադրել, ինչպես նաև նոր տներ կառուցել և վերականգնել ենթակառուցվածքները: Դրա համար անհրաժեշտ են հսկայական միջոցներ, որոնք Թուրքիան այս պահին չունի:

Փաստորեն, երկրաշարժը ոչ միայն խառնեց Էրդողանի ներքաղաքական խաղաթղթերը, այլև բարդացրեց նրա աշխարհաքաղաքական հավակնոտ նախագծերի իրականացումը: Խոսքը ոչ թե Ուկրաինայի և Ռուսաստանի միջև միջնորդի դեր ստանձնելու նրա ջանքերի մասին է, այլ՝ համաշխարհային էներգետիկ նախագծերի: Մասնավորապես՝ Էրդողանը ցանկանում է Թուրքիայում միջազգային գազային հանգույց ստեղծել՝ Եվրոպա ռուսական վառելիքի մատակարարման համար: Սակայն Թուրքիայի երկրաշարժը չազդեց Եվրոպայի էներգետիկ անվտանգության վրա, քանի որ եվրոպական երկրները հրաժարվեցին ռուսական գազից՝ հօգուտ հեղուկ գազի:

Այսօր առանցքային հարցերից մեկն էլ այն է, թե ինչպե՞ս կազդի երկրաշարժը ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա: Էրդողանը բավարար միջոցներ չունի երկիրը վերականգնելու համար, իսկ Ռուսաստանն էլ չի կարող համապատասխան ֆինանսական աջակցություն տրամադրել: Չինաստանը տրամադրում է գերթանկ վարկեր և պնդում, որ նախագծերն իրականացնեն չինական ընկերությունները:

Ստեղծված պայմաններում Թուրքիայի համար հիմնական ներդրողը, կարծես, արաբական աշխարհն է: Սակայն պետք է նշել, որ Արևմուտքը զգալի ֆինանսական ռեսուրսներ ունի ՆԱՏՕ-ի իր դաշնակցին օգնելու համար, պարզապես Էրդողանի խնդիրն այն է, որ վերջին տարիներին նա առճակատման քաղաքականություն է վարել՝ բախվելով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ, հակաարևմտյան տրամադրություններ բորբոքել թուրքական հասարակության մեջ, սիրախաղ արել Ռուսաստանի և Վ. Պուտինի հետ: Ստացվում է, որ Թուրքիայում բնական աղետը կարող է Էրդողանին դուրս շպրտել քաղաքական Օլիմպոսից:



Հղումներ

1. Путин выразил соболезнования президентам Сирии и Турции после землетрясения, https://www.kommersant.ru/doc/5810873, 06.02.2023, (01.03.2023):
2. Почему землетрясение в Турции оказалось настолько разрушительным?, https://www.bbc.com/russian/features-64557702, 07.02.2023, (01.03.2023):
3. Turkey earthquake: how are the true costs calculated?, https://www.preventionweb.net/news/turkey-earthquake-how-are-true-costs-calculated, 23.02.2023, (01.03.2023):

Թուրքիայի երկրաշարժի ֆիզիկական և քաղաքական հետևանքները

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Թուրքիայում փետրվարի 6-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը բազմաթիվ հարցեր առաջացրեց, սակայն էլ ավելի շատ հարցեր ստացան իրենց պատասխանները, ինչպես՝ Թուրքիայի արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների իրական պատկերի բացահայտումը, երկրում առկա կոռուպցիայի մակարդակը և այլն: Էրդողանի կառավարման շրջանում տեղի ունեցած տնտեսական բումի ժամանակ կառուցված բնակելի շենքերը, ինչպես պարզվեց, կառուցվել էին շինկանոնների խախտմամբ և տվյալ սեյսմիկ գոտու անվտանգության սպառնալիքներին չկարողացան դիմակայել: Շինարարների մեծ մասին մեղադրանք է առաջադրվել, մի մասն էլ մնացել է փլատակների տակ: Սակայն ակնհայտ է, որ առանց կոռուպցիոն ծուղակների այս ծավալով թերացումներ չէին կարող տեղի ունենալ: Ինչպես արդեն ասվեց, ԱԶԿ-ի օրոք Թուրքիայում սկսվել է բազմաբնակարան շենքերի շինարարության բում, այնինչ պարզվեց, որ դրանց մեծ մասը անորակ էր: 2018 թվականին ընտրողներին գրավելու համար Էրդողանի կառավարությունը նույնիսկ համաներում էր հայտարարել չգրանցված շինարարական աշխատանքների համար, ինչի առիթով ինժեներների ազգային պալատի այն ժամանակվա ղեկավար Ջեմալ Գյոքչեն մարգարեաբար զգուշացրել էր, որ այդ որոշման պատճառով թուրքական քաղաքները «կարող են վերածվել գերեզմանոցների»:

Ակնհայտ է նաև, որ տեղի ունեցած երկրաշարժը փոփոխություններ կմտցնի Թուրքիայի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության մեջ, ինչն արդեն իսկ նկատելի է: Այս պայմաններում կարող է առաջանալ գերտերությունների շահերի բախում տարածաշրջանային քաղաքականության առնչությամբ, քանի որ Թուրքիայի ստանձնած դերակատարությունը հնարավոր է մարտավարական հեռանկարում փոփոխություն կրի՝ պայմանավորված երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով երկրի ողջ ռեսուրսները դեպի ներս ուղղելով: Սպասվող ընտրությունները, ավելի քան երբևէ, վերածվելու են կատաղի մրցավազքի, որի ընթացքում ըստ երկրաշարժի հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների՝ պարզ կդառնա գործող իշխանությունների վերընտրվելու հնարավորությունը: Աճող դժգոհությունները ևս գլխավոր ռեսուրս են լինելու ընդդիմության ձեռքում, և եթե վերջինս գործի միասնական ու հաշվենկատ, գալիք ընտրություններում հաջողություններ գրանցելու հնարավորությունները շեշտակիորեն կաճեն: Ընդդիմության օգտին է նաև Արևմուտքի ակնհայտ դժգոհությունը Էրդողանից, ինչը պայմանավորված է Պուտին-Էրդողան սիրախաղով:

Ուժեղանում է իշխանություններից դժգոհությունը՝ ոչ բավարար տեմպով փլատակները մաքրելու, օգնական

ուժերը կողմնակալ ձևով բաշխելու և այլ պատճառներով: Իշխանությանը հասցեագրած քննադատությունները երկրաշարժից փրկվածների և ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների կողմից են հնչում, և եթե վերջիններս ցանկանում են օգտվել գալիք ընտրություններում Էրդողանին քարկոծելու միջոցով միավորներ հավաքելու հնարավորությունից, ապա առաջինները ունեն բողոքելու հիմնավոր պատճառներ: Նրանք պնդում են, որ ամբարձիչների և այլ ծանր տեխնիկայի ուղարկումը հետաձգելու պատճառով բաց է թողնվել մարդկանց փրկելու կարևորագույն պահը: Մասնավորապես հիմնականում ոչ թուրքերով բնակեցված Հաթայ նահանգում մարդիկ անօգնական են մնացել: Անթաքիա քաղաքում փլված շենքերում որոնողական աշխատանքները կատարվել են առավելապես տեղական իշխանությունների ջանքերով, որոնք, անշուշտ, բավարար չէին:

Հաթայը կամ սիրիական Ալեքսանդրեթի սանջաքը Թուրքիային է բռնակցվել 1939 թվականին, և այնտեղի հիմնական բնակչությունը ազգությամբ ալևիներ, քրդեր, արաբներ, հայեր, ասորիներ են: Իշխանություններին ուղղված բողոքի ձայնը խլացնելու համար մի շարք հեռուստաընկերություններ ուղիղ եթերների ժամանակ երկրաշարժից տուժածների բողոքելու ընթացքում մարդկանց ձայներն անջատել են կամ դադարեցրել եթերը:

Այն, որ Թուրքիան երկրաշարժերին դիմագրավելու մեծ փորձ ունի հաստատում են պարբերաբար վերանայվող ու փոփոխվող շինարարական կանոնակարգերն ու ոլորտի օրենսդրությունը: Թուրքիայում գոյություն ունի քաղաքացիական աղետների դեմ պայքարի վարչություն՝ մոտ 15.000 հաստիքակազմով,

որին օգնում են ոչ կառավարական խմբերը, օրինակ՝ «Akut» հիմնադրամը՝ շուրջ 3000 կամավորներով: Նախկինում այս գործառույթը ստանձնել էր բանակը, սակայն Էրդողանի որդեգրած բանակի թուլացման քաղաքականության հետևանքով այն այժմ բանակի լիազորություններից դուրս է բերվել: 1999 թվականի երկրաշարժից հետո թուրքական կառավարությունը նոր հարկատեսակ էր սահմանել, այսպես կոչված, «երկրաշարժի ժամանակ համերաշխության հարկ», որի գանձումից պետական գանձարան մտած միջոցների ճակատագիրը անհայտ է: Այդ միջոցները նախատեսված էին շենքերը երկրաշարժերի նկատմամբ դիմացկուն դարձնելու համար: Անհայտ է նաև բջջային կապի օպերատորների, ռադիոյի և հեռուստատեսության կողմից մինչ օրս վճարվող մեկ տեսակի հարկից կուտակած շուրջ 88 մլրդ լիրայի (4,6 մլրդ դոլար) ճակատագիրը: Երկու տարի առաջ այդ հարկը նույնիսկ բարձրացվել է մինչև 10 տոկոս: Էրդողանի կառավարությունն այդպես էլ ամբողջությամբ չի բացատրել, թե որտեղ են ծախսվել այդ գումարները:

Երկրաշարժին հաջորդած առաջին իսկ ժամերին Էրդողանը կոչ է արել չքաղաքականացնել տարերային աղետի թեման, այլ համախմբվել. «Հուսով եմ, որ այս սարսափելի օրերը ետևում կթողնենք՝ դրսևորելով համերաշխություն և միասնականություն՝ որպես երկիր և ազգ: Այսօր այն օրն է, երբ 85 միլիոնը պետք է միասին լինի՝ մեկ սրտի պես»,— ասել է նա փետրվարի 6-ին:

«Ազգայնական շարժում» կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին նույնպես ընդգծել է. «Այժմ անտեղի վեճերի մեջ ժամանակ կորցնելու պահը չէ»: Քեմալական «Ժողովրդահանրապետական կուսակցության» նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն հայտարարել է. «Ես հրաժարվում եմ տեղի ունեցածը դիտարկել քաղաքականությունից զատված և հավասարվել երկրի ղեկավարությանը: Ես առանց պատճառի չեմ խոսի Էրդողանի, նրա պալատի և նրա հետ կապված շահառու ավազակախմբերի հետ: Ես պայքարելու եմ իմ ժողովրդի կողքին»: Էրդողանը գիտակցելով իր և «Արդարություն և զարգացում» կուսակցության դիրքերի երերուն լինելը աղետալի գնաճի և դոլարի նկատմամբ թուրքական լիրայի անկման խորապատկերին՝ կարող է տեսականորեն երկարեցնել հայտարարած 90-օրյա արտակարգ դրությունը և նույնիսկ փորձել ընտրությունները մայիսի 14-ից տեղափոխել ավելի ուշ ժամկետ, մինչդեռ ավելի վաղ նա, ընդհակառակը, որոշել էր քվեարկության ժամկետը տեղափոխել հունիսի 18-ից մայիսի 14՝ հենց տնտեսական կտրուկ վատթարացող իրավիճակով պայմանավորված, քանի որ աստիճանաբար վատացող տնտեսական վիճակին զուգահեռ անկում է ապրում Էրդողանի վարկանիշը:

Չնայած Արևմուտքի հետ հարաբերությունների սիստեմատիկ սրմանը՝ երկրաշարժից հետո արևմտյան երկրներն առաջիններից են օգնության ձեռք մեկնել Թուրքիային: Մասնավորապես՝ ԱՄՆ իշխանությունները 150 փրկարար է ուղարկել երկրաշարժի հետևանքները վերացնելու համար, իսկ նախագահ Ջո Բայդենը հայտնել է, որ հանձնարարել է անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Թուրքիային. «Խորապես վշտացած եմ Թուրքիայում և Սիրիայում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով մարդկային կորուստների և ավերածությունների համար: Ես հանձնարարել եմ իմ թիմին շարունակել ուշադիր հետևել իրավիճակին՝ համակարգելով Թուրքիայի հետ ցանկացած անհրաժեշտ օգնություն տրամադրել»,— «Twitter»-ում գրել է Բայդենը: Ուշադրության են արժանի Շվեդիան և Ֆինլանդիան, որոնց մուտքը ՆԱՏՕ վերջին ամիսներին կանխվել է Էրդողանի անընդհատ փոփոխվող դիրքորոշման և Ստոկհոլմին ու Հելսինկիին առաջադրվող նոր պահանջների պատճառով: Շվեդիան և Ֆինլանդիան ոչ միայն փրկարարներ են ուղարկել, այլև միջոցներ են հատկացրել Թուրքիայում և Սիրիայում երկրաշարժի հետևանքները հաղթահարելու համար, Շվեդիան՝ մոտ 2.82 մլն դոլար, իսկ Ֆինլանդիան՝ մեկ միլիոն: Ենթադրելի է, որ ՆԱՏՕ-ին միանալու՝ Շվեդիայի և Ֆինլանդիայի թեկնածությունների հաստատման գործընթացը կարագանա:

Թուրքիային օգնելու Արևմուտքի պատրաստակամությունը հավանաբար կփոխի Անկարայի դիրքորոշումը: Իր նախընտրական ծրագիրը հակաարևմտյան քարոզչամեթոդի միջոցով կառուցած Էրդողանը հարկադրված է լինելու գոնե հրապարակային ելույթներում փոխել իր խոսույթը Արևմուտքի, հատկապես ՆԱՏՕ-ի անդամ երկրների, մասնավորապես՝ Հունաստանի հանդեպ: Երկրաշարժից հետո Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսը հեռախոսով զրուցել է Էրդողանի հետ: Սա Հունաստանի կառավարության ղեկավարի և Թուրքիայի ղեկավարի առաջին հեռախոսազրույցն է 2022 թվականի մայիսին երկու երկրների հարաբերությունների վատթարացումից հետո: Միցոտակիսը հաստատել է երկրաշարժի հետևանքները հաղթահարելու գործում Թուրքիային օգնություն ցուցաբերելու Հունաստանի պատրաստակամությունը: Բացի դրանից՝ Ադանա քաղաք է ժամանել Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Դենդիասը, որտեղ նրան դիմավորել է թուրք գործընկեր Մևլյութ Չավուշօղլուն: Նախարարները օդանավակայանում մամուլի համար փակ հանդիպում են անցկացրել: Հարկ է հիշեցնել, որ Էրդողանը 2022 թվականի մայիսին հրաժարվել էր շփվել Միցոտակիսի հետ: Թուրքիայի նախագահն ասել էր, որ Հունաստանի վարչապետը խախտել է մարտին իրենց հանդիպման ժամանակ ձեռք բերած պայմանավորվածությունները, և այսուհետ իր համար Միցոտակիս քաղաքական գործիչ չկա:

Թե ինչպիսի վերաձևումներ կստանան Թուրքիա-Արևմուտք հարաբերությունները երկրաշարժից հետո, պարզ կլինի համեմատաբար մոտ ապագայում, սակայն դա չի ազդելու ռուս-թուրքական հարաբերությունների վրա, և ռուս-թուրքական մտերմությունը տեսանելի ապագայում փոփոխություն չի կրելու առնվազն մինչև գալիք մեծ ընտրությունների արդյունքների պարզ դառնալը: ■

Իսրայելական վերջին հարձակումը Սիրիայում և իրանական արձագանքները

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

2023 թ. փետրվարի 19-ի երեկոյան՝ Սիրիայի դեմ Իսրայելին վերագրվող հերթական ավիահարվածից ժամեր անց, մարդու իրավունքների սիրիական դիտորդական խումբը հայտարարեց, որ վերջին տարիներին Դամասկոսի կենտրոնում 15 մարդու սպանությամբ այս հարձակումն իր տեսակի մեջ «ամենամահաբեր» հարձակումն էր Սիրիայի մայրաքաղաքի դեմ:

Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ ռմբակոծված թիրախների թվում է եղել նաև Դամասկոսում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանը կից մշակութային կենտրոնին պատկանող շենքը: Մարդու իրավունքների սիրիական դիտորդական կենտրոնի տնօրեն Ռամի Աբդել Ռահմանը հայտնել է, որ զոհվածների թվում կան նաև երկու կանայք:

Ըստ այս հաղորդագրության՝ «իսրայելական հարձակումներից» հետո զանգվածային պայթյուններ և հրդեհներ են տեղի ունեցել հարակից շենքերում: Սիրիայի սոցիալական ցանցերում որոշ քաղաքացիներ հայտնել են, որ Դամասկոսում պայթյունների ձայներ են լսվել:

Հաջորդ օրը Իսրայելի բանակի ռադիոն, վկայակոչելով Մարդու իրավունքների սիրիական դիտորդական կենտրոնի զեկույցը, հայտարարեց, որ օդային գործողությունից հետո անցանկալի «բարդություն» է տեղի ունեցել, և զոհերի թիվն ավելացել է: Ըստ այս հաղորդագրության՝ սիրիական հակաօդային պաշտպանությունը ակտիվացել է՝ ինքնաթիռների արձակած հրթիռները խոցելու համար, սակայն սիրիական պաշտպանական համակարգի հրթիռներից մեկը խոցել է նշանակված թիրախներից բացի մեկ այլ շենք ևս:

Այնուամենայնիվ Սիրիան չի հաստատել իր հակաօդային պաշտպանության համակարգի հրթիռի խոցման հետևանքով զոհերի թվի աճը:

Այս հարձակումը Իսրայելին վերագրվող երկրորդ գործողությունն էր այդ օրերի ընթացքում Բենիամին Նաթանյահուի իշխանության վերադարձից հետո: Դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած հարձակումից անմասն չէր մնացել նաև Դամասկոսի օդանավակայանը:

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության խոսնակ Նասեր Քանանին հայտարարել է, որ Թեհրանը «խստորեն դատապարտում է» Դամասկոսի վրա իսրայելական հարձակումը: Բայց նա չի նշել Իրանին պատկանող շենքը թիրախավորելու հնարավորության մասին:

Իսրայելը սովորաբար լռում է այս տեսակի գործողությունների մասին, սակայն նրա բարձրագույն ռազմական և քաղաքական պաշտոնյաները երբեմն լռելյայն հավանություն են տալիս դրանց իրագործմանը[1]:

Հինգշաբթի օրը իսրայելցի զինվորականներից մեկը զգուշացրել է Իրանին, որ եթե մարդասիրական

օգնության քողի տակ զենք ուղարկվի Սիրիա, Իսրայելն առանց վարանելու թիրախավորելու է զենքի առաքումը:

Որոշ աղբյուրներ նաև նշում են, որ Իրանը մտադիր է օգտագործել Սիրիայում վերջին երկրաշարժի ճգնաժամը Դամասկոսի կառավարությանը և «Հեզբոլլահին» զենք և տեխնիկա ուղարկելու համար:

Սիրիայում տեղի ունեցած մահացու երկրաշարժից հետո Իրանը մի քանի անգամ մարդասիրական օգնություն է ուղարկել այս երկիր: Սիրիայում օգնություն ցուցաբերելու գործողություններին միացել են նաև «Հեզբոլլահը» և Իրաքում Իրանի կողմից աջակցվող աշխարհազորայինները:

Իրանի ԱԳՆ-ն ընդգծել է, որ այն օրերին, երբ երկրաշարժից ավերված Սիրիան գտնվում էր խիստ խոցելի վիճակում և ամենից շատ օգնության կարիք ուներ, սիրիացի ժողովրդի ցավը սաստկացրին հետևյալ երկու ուժերը՝ ԻԳԻԼ-ի ահաբեկիչները, որոնք վերջերս արյունալի ահաբեկչություն են իրականացրել Հոմս նահանգում, և Իսրայելը, որը գիշերը հարձակվեց Դամասկոսի քնած բնակիչների վրա[2]:

Իսրայելին վերագրվող վերջին ավիահարվածը Սիրիայում հասցվել էր հունվարի վերջին, որի ժամանակ թիրախ էր դարձել Իրաքից երկիր ներխուժած բեռնատարների շարասյունը:

Սիրիայում մարդու իրավունքների մոնիտորինգ իրականացնող ընդդիմադիր խմբավորումը նշում է, որ այդ բեռնատարները իրանական զենք էին տեղափոխում: Իրանի պետական լրատվամիջոցները հայտնել են, որ այդ բեռնատարները պարենային օգնություն էին տեղափոխում[3]:

Պատահական չէ, որ վերջին շրջանում Իրանը բացահայտորեն խոսում է սիրիական հակաօդային պաշտպանության համակարգի արդիականացման մասին, որպեսզի օգնի Դամասկոսին զերծ մնալու իսրայելական օդային հարձակումներից: Այնուամենայնիվ Իսրայելն, անկասկած, այսպես կոչված, կանխարգելիչ ռազմական գործողությունների կդիմի, եթե

Թեհրանը որևէ լուրջ քայլ չձեռնարկի հայտարարված նպատակի իրականացման համար:

Սրան հաջորդեց փետրվարի 24-ին Իրանի պետական հեռուստատեսության հայտարարությունն այն մասին, որ Թեհրանը մտադիր է Դամասկոսին մատակարարել իր առաջադեմ և հեռահար հակաօդային պաշտպանության հրթիռային համակարգերը:

Շատ հավանական է, որ շուտով Սիրիայի հակաօդային պաշտպանությունն ուժեղացնելու համար մենք ականատես կլինենք Իրանի կողմից ռադարների և պաշտպանական այլ հրթիռների մատակարարմանը, ինչպիսին է «Խորդադ 15» համակարգը: 2013-ին, նույն տարում, երբ Իսրայելը սկսեց իր շարունակական օդային արշավը Իրանի և նրա դաշնակիցների դեմ Սիրիայում, Ռուսաստանը քննարկեց Դամասկոսին հակաօդային պաշտպանության S-300-համակարգեր մատակարարելու հնարավորության հարցը, բայց ի վերջո, դա չարեց ամերիկյան և իսրայելական խիստ առարկությունների պատճառով: 2018 թ. աշնանը Մոսկվան իսկապես մատակարարեց S-300 համակարգը այն բանից հետո, երբ շատ ավելի հին սիրիական S-200 հրթիռը պատահաբար խոցեց ռուսական ռազմական տրանսպորտը՝ փորձելով խոցել գրոհող իսրայելական ռազմական ինքնաթիռները:

Այդ «սիրիական» S-300-ը միայն մեկ անգամ 2022 թ. մայիսին է գործել Իսրայելի օդային հարձակման դեմ, սակայն այդ հարձակումը, ըստ երևույթին, իսրայելական որևէ ինքնաթիռ խոցելու լուրջ փորձ չէր[4]:

Մյուս կողմից՝ Իրանը Իսրայելի երդվյալ թշնամին է, և քիչ հիմքեր կան ենթադրելու, որ նա ի տարբերություն Ռուսաստանի, չի փորձի օգտագործել Սիրիայում իր տեղակայած հակաօդային պաշտպանության համակարգը իսրայելական ռազմական ինքնաթիռների դեմ: Այս պատճառով ևս Իսրայելն, անկասկած, թիրախավորելու է ցանկացած համակարգ, որը Իրանը կփորձի տեղակայել այստեղ:

Սրա նախադեպն արդեն եղել է, երբ 2018 թ. ապրիլին իսրայելական ավիահարվածը թիրախավորել և ոչնչացրել էր Սիրիայում գտնվող իրանական T-4 ավիաբազան՝ սպանելով յոթ իրանցի զինվորների[10]:

Իսրայելի պաշտպանության նախարար Յոավ Գալանտը տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին հայտարարություն է տարածել, որում ասվում է. «Իրանը բանակցություններ է վարում ավելի քան 50 երկրների հետ՝ իր մահաբեր զենքն արտահանելու համար»: Ըստ Գալանտի՝ «Իրանն այլևս տեղական մատակարար չէ»՝ զենք մատակարարելով միայն Մերձավոր Արևելքի իր դաշնակիցներին: Իրանի ռեժիմը վերածվում է ժամանակակից զենքի համաշխարհային արտահանողի[6]:

«Արևելյան Եվրոպայում՝ Բելառուսից մինչև Հարավային Ամերիկայի Վենեսուելա, մենք տեսել ենք, որ Իրանը մինչև 1000 կիլոմետր հեռահարությամբ անօդաչու թռչող սարքեր է մատակարարել», - նշում է Յոավ Գալանտը:

«Բացահայտ և քողարկված Իրանը մշտապես ձգտում է ոչնչացնել Իսրայել պետությունը: Նա դա անում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր դաշնակիցների՝ Իսրայելի սահմանների մոտ գործող ահաբեկչական ուժերի միջոցով: Իրանը սպառնում է ոչ միայն Իսրայելին, այլև Եվրոպայի և ամբողջ աշխարհի անվտանգությանն ու կայունությանը», - ասել է Յոավ Գալանտը[7]:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն էլ վերը նշվածի վերաբերյալ հայտարարել է, որ Թել Ավիվը թույլ չի տա Թեհրանին միջուկային զենք ձեռք բերել և ամեն ինչ կանի իր երկիրը պաշտպանելու համար: Նա նաև ընդգծել է, որ ինքն Իրանին հնարավորություն չի տա հաստատվելու Սիրիայի հարավային հատվածներում, որոնք սահմանակից են Իսրայելին: Բ. Նաթանյահուն հավելել է, որ Իսրայելը վճռականորեն կպատասխանի ցանկացած հարձակման և կպաշտպանի իր ժողովրդին[8]:

Սիրիացի պաշտոնյաները խնդրել են, որ Թեհրանը և նրա տարբեր զինյալների վստահված անձինք խուսափեն իր տարածքն օգտագործել Իսրայելի վրա հարձակվելու համար, քանի որ նա ցանկանում է խուսափել մեծ պատերազմի բռնկումից: Դամասկոսը հիմքեր ունի վախենալու իսրայելական ցանկացած լայնածավալ պատասխան գործողությունից: 2018-ի փետրվարին Իսրայելը գնահատեց, որ ոչնչացրել է Սիրիայի հակաօդային պաշտպանության գրեթե կեսը իրանական ուժերի հետ բախումների սրումից հետո: Քանի որ Ռուսաստանը կենտրոնացած է Ուկրաինայի ուղղության վրա, Սիրիան, հարկավ, ցանկանում է խուսափել Իրան-Իսրայել լայնածավալ և կործանարար առճակատումից իր հողի վրա:

Թեև փետրվարի 24-ի զեկույցը ուշագրավ էր և ցուցադրում էր Սիրիայում Իրանի վերջնական նպատակն ու մտադրությունը, այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ Թեհրանն ի վիճակի կլինի պատերազմից քայքայված արաբական այդ երկրում ձևավորել հակաօդային պաշտպանության հզոր ներուժ:

Իսրայելական ավիահարվածից հետո

Հղումներ

1. https://www.radiofarda.com/amp/32278093.html?fbclid=IwAR3udGM7c23GXYrDKGCBqw3VxsJCnib7R22w5ycbN5g2Y9q86_w7WQaGaHs:
2. https://t.me/IRANist1/2473?fbclid=IwAR0nolqhoslVFWQf6M8lJfnxQen4K8GPWnN2Oy6M6r6-cs9bGKgYXmEJQ5o:
3. https://www.radiofarda.com/a/32264313.html:
4. https://www.forbes.com/sites/pauliddon/2023/02/26/iran-is-once-again-talking-about-upgrading-syrias-air-defenses/?sh=117725e0c11e:
5. https://www.forbes.com/sites/pauliddon/2023/02/26/iran-is-once-again-talking-about-upgrading-syrias-air-defenses/?sh=117725e0c11e:
6. https://t.me/IRANist1/2477?fbclid=IwAR1Q3wEaBon4mtONNfvQ9oajk_6CA6s5XSpOY33Dd0hNoH5q9e8b8sj2Hpw:
7. https://t.me/IRANist1/2477?fbclid=IwAR1Q3wEaBon4mtONNfvQ9oajk_6CA6s5XSpOY33Dd0hNoH5q9e8b8sj2Hpw:
8. https://t.me/IRANist1/2480?fbclid=IwAR27Gc0fdPCjFgDoz-6swD02841-v3AR-Pi5129KOwiOyqyRxn56ZUpbytko:

«Նեմեսիսից» Հայաստանի իշխանության ունեցած վախերի շուրջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Ժողովուրդը քո մատն ավելի շատ համբուրեց, քան իմ աջը: Եվ դա է ճշմարիտը: Պետք է, որ մենք այդպես հարգենք մեր հերոսին, ինչն ամեն բանից վեր է: Ազգը, որ հերոս չունի, պատմություն չունի»[1]: Սրանք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի խոսքերն են՝ ուղղած Սողոմոն Թեհլիրյանին: Վազգեն Վեհափառի այս խոսքերը հավուր պատշաճի ասված բառեր չէին՝ Թեհլիրյանի անձի նկատմամբ հարգանքից դրդված, այլ խարսխված էին ճշմարտության վրա, քանզի վերջին հարյուրամյակի ընթացքում հայության պատմական ճակատագրի բերումով հազարամյակների հերոսների անունների կողքին դրվեցին հայ վրիժառուների անունները, նրա՛նց, ովքեր հայ ազգի մեծագույն ողբերգության՝ հայոց ցեղասպանության, հեղինակներին պատժողներն էին: Այդ վրիժառուները դարձան հայոց պատժիչ ձեռքի, արդարության ու կորսված արժանապատվությունը վերագտնելու համար պայքարի մարմնացումը և պատահական չէր, որ անգամ խորհրդային ապազգայնացման տարիներին, երբ ցեղասպանության մասին գրեթե չէր խոսվում, իսկ ազգային հերոսների մասին խոսելն արգելված էր, հայ մարդը շշուկով կամ կիսաձայն խոսում էր Թեհլիրյանի մասին՝ որպես հայոց պատվի ու արժանապատվության մարտիկի: Հայաստանի անկախության վերականգնումից հետո, երբ գաղափարախոսական կապանքները սկսեցին քանդվել, բարձրաձայն խոսվեց ոչ միայն Թեհլիրյանի ու հայ վրիժառուների, այլև հայոց «Նեմեսիսի» մասին:

Թե ինչ էր հայոց «Նեմեսիսը», կարծում ենք՝ յուրաքանչյուր հայ գիտի, բայց հարկ ենք համարում մի փոքր խոսել «Նեմեսիսին» ծնունդ տված իրադարձությունների մասին, որոնց սկզբնակետը 1915 թվականն էր: Այսպես՝ 1915 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած ձերբակալություններով և դրանց հետևած հարյուրավոր հայ մտավորականների սպանություններով սկսվեց հայ բնակչության բնաջնջումը: Ապրիլի 24-29-ը թուրքական իշխանությունները ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների, որոնց մեծ մասը առանձնակի դաժանությամբ սպանվեց: Արևմտահայությանը զրկելով կազմակերպող ու պաշտպանող ուժերից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ անզեն ու անօգնական բնակչության զանգվածային կոտորածներին ու բռնագաղթին: Սա մարդկության պատմությանը հայտնի առաջին ցեղասպանությունն էր, որին զոհ գնաց 1.5 միլիոն խաղաղ ու անզեն հայ:

Դեռ շարունակվում էր հայոց ցեղասպանությունը, երբ 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթը Հենրի Մորգենթաուին հեգնում էր՝ ասելով. «Հայկական հարցը լուծելու առումով ես երեք ամսում ավելի շատ գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը՝ երեսուն տարում»[2]:

Հայոց ցեղասպանությունն իրագործած և փաստացի անպատիժ մնացած դահիճները պետք է պատժվեին հենց հայերի ձեռքով:

1919 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը որոշում կայացրեց «հատուկ գործ»-ի վերաբերյալ, որը կատարվելու էր «Նեմեսիս» ծածկանունով և նպատակ ուներ վրեժխնդիր լինել հայոց ցեղասպանության կազմակերպիչ ոճրագործներից: Գործողության մասին արդեն խոսել ենք, հետևաբար չմանրամասնելով՝ նշենք միայն, որ հայ վրիժառուների ձեռքով արդար պատիժ ստացան ինչպես հայոց ցեղասպանության, այնպես էլ Ադրբեջանի ու Արցախի հայության ջարդերի պատասխանատու ոճրագործները: Այդ օրերին հայրենազրկված ու ցեղասպանության դեռևս բաց վերքերն իր սրտում կրող աշխարհացրիվ հայության համար «Նեմեսիսը» ապրելու, անզորության զգացումը հաղթահարելու, իրեն գործոն զգալու և իր իրավունքների համար պայքարելու ոգեշնչում էր, հատկապես, երբ գերմանական դատարանը անպարտ ճանաչեց ու դատարանի դահիճից ազատ արձակեց Սողոմոն Թեհլիրյանին:

Տասնամյակներ անց, երբ Հայաստանը վերագտավ կորցրած անկախությունը, և աստիճանաբար հայ ազգին վերադարձվեցին նրա հերոսները, հայոց պատմության դասագրքերում սկսեցին գրել «Նեմեսիսի» ու նրա մարտիկների մասին, և թվում էր, թե հայկական անկախ պետության տարածքում «Նեմեսիսի» արժևորման գործում որևէ խնդիր չպետք է լինի, բայց 2018-ի, այսպես կոչված, «թավշյա հեղափոխությու-

նից» հետո ամեն բան գլխիվայր շրջվեց, և հերոսների արժեզրկումը, վարկաբեկումն ու պիտակավորումը առնչվեցին նաև «Նեմեսիսին» և նրա հերոսներին: Ներկա կառավարության՝ «Նեմեսիսից» ունեցած տարօրինակ և անբնական վախերի մասին են վկայում իշխող կուսակցության պատգամավորի՝ այդ թեմային վերաբերող թրքահաճո արտահայտությունները, որոնցից պարզ է դառնում, որ սույն պատգամավորը կամ լավատեղյակ չէ հայոց պատմության այդ շրջանից, կամ ծառայություն է մատուցում Թուրքիային, կամ էլ՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ահա՛ «Նեմեսիսի» մասին ՔՊ-ական պատգամավորի վախվորած խոսքը. «Գիտե՞ք՝ «Նեմեսիսը» ինչ է: Դա գործողություն է, որը վերաբերում է ինչ-որ մարդկանց վերացնելուն՝ առանց դատ ու դատաստանի… Ճիշտ կլինի, որ մանրամասն ուսումնասիրվի «Նեմեսիսի» ողջ բնույթը, հարյուրամյա գործողությունների ամբողջ ծավալը և ի հայտ բերվեն դրա վտանգները մեր այսօրվա կյանքում, նաև՝ մեր պետականության համար: Երբ ասում ես՝ բա մարդկանց…., ասում են. «Մենք թուրքերի հետ… թուրք սրիկաներին»: Հասկացանք, իսկ հայեր եղե՞լ են այդ ցանկի մեջ: Եվ արդյոք ինչ-որ մարդիկ իրավասու՞մ են առանց դատ ու դատաստանի կայացնել մարդկանց կյանքեր տնօրինելու որոշում»[3]:

Դաշնակցական պատգամավորը փորձեց սույնին բացատրել, թե ինչ է «Նեմեսիսը»՝ պարզաբանելով. ««Նեմեսիս» գործողությամբ մարդ չի սպանվել, «Նեմեսիս» գործողությամբ գնդակահարվել են Հայոց ցեղասպանության համար պատասխանատուները»[4]:

Մենք ևս հարկ ենք համարում փոքր-ինչ մանրամասնել, թե ովքե՞ր են սպանվել «Նեմեսիսի» ժամանակ, որոնց սպանությունը այդքան խոր ողբերգություն է ՀՀ ԱԺ ՔՊ-ական պատգամավորի համար:

Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշա, Թուրքիայի նախկին վարչապետ Սայիդ Հալիմ, 15.000 հայ երեխաներին ծովում խեղդելու հրաման տված Ջեմալ Ազմի, Բեհաեդդին Շաքիր, Թուրքիայի ռազմածովային ուժերի նախկին նախարար Ջեմալ փաշա, Բաքվի հայերի ջարդերի կազմակերպիչներից Նասիբ Յուսիֆբեյլի, Ադրբեջանի նախկին վարչապետ Ֆաթալի Խան Խոյսկի, Շուշիի և Բաքվի ջարդերի հիմնական կազմակերպիչներից Հասան Բեկ Ագան, Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբութ Խան Ջիվանշիր:

«Նեմեսիսից» դուրս շուշեցի Հակոբ Մելքումովի հրամանատարությամբ իր արժանի պատիժը ստացավ Էնվեր փաշան (գուցե նաև դա էր պատճառը, որ Նիկոլ Փաշինյանին Շուշին դժգույն ու դժբախտ է թվացել):

Սույն ոճրագործները, որոնց մահապատիժը ավելի քան 100-ամյա հեռավորությունից այդքան հուզել է Հայաստանում իշխող կուսակցության անդամներին, արդյո՞ք առանց դատ ու դատաստանի են պատժվել, ինչպես լացակումած բողոքում էր ՔՊ-ական պատգամավորը: Պետք է ասել, որ ո՛չ, ավելին՝ երիտթուրք ցեղասպանները մահապատժի են դատապարտվել հենց թուրքական դատարանի կողմից, սակայն հեռակա կարգով, քանի որ փախել էին Օսմանյան կայսրությունից: «Դատավճռից փախած հանցագործների պատիժն իրագործելու նպատակով էլ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կազմակերպեց «Նեմեսիս» գործողությունը:

1919 թ. Երևանում Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովում 650 հանցագործներից առանձնացվեցին 41-ը: «Նեմեսիս» գործողությունը կատարելու համար ստեղծվեց պատասխանատու մարմին՝ ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ Արմեն Գարոյի գլխավորությամբ և հատուկ ֆոնդ՝ Շահան Սաթճակլյանի ղեկավարությամբ: Գործողության օպերատիվ ղեկավարման և նյութական ապահովման համար պատասխանատու էին Շահան Նաթալին և Գրիգոր Մերջանովը»[5]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում, երբ ակնհայտ էր Թուրքիայի անխուսափելի պարտությունը, 1918 թ. հոկտեմբերի 7-ին Թալեաթի կառավարությունը հրաժարական տվեց: «Նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը երիտթուրքական 7 պարագլուխները՝ ի դեմս վարչապետ Թալեաթի, նախարարներ Էնվերի, Ջեմալի, Նազըմի, Հատուկ կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Շաքիրի, ինչպես նաև ոստիկանապետ Բեդրիի ու Ազմիի, գերմանական հածանավով ճողոպրել էին Օդեսա, այնտեղից էլ՝ Գերմանիա»[6]: Թուրքիայում ստեղծված ծանր իրադրության պայմաններում, տեղի տալով համաշխարհային հանրության ճնշումներին, օսմանյան սուլթան Մեհմեդ VI-ը և իրարահաջորդ կառավարությունները քայլեր ձեռնարկեցին՝ պատժելու Առաջին աշխարհամարտի ժամանակ կայսրության տարածքում կատարված ոճրագործությունների, «մասնավորապես հայերի տեղահանության ու կոտորածների հեղինակներին»[7]: Թուրքական հերթական կառավարության 1918 թ. դեկտեմբերի 5-ի որոշմամբ ստեղծվեց խառը հանձնաժողով՝ կազմված արդարադատության և ներքին գործերի նախարարությունների անդամներից:

«Հանձնաժողովը, երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և Հատուկ կազմակերպությանն առնչվող խնդիրներն ընդգրկող 10 տպագիր հարց ուղղելով, գրավոր ու բանավոր ցուցմունքներ վերցրեց բազմաթիվ անձանցից… Թղթապանակներ նախապատրաստվեցին 130 հոգու վերաբերյալ, և պահանջվեց, որ տվյալ անձինք դատաքննության ենթարկվեն»[8]:

1919 թ. մարտի 5-ին թուրքական իշխանությանը փոխանցվեց Մեծ Բրիտանիայի կառավարության պահանջը՝ ձերբակալել մեղադրյալներին. մարտի 9-ին ձերբակալվեցին պատերազմի տարիներին թուրքական կառավարության անդամ եղածները: «Մարտի 10-ին կալանավորվեցին վարչապետ Սայիդ Հալիմը, շեյխուլիսլամ Մուսա Քյազիմը… և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ»[9], իսկ գլխավոր մեղավորները՝ Թալեաթի ղեկավարությամբ, ինչպես ասվեց, ճողոպրել էին:

Երկարատև ձգձգումից հետո ի վերջո կազմվեց մեղադրական ակտ, որում նշվում էր, որ. «Իթթի-

Սողոմոն Թեհլիրյան

հատականներն օգտվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ իրենց գաղտնի ծրագիրը (խոսքը հայոց ցեղասպանության մասին է - Ա.Մ.) իրականացնելու համար»[10]: Նշվում էր նաև, որ հայերի ջարդերը եղել են ուղղորդված և վերահսկվել են ներքին գործերի նախարարության և անձամբ նախարար Թալեաթի կողմից:

«Ըստ մեղադրական եզրակացության՝ գլխավոր հանցագործներ էին համարվում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Բեհաեդդին Շաքիրը, դոկտոր Նազըմը.... և Սայիդ Հալիմը»[11]:

Չմանրամասնելով և անհարկի չծանրաբեռնելով նյութը՝ նշենք միայն, որ երիտթուրքական (իթթիհադ) կուսակցության և կառավարության անդամների դատավճիռը կայացվում է 1919 թ. հուլիսի 5-ին: Հեռակա կարգով դատավճիռ է կայացվում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, դոկտոր Նազըմի և ուրիշների նկատմամբ. այդ դատավճռով վերջիններս դատապարտվում են մահվան: Սակայն դատավճիռը մնաց թղթի վրա, քանզի երիտթուրքերի հետ համագործակցող քեմալական կառավարությունը ոչինչ չարեց նրանց ձերբակալելու և երկիր վերադարձնելու ու պատժելու համար: Ուստի ՀՀ-ում իշխող Դաշնակցությունը իր 9-րդ ընդհանուր ժողովում որոշեց հետամուտ լինել արդարադատության իրականացմանը և իրագործել երիտթուրք ցեղասպանների մահապատիժը «Նեմեսիսի» միջոցով:

Հարկ ենք համարում նշել նաև, որ 1919 թ. հունվարին Փարիզում ստեղծված «Տասնհինգի հանձնաժողովը» քննեց պատերազմական հանցագործությունները, այդ թվում՝ Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցածները, և մարտի 29-ին ընթերցվեց նշյալ հանձնաժողովի վերջնական զեկույցը, որի համաձայն՝ «Թշնամի երկրների այն բոլոր քաղաքացիները, որոնք խախտել էին մարդկային օրենքները կամ պատերազմական ավանդույթները, ենթակա են դատական հետապնդման»[12]: Այս հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ «Սևրի պայմանագրի մեջ ներառվել են հայերի կոտորածների մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու դրույթները՝ 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածները»[13]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Նեմեսիս» գործողությամբ գնդակահարված երիտթուրք պարագլուխները մեղավոր են ճանաչվել թե՛ Օսմանյան կայսրության դատարանի, թե՛ միջազգային այլ ատյանների կողմից, որը վերահաստատվել է նաև Սողոմոն Թեհլիրյանի (1921 թ. հունիսի 2) և Միսաք Թոռլաքյանի (1921 թ. հոկտեմբերի 6) դատավարությունների ժամանակ, երբ համապատասխանաբար գերմանական և անգլիական դատարանները նրանց անպարտ են ճանաչել և ազատ արձակել դատարանի դահլիճից, ինչը նշանակում է, որ դեռևս ավելի քան մեկ դար առաջ առաջադեմ մարդկությունը ճանաչել է արդարություն հաստատելու հայ ազգի իրավունքը, և Սողոմոն Թեհլիրյանը գերմանական դատարանում հենց այնպես չէր հայտարարում. «Ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ»[14]: Այո՛, Թեհլիրյանը մարդասպան չէր, որովհետև նա իրագործել էր մի դատավճիռ, որը կայացրել էին օսմանյան դատարանը, միջազգային հանրությունը, հայ ազգը..., Եվ գերմանական դատարանն իր վճռով հաստատել էր վերոնշյալ դատավճռի արդարությունն ու օրինականությունը՝ «Արդեո՞ք Թեհլիրեանը մարդ է սպանել» հարցին տալով «ո՛չ» պատասխանը[15]: Հաշվի առնելով այս փաստերը՝ հարց է առաջանում, թե ինչու՞ է Հայաստանի ներկայիս իշխանությունն այդքան սարսափում «Նեմեսիսից»: Թուրքիայի դեպքում պարզ է. թուրքական կառավարությունը վախենում է «Նեմեսիսից», որովհետև Թուրքիան ցեղասպան պետություն է, «Նեմեսիսն» էլ՝ ցեղասպաններին պատժելու միանգամայն օրինական գործողություն: «Նեմեսիսի» մեջ ի՞նչն է անհանգստացնում ու վախեցնում Նիկոլ Փաշինյանի իշխանությանը, արդյոք Հայաստանի ներկա իշխանությունը մտածում է, թե արել է մի բան, որն արժանի է պատժի, թե՛ նրանց խնդիրը Թուրքիային հաճոյանալն է՝ քննադատելով Դաշնակցությանը Թալեաթին, Ջեմալին, Սայիդ Հալիմին պատժելու համար: Իսկ միգուցե փաշինյանական կառավարության անդամները «Նեմեսիսից» դուրս նույն վրիժառուների ձեռքով պատժված հայ դավաճաններ Վահե Իհսանի, Հարություն Մկրտչյանի ու Ադուր Յասյանի մեջ իրե՞նց են տեսնում:

«Նեմեսիս» գործողությունն ավելի քան 100 տարի առաջ կատարել է իր դերն ու ավարտվել, մինչդեռ ՔՊ-ական իշխանությունը խոսում է գոյություն չունեցող «Նեմեսիսի»՝ իբրև վտանգներ պարունակող կազմակերպության մասին: Հետաքրքիր է, թե ո՞ւմ համար է վտանգավոր գոյություն չունեցող «Նե-

մեսիս» կազմակերպությունը, Թուրքիայի, թե՞ ՔՊ-ական իշխանության համար, այդ վտանգների պատճառով է, որ գործողությունից 100 տարի անց ՔՊ-ական պատգամավորը ոչ պաշտոնապես «ստանձնում է «Նեմեսիսի» կողմից դատաստանի ենթարկված Թալեաթի և մյուս ցեղասպանների փաստաբանի դերը... և կասկածի տակ է դնում նրանց նկատմամբ հաշվեհարդարների իրավական և բարոյական հարցը»[16], թե՞ ՔՊ-ական իշխանությունը նման դիրքորոշմամբ հող է նախապատրաստում հայոց ցեղասպանության պահանջատիրությունից հրաժարվելու համար:

Օտար դատարաններն անգամ արդարացրել են հայոց «Նեմեսիսի» մարտիկներին, իսկ «թուրքի հետ բարեկամության» այս մունետիկը հայտարարում է թե. «Մարդկանց սպանել են առանց դատ ու դատաստանի», մինչդեռ ««Նեմեսիսը» մեր ազգային արժանապատվության, մեր արյան վրեժի դատաստանն է, որի արժեքը քննարկման ենթակա չէ, վիճարկման ենթակա չէ, կասկածի տակ դնելու ենթակա չէ: Եթե այս գործողությունը դնում ես կասկածի տակ, ուրեմն 1915-ին տեղի ունեցածը ցեղասպանական ոճրագործություն լինելն ես դնում կասկածի տակ[17]»:

Մեր ազգային «Նյուրնբերգը» տարակուսելի համարող սույն պատգամավորը քաղաքական իշխանության ձեռքին խաղալիք դարձած իրավապահներին հրամաններ է տալիս, թե. «Քննեք ազգի վրիժառուների հարյուրամյա գործողությունը»: «Այսինքն՝ փաշինյանական իշխանության իրավապահները պետք է քննեն Թեհլիրյանի, Երկանյանի, Շիրակյանի գործողությունները, դրանց իրավական հիմքերը»[18]: Ինչո՞ւ, ինչ նպատակով իրավապահները պետք է 100 տարվա հեռավորությունից քննեն մեր ազգային արդարադատությունը, որի օրինականությունն անգամ օտարերկրյա դատարաններն են ճանաչել, միգուցե արդարացնելու համար դավաճանությունը, իսկ գուցե հանուն «թուրքի հետ բարեկամության» փաշինյանական իշխանությունը ներողություն խնդրի Թուրքիայից՝ հայ վրիժառուների կողմից երիտթուրք ցեղասպանների մահապատիժն իրագործելու համար:

Հայ վրիժառության խտացված մարմնացում Թեհլիրյանի խոսքերն են. «Կան դատեր, որոնց դատավճիռը չպետք է վստահել դատարաններին»[19]: Ինչո՞ւ է «Նեմեսիսի» անունն այսպես փոթորկում իշխանականների անդորրը[20], գուցե այն պատճառով, որ «Նեմեսիսը» հայոց ամենազորե՛ղ, անքննելի ու անժխտելի արդարադատությունն է, որից հայ ազգի և ո՛չ մի դահիճ չի կարող խուսափել, որովհետև այդ արդարադատությունը «կտակն էր նահատակներուն», իսկ «Նեմեսիսի» մարտիկները հայոց պատվի ու արժանապատվության հերոսներն են և կմնան այդպիսին հայոց բոլոր սերունդների հիշողության մեջ: Որքան էլ Հայաստանի ներկայիս թրքահաճո իշխանությունները փորձեն խամրեցնել հայ վրիժառուների կերպարն ու նսեմացնել «Նեմեսիսի» նշանակությունը, միևնույն է. «Լեռներու հովին ու բարձրութեան չեն հասնիր ճահճուտի ցեխը, անախորժ բոյրը, շատերը եղան, որոնք ցանկացան ցեխ շպրտել այդ բարձրութեան, բայց ցեխը չէր հասներ բարձրութեան և կ'իյնար իրեն նետողներուն վրայ»[21]:

Հղումներ

1. http://www.hayzinvor.am/34862.html:
2. Henry Morgenthaou., American Ambassador of Costantinopole from 1913 to 1916., Garden City New York doubleady, page & company 1918., p 342:
3. https://hraparak.am/post/b840a857cef6ebbfde7fae62f49d7032:
4. https://yerkir.am/hy/article/2022/12/23/5035:
5. https://mediamax.am/am/news/parzabanum/13970:
6. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի., Եր., 2011 էջ 22:
7. Տես նույն տեղում, էջ 46:
8. Տես նույն տեղում, էջ 51:
9. Տես նույն տեղում, էջ 55-56:
10. Անումյան Մ., նշվ.աշխ., էջ 72:
11. Տես նույն տեղում, էջ 72-73:
12. Անումյան Մ., նշվ.աշխ., էջ 54:
13. Նույն տեղում, էջ 54:
14. https://alikonline.ir/news/ideological/item/45905-%C2%AB%D5%A1%D5%B5%D5%B8%D5%9B,-%D5%A5%D5%BD-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4-%D5%A5%D5%B4-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC,-%D5%A2%D5%A1%D5%B5%D6%81-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6-%D5%B9%D5%A5%D5%B4%C2%BB:
15. Նույն տեղում:
16. https://hraparak.am/post/b840a857cef6ebbfde7fae62f49d7032:
17. Տես նույն տեղում:
18. Նույն տեղում:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:
21. «Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N 4:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի., Եր., 2011:
2. Henry Morgenthaou., American Ambassador of Costantinopole from 1913 to 1916., Garden City New York doubleady, page & company 1918:

բ) Համացանցային նյութեր

1. http://www.hayzinvor.am/34862.html:
2. https://hraparak.am/post/b840a857cef6ebbfde7fae62f49d7032:
3. https://yerkir.am/hy/article/2022/12/23/5035:
4. https://mediamax.am/am/news/parzabanum/13970:
5. https://alikonline.ir/news/ideological/item/45905-%C2%AB%D5%A1%D5%B5%D5%B8%D5%9B,-%D5%A5%D5%BD-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4-%D5%A5%D5%B4-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC,-%D5%A2%D5%A1%D5%B5%D6%81-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6-%D5%B9%D5%A5%D5%B4%C2%BB:

գ) Մամուլի նյութեր

1. «Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի, 1919, N 4:

«Նեմեսիս» գործողության ձեռնարկների արձագանքը պոլսահայ պարբերականների էջերում (1920-1922 թթ.)

Մարիամ Հովսեփյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
Գիտությունների ազգային ակադեմիայի ավագ գիտաշխատող

Հայկական հարցի և հայոց պետականության պատմության մեջ ուրույն տեղ են գրավում 1920-1922 թվականների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք ճակատագրական դեր են ունեցել հայ ժողովրդի հետագա պատմական ողջ ընթացքի վրա: Սկսած Սևրի պայմանագրից, թուրք-հայկական պատերազմից, Հայաստանի բռնի խորհրդայնացումից մինչև Փետրվարյան ապստամբություն՝ այս ամենի համատեքստում էր նաև 1919 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 30-ը Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում[1] «Նեմեսիս» պատժիչ գործողության[2] մասին որոշման ընդունումն ու դրա իրականացմանը ձեռնամուխ լինելը: Մեր այս հոդվածով փորձելու ենք ամփոփ ներկայացնել, թե ինչպիսին էր այդ գործողությունների արձագանքը պոլսահայ պարբերականների էջերում, և հատկապես ինչպիսին է եղել ձեռնարկների հասարակական հնչեղությունը: Մեր ուսումնասիրության շրջանակից դուրս կմնան այդ ծրագրի մանրամասները, քանի որ «Նեմեսիս» գործողության մասին մեզանում և սփյուռքում գրվել են բազմաթիվ վերլուծական հոդվածներ, աշխատություններ, հուշագրություններ:

Պետք է փաստել, որ Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը, դաշնակցական հայտնի և այդ գործողության մեջ ընդգրկված գործիչների նկատմամբ սկսված հալածանքները, նրանց մի մասի պարտադրված արտագաղթն օտար երկրներ և քաղաքական իրողությունների փոփոխությունը մեծապես խանգարում են «Նեմեսիսի» իրագործմանը: Այն մնում է անավարտ:

Անհրաժեշտ է նշել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում պոլսահայ բարձր վարկանիշ ունեցած կոնկրետ երեք օրաթերթերի (ՀՅԴ ոչ պաշտոնական օրգան «Ճակատամարտը»[3], ռամկավարների ոչ պաշտոնական խոսափող «Ժողովուրդի ձայնը-Ժամանակը», չեզոք պարբերական «Վերջին լուրը») նյութերի քննական վերլուծությունը մեզ թույլ է տալիս հանգելու այն եզրակացությանը, որ այդ պարբերականների աշխատակիցներն ու ընթերցողների լսարանը գրեթե անտարբերությամբ է կարդացել մեկ այլ դավաճանի՝ Վահե Իհսանի[4] սպանության լուրը: Չկա որևէ արձագանք կամ վերլուծական հոդված դրա կապակցությամբ: Միայն «Ճակատամարտի» համարներից երկուսում «Ընթացիկ կյանք» խորագրի ներքո փոքրիկ լուրեր են տպագրվել այդ ձեռնարկի մասին, որոնցում այն չի դիտարկվել իբրև վրեժխնդրության արտահայտություն, այլ ներկայացվել է որպես ընթացիկ տեղեկատվություն, թեև այս ձեռնարկը[5] հատուցման գործողությունների առաջին դրվագների շարքում էր[6]:

Այդ անձնավորության սպանության հաջորդ օրը «Ճակատամարտը» գրում է. «Երէկ առտու ժամը ութի ատենները Բերա, Թարլա Պաչի պօղոտայէն անցած ժամանակ, անծանօթի մը կողմէ սպաննուած է Վահէ Իհսան անուն անձ մը: Սպաննիչը չէ ձերբակալուած»[7]: Թերթի հաջորդ համարում նույն թեմայի վերաբերյալ ծաղկաքաղ էր արված մայրաքաղաքի թուրքական թերթերից[8]: Թուրք լրագրողներն առաջ էին քաշում այդ սպանությունը կատարելու հարցում վրեժխնդրության վարկածը, ինչը «Ճակատամարտը» ոչ հաստատում էր, ոչ՝ հերքում[9]: Հիշյալ թուրքական թերթերից մեկը նշում էր, որ Վահե Եսայանի կամ Իհսանի սպանության՝ «վրէժխնդրական արարք մը ըլլալը կը հաստատուի անով, որ սպաննուածը գէշ համբաւ կը վայելէր պատերազմի շրջանին և իր պաշտօնն ու ազդեցութիւնը չարաչար գործածած էր՝ մեծ վնաս հասցնելով իր հայ հայրենակիցներուն»[10]: Թուրքական մեկ այլ թերթ կառավարության լրտես էր համարում Իհսանին, որն իբրև այդպիսին «նուազ համակրութիւն կը վայելեր»[11]:

Վերոնշյալ պոլսահայ պարբերականների էջերում Վահե Իհսանի սպանության լուրի հպանցիկ անդրադարձը և միևնույն ժամանակ հայոց ցեղասպանության պատճառահետևանքային կապերի վերհանմանը նվիրված բազմաթիվ հրապարակումները կարծես ցույց էին տալիս, որ տվյալ պարագայում Մեծ եղեռնը հայ հասարակությունը դավաճանների գործելակերպով չէր պայմանավորում, այլ հասկանում էր, որ արևմտահայերի տեղահանությունն ու ջարդերը նախապես ծրագրված էին եղել թուրքական իշխանությունների կողմից:

Այս առումով բոլորովին այլ էր այդ օրաթերթերի վերաբերմունքը Սայիդ Հալիմի[12] և Մեհմեդ Թա-

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

ՕՐԱԹԵՐՔ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Téléphone Péra No. 927

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐ ԿԿՈՐՈՍԻ ՄԷՋ

ԱՄԱՆՈՍ ՅՈՇԵԱՅԱՆՆԵՐ

ԲԵՆԷԼ ԷՖԷՆԴԻ

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՒԼԻՐՅԱՆ

ՍԱՅԻԴ ՀԱԼԻՄԻ ԵՒ ՄԵՀՄԵԴ ԹԱԼԵԱԹԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՄԵՂԱՆՔ ԵՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆՄԵՂԱՆՔԻ ՄԱՍԻՆ

100 ՓԱՐԱ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆԸ

ՊԵԼԵՏԻՆ ԹԻՊԸ 468

ՀԻՄՆԱԴԻՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԻՄԼԻՔ ՏՈՍՈՒՆԵՐՆԵՐՆ (ՄԱՍԻ)

TÉLÉPHONE PÉRA 468

ԹԻՒ 4378

ՀԱՅ ԿԵՍԸՔԸ ՍԻՊԱՅԻ ՄԷՋ

(Մեր Մասնաւոր Թղթակցին)

ՍՊԳԵ, 2 Մարտ 1922

մը թալանն ու կողոպուտը վերագրել մէկ քանի տասնեակ արիւնարբու դիւահարներու և զանոնք պատժելով՝ արդարութիւնը գործադրուած նկատելը առնուազն ծիծաղելի պիտի ըլլար և բնաւ պիտի չհամապատասխանէր գործուած ահաւոր ոճիրին մեծութեան»[24]:

«Ճակատամարտը» համամիտ էր ֆրանսիացի լրագրող Օգյուստ Կովեի արտահայտած մտքերի հետ, որոնք նա ներկայացրել էր ֆրանսիական թերթերի մեկում: Նյութը թարգմանաբար տպագրվել էր «Ճակատամարտում»: Հեղինակը գեղեցիկ մահ էր համարում Թալեաթի վախճանը, թեև կարծում էր, որ դա քիչ էր նրա համար: Նա դա հիմնավորում էր հետևյալ կերպ. «Թալէաթը մէկուկէս միլիոն հայերու բնաջնջման հրաման տուողն է: Անտարակոյս, իբրև հաւանող և մեղսակից ունեցած է Իթթիհատի կառավարութեան և քօմիթէին միւս անդամները և գերման դեսպանատունը: Առանձին չէր գործեր...Որոշած էր ջնջել հայկական խնդիրը կայսրութեան մէջէն՝ հայերը բնաջնջելով... Ան անձնատուր եղաւ համիսլամական և թուրանական քաղաքականութեան»[25]:

Պոլսահայ վերոհիշյալ պարբերականները իրենց հրապարակումների մեջ տեղ էին հատկացրել նաև Սողոմոն Թեհլիրյանի դատավարությանը[26]: Դրանցում, բնականաբար, հավատ կար եվրոպական արդարադատության նկատմամբ: Պարզ է, որ Թեհլիրյանի արդարացումը դատարանի կողմից և 1921 թվականի հունիսի 4-ին նրա ազատ արձակումը ցնծության առիթ էր ոչ միայն այս թերթերի խմբագրությունների աշխատակիցների, այլև աշխարհասփյուռ հայության համար: Տեղին է մեջբերել հետևյալ հատվածը «Վերջին լուր» օրաթերթից. «Մենք կը սպասէինք այս վճիռին, քանի որ... Թուրքիա գտնուող բազմաթիւ գերման սպաներ ու քաղաքացիներ աչքովնին տեսած էին անլուր խժդժութիւնները, և երբ զոհերէն մին, հրազէնը բարձրացնելով, իր կորսուած ընտանիքին վրէժը լուծեց ամբողջ ազգի մը ջարդարարէն, Պէրլինի դատաւորները չէին կրնար արդարութենէ շեղիլ՝ դատապարտելով Աստուծոյ կողմէ զինուած այդ մարդը, որ կուգար միջոցն ըլլալ թէ՛ մարդկութեան և թէ՛ իր կառավարութեան կողմէ վճռուած մահապարտի մը պատիժին գործադրութեան»[27] Ընդ որում, հատկապես նշվում էր, որ Թալեաթը, թեև «մարդկութեան առջև արդէն դատապարտեալ մըն էր իբր հայոց մեծագոյն ոճրագործներէն մին»[28], բայց նա նաև մահվան էր դատապարտվել Օսմանյան կայսրության դատարանի կողմից:

«Ճակատամարտ» օրաթերթում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին առաջին թղթակցություններից մեկում նույնպես մեջբերել էին ընդհանուր դատախազի այն խոսքերը, թե «նոր թուրք կառավարութեան կողմէ Թալէաթ մահուան դատապարտուած էր»[29]: Տպագրել էին նաև դատավարության սղագրությունից կարևոր հատվածներ: Դրանց մեջ կարևոր էր մասնավորապես Թեհլիրյանի պատասխանն այն հարցին, թե չգիտեի՞ր, որ գերմանական օրենքով արգելված է մարդասպանությունը: Նա իրեն մեղավոր չէր համարել. «Ես մարդասպան մը չեմ»[30]: Իսկ հայկական մամուլն ու հայ ժողովուրդը նրան առ այսօր հերոս է համարում, հերոս, ում նմանների շնորհիվ հայությունը գլխահակ չի կանգնում իրեն հայրենիքի մեծ մասից ժամանակավորապես զրկած, իր բազմահազար ազգակիցներին կոտորած թուրք հանրույթի առաջ:

Նման հայորդիների շարքում է նաև «Նեմեսիս» գործողության մեջ ընդգրկված անվեհեր վրիժառու Արշավիր Շիրակյանը: 1920 թվականի մարտի 27-ին Կ.Պոլսում Վահե Իհսանին մահապատժի ենթարկելուց հետո նա 1921 թվականի դեկտեմբերի 5-ին գնդակահարում է Հռոմում թաքնվող Սայիդ Հալիմ փաշային: «Վերջին լուրը» համառոտ ներկայացնելով թուրքական թերթերի տեսակետներն այս դեպքի առիթով՝ նաև իր կարծիքն էր հայտնում թուրքական իշխանությունների հակահայ քաղաքականության մասին[31]: Այդ թերթերից մեկը գրում էր. «Հալիմ փաշայի սպանութեամբ մէկ տարուան մէջ երկու եպարքոս վրէժխնդրութեան զոհ կ'երթան: Նախկին եպարքոս Թալէաթ փաշայ ալ Պերլինի մէջ Թէհլիրեանի կողմէ նահատակուեցաւ, և գերման երդուեալները անպարտ արձակեցին զայն... Հայ մըն է սպաննիչը»[32]: Մեկ այլ թուրքական պարբերականից թարգմանված թղթակցության մեջ հայ վրիժառուներին մեղադրում էին արևմտահայերի տարագրությանը և ջարդերին իբրև թե անմասն մնացած Սայիդ Հալիմի սպանության համար[33]: Սպանված նախկին վարչապետի տղան՝ Հալիմ Սայիդը, թուրքական մամուլին հայտնել էր. «Անկասկած ոճրագործը հայ քօմիթէներուն մէկ գործիքն է: Ոճիրէն անմիջապէս յետոյ հայերէն թերթերը կը պնդէին, որ Սայիտ Հալիմ տեղահանութեան և ջարդի մեղսակից է: Իսկ յետոյ ելան գրեցին, թէ ասպարէզէ քաշուած եգիպտացի իշխան մը սպաննելու չափ անխելք հայ մը չի կրնար գտնուիլ: Այս


ԳԻՆ 100 ՓԱՐԱ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՆԱԹԵՐԹ

Հեռաձայն 3235 ◆ ՂԱԼԱԹԻԱ, ԲԻՐԻՆԶԻԼԻ ԿՌՈ, ՊԻԼՈՐ ՓՈՂՈՑ, ԹՎ 12 ◆ Téléphone Péra 3235

ՀԱՆԴԻՍԱՑԱՐՔԸ

ՌՈՒՍԱՑՈՒՄԸ

ԿԵՆԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ

ՀՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ

վիճակը ուշագրաւ է: Հայ թերթերը մինչ առաջ հայրս կ՚ամբաստանէին, որպէսզի ոճրագործը արդարացնեն, ետքը, երբ ան չի ձերբակալուեցաւ, սկսան գրել, թէ հայ չէ»[34]:

«Վերջին լուրն» այս ամենին այսպես էր արձագանքում. «Մենք ձանձրացանք պատասխանելէ թուրք թերթերու հակահայ հրատարակութեանց, որոնք կը թոյլատրուին զարմանալի մտայնութեամբ մը: Ուրախ ենք մատնանշելով, թէ ի՛նչպէս այսքան աղէտներէ ետք թուրք թերթերը կը համարձակին տակաւին պաշտպանել և արդարացնել տեղահանութեան և հետևաբար ջարդի քաղաքականութիւնը»[35]: Համարներից մեկում թարգմանաբար տպագրել էր իտալական մամուլի անդրադարձը Սայիդ Հալիմի սպանությանը[36]: Դրանում վերլուծելով տեղի ունեցածը՝ եզրակացվում էր, թե սպանությունը «մանրամասնօրէն կազմակերպուած էր և չէր կրնար սեպուիլ անհատական արարք մը»[37]: Իտալացի լրագրողները կարծում էին, որ «իսկապէս ճարտարօրէն կատարուած մահափորձ մըն է ասիկա»[38]:

Իր հերթին «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը, թարգմանաբար տպագրելով մայրաքաղաքի թուրքական թերթերի արձագանքը Սայիդ Հալիմի սպանությանը՝ առանց մեկնաբանության ներկայացնում էր դրանց տեսակետն առ այն, որ այդ ձեռնարկը «հայ գաղտնի ընկերութեան մը անդամներուն գործն է»[39]: Թուրքական թերթերը մտածում էին, որ «Էնվէր և Ճէմալ փաշաներն ալ այդ կերպով պիտի սպաննուին, ինչ-որ այդպիսի ընկերութեան մը գոյութիւնը իրապէս կ՚ապացուցանէ»[40]:

«Ճակատամարտ» օրաթերթը բավական հանգամանորեն էր լուսաբանել Սայիդ Հալիմի սպանության հանգամանքները՝ ասես փորձելով խճճել պատժիչ գործողությունը կատարած անձի փնտրտուքները: Մեջբերում էր իտալական թերթերից մեկի հրապարակումից մեկ հատված, որում արվել էր «ենթադրութիւն մը, որ բաւական հիմնաւոր կը թուի, այն է, թէ Սահիտ Հալիմ փաշայի սպանութիւնը կազմակերպուած է Ժընէվի Հայ հայրենասէրներու կոմիտէին կողմէ»[41]: Հանդես էր գալիս նաև «մաղթանքով». «Մենք կը մաղթենք, որ գտնուի վերջապէս առաջնորդող թելը, որովհետև ոճրագործութիւնը, մանաւանդ իր քաղաքական հանգամանքով, պէտք չէ, որ անպատիժ մնայ»[42]:

«Ճակատամարտը» ներկայացրել էր թուրքական շրջանակներում շրջանառվող «սև ցանկի» ոչ պաշտոնական վարկածը, որն արտահայտված էր թուրքական մամուլում մասնավորապես՝ 1922 թվականի ապրիլի 17-ին Բեռլինում Արշավիր Շիրակյանի և Արամ Երկանյանի կողմից Ջեմալ Ազմիի և Բեհաեդդին Շաքիրի սպանություններից հետո: Թարգմանաբար տպագրված այդ թղթակցության մեջ թուրք լրագրողը, անդրադառնալով Թալեաթ և Սայիդ Հալիմ փաշաների, Բեհբութ խան Ջիվանշիրի սպանություններին, նշում էր. «Այս ոճիրներուն շարունակութիւնը և յաջորդականութիւնը այլևս ոչ մէկ կասկած կը թողուն, թէ կազմակերպուած և կանոնաւոր ծրագրով մարմին մը գոյութիւն ունի: Սահիտ փաշայի սպանութենէն ետք «Պոսֆոր» խօսած էր սև ցանկի մը մասին, որուն մէջ յիշուած էին նաև Պէհաէտտին Շաքիր և Ճէմալ Ազմի պէյերու անունները»[43]: Առաջարկում էր նաև ամեն կերպ նպաստել թուրքական պետության անկախությանը և անձեռնմխելիությանը, որպեսզի կարողանային դեմս առնել նախկին «անմեղ»[44] բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ իրականացված «հանցագործությունների»[45]:

«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը նույն սպանությունների առիթով նույնպես ներկայացնում էր թուրքական մամուլի օրգանների արձագանքը, որոնք Ջեմալ Ազմիին և մյուս սպանվածներին համարում էին նահատակներ, հայրենիքին ծառայած նվիրյալներ ու անմեղ զոհեր[46]: Սպանությունը կատարած երկու անձանց, որոնք խույս էին տվել ոստիկանների հետապնդումից, հայ էին համարում թե՛ թուրքական թերթերը, թե՛ Բեռլինի ոստիկանությունը: Հետաքրքիրն այն էր, որ ակամա ընդունում էին սպանվածների մեղավոր լինելը հայության առջև, գրելով, թե նրանք իբրև թե խաղաղության վերջնական պայմանագրի կնքվելուց հետո պետք է վերադառնային Կ.Պոլիս՝ «թուրք արդար դատարանի մը առջև տալու համար պատերազմի ընթացքին իրենց գործունէութեան հաշիւը»[47]:

«Վերջին լուր» օրաթերթի սեփական թղթակիցը Բեռլինից մանրամասներ էր հաղորդում կատարվածի մասին՝ պատկերացում տալով հասարակական կարծիքի մասին, որի համաձայն՝ այս սպանության ձեռնարկները հայերի վրեժի արտահայտություն էին: Մասնավորապես այդ թղթակցության մեջ կարդում ենք հետևյալը. «Ոստիկանութիւնը և Պերլինի ամբողջ մամուլը միաձայնութեամբ կը յայտարարեն, որ ինչպէս ասկէ առաջ Թալէաթ, այս անգամ ալ անկասկած այս երկու թուրքերը վրիժառութեան զոհեր են, որովհետև ասոնք ալ հայկական տարագրութեանց և ջարդերու մէջ առաջնակարգ դեր մը կատարած են»[48]:

1922 թվականի կեսին պոլսահայ պարբերական-

ներն ավելի զգուշավոր էին դարձել երիտթուրքական պարագլուխների սպանությունների թեմային անդրադառնալիս: Պատճառներն առավել քան հասկանալի էին: Աշխարհաքաղաքական նոր հագամանքներն էին ստիպում աշխարհասփյուռ հայությանը, այդ թվում՝ Թուրքիայում դեռևս մնացած հայերին, ավելի չափավոր լինել իրենց քաղաքական պահանջների մեջ: Թվարկենք այդ պատճառներից հիմնականները. քեմալականների վերջնական հաղթանակ, Հայաստանի խորհրդայնացում և խորհրդային կայսրապետության կայացում, Հայկական հարցի լուծման հետ կապվող հույսերի նվազում:

Բնական էր այն ինքնապաշտպանական մղումը, որով պոլսահայ վերոնշյալ պարբերականները գրում էին 1922 թվականի հուլիսի 21-ին Թիֆլիսում Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի կողմից[49] «Նեմեսիսի» զոհերից Ահմեդ Ջեմալի[50] սպանության մասին: Երեք օրաթերթն էլ դա վերագրում էին ոչ թե հայ վրիժառուներին, այլ խորհրդային իշխանությունների կողմից ուղարկված մարդասպաններին: Այդ ժամանակահատվածում, ինչպես վկայում էին պարբերականների հրապարակումները, խորհրդային իշխանությունները պայքարում էին իրենց համաիսլամական ընդհանուր ընդվզման դեմ, և այդ ծիրում նաև Էնվեր ու Ջեմալ փաշաների գործունեությունն էր նրանց անհանգստացնում: Ահա թե ինչ էր թարգմանաբար արտատպել Կ.Պոլսում հրատարակվող թուրքական թերթերից «Վերջին լուրը». «Շատ կարելի է, որ Ճէմալ սպաննուած ըլլայ Իսլամական միութեան թշնամի քսմիթէի անդամի մը կողմէ: Կը թուի, թէ այդ քսմիթէն շատ կը վախնար, որ Ճէմալ Աֆղանիսթանի մէջ կը խաղայ այն դերը, զոր կը խաղայ Էնվէր Պուխարայի մէջ: Եթէ այս լուրը ճիշդ է, սպաննիչին անձը բնաւ կարևորութիւն չունի: Այս պարագային անիկա Սովիէթներու մէկ գործիքն է միայն»[51]: Գրեթե նման եզրակացությամբ նյութ կար «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթում[52]: «Ճակատամարտը» ևս համակարծիք էր. «Կ'ըսուի, թէ Սովիէթներու կողմէ մասնաւոր մարմին մը խիստ կերպով կը հետապնդէ համաթուրանականութեան առաջնորդները»[53]: Տպագրել էր նաև թուրքական թերթերի տեսակետներն այդ սպանության վերաբերյալ: Ըստ թուրք լրագրողների կարծիքի՝ հայերն էին վրեժ լուծել Ահմեդ Ջեմալից. «Գալով հայերէն թերթերուն՝ անոնք աւելի շատ կը զբաղին ոճրագործով և սպանութիւնը կը վերագրեն պոլշևիկներուն: Բացայայտ է, թէ ասիկա որքան անիմաստ է...Նկատելով, որ Իթթիհատի ղեկավարները մէկիկ-մէկիկ սպաննուած են հայերու կողմէ՝ կարելի է վճռել, որ Ճէմալ փաշա ևս զոհ եղած է հայերու ոխակալութեան և վրէժին»[54]:

«Ժողովուրդի Ձայնը-Ժամանակ» օրաթերթում թարգմանաբար թուրքական մամուլից մեջբերված հատվածներում բացահայտ սպառնալիք կար՝ ուղղված այդ սև շարքի շարունակվող ձեռնարկների հեղինակ հայ գաղափարական խմբակի անդամների և հանձինս նրանց՝ հայ ժողովրդի հասցեին: Դրանցից մեկում կարդում ենք. «Այս մահափորձերը նոր խմորումներ, նոր ջղաձգութիւններ, նոր պայքարներ պիտի հրաւիրեն...Այսպիսի քաղաքական ու ցեղային դէպքերու ուրիշ մէկ երևոյթն ալ պէտք է նկատողութենէ չհեռացնել. տրամաբանական է, որ ամէն գործ իր հակազդեցութիւնը կ'ունենայ: Հետևաբար վախ կայ, որ Պաքուի կամ Պերլինի մէջ մարդ սպաննողներուն պատիժը ուրիշ անմեղներ կրեն»[55]: Թուրք լրագրողները պահանջում էին, որ օրենքի առաջ պատասխան տային թուրք պետական ու կուսակցական գործիչներին սպանող հայերը՝ մոռանալով, որ միլիոնից ավել հայ էր դաժանաբար սպանվել, հազարավորներն էլ բռնի տեղահանվել էին հայրենի երկրից, հայրենազրկվել էին ու անվերադարձ վտարվել հարազատ եզերքից՝ հայոց հայրենիքի տարածքներում թուրքական պետության պահպանման մոլուցքին և մարդկության դեմ ուղղված ցեղասպանության հանցագործությանը զոհ գնալով:

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք փաստել հետևյալը:

- «Նեմեսիս» գործողությունը մնաց կիսատ, բայց Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուների ոչնչացումը կարծես վերահաստատեց հայ ժողովրդի հանդեպ իրականացված ոճրագործության կազմակերպիչների նկատմամբ արդար դատի անհրաժեշտությունը: Դրանք, ինչպես Հրաչ Տասնապետյանն է իրավացիորեն բնորոշել, հայության երեսից սրբել են «ոչխարային համակերպութեամբ դէպի սպանդանոց քալած ըլլալու ամոթանքը»[56]:
- Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում հրատարակված պոլսահայ բարձր վարկանիշ ունեցող ռամկավարների ոչ պաշտոնական գաղափարախոս «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», չեզոք «Վերջին լուր» և ՀՅԴ ոչ պաշտոնական օրգան «Ճակատամարտ» օրաթերթերն անդրադարձել էին «Նեմեսիս» գործողության գրեթե բոլոր առանցքային ձեռնարկներին հիմնականում լուրի և թղթակցության միջոցով: Չէին նշել, թե ինչ կառույցի նախաձեռնությամբ էին դրանք կյանքի կոչվել, քանի որ բացի վերջին պարբերականից՝ մյուսները հնարավոր է, որ չէին իմանում բուն կազմակերպիչ կառույցի անունը:
- Վերոհիշյալ թերթերն այդ ձեռնարկները համարել էին ոչ թե մարդասպանություն, այլ հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչների արդար պատիժ, որի համար հայ վրիժառուները չպետք է ենթարկվեին պատասխանատվության օրենքի առաջ, քանզի նրանք վրեժից բացի՝ իրագործել էին օսմանյան ռազմական դատարանի կողմից այդ մարդասպանների նկատմամբ կայացված մահապատժի դատավճիռները: Պարբերականների հրապարակումները նաև վկայում էին, որ հենց նման կերպ էր հայ հանրությունն ընկալել Թալեաթի ու նրա գործընկերների սպանությունը:
- Պարբերականների նյութերում որպես հերոս էին ներկայացվել Թալեաթի և մյուսների մահվան դատավճիռներն իրականացրած հայորդիները, որոնք ոչ միայն անձնական վրեժ էին լուծել, այլև կարծես դարձել էին հայրենազրկված ու ցեղասպանված մի ողջ ժողովրդի օրհնությամբ նրանց վերջին պատգամն իրականացրած անձինք: ■

Հղումներ

1. Հակոբյան Ա., «Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ» (տե՛ս «Հայոց պատմություն», հ.4, գ.1, Ե., 2010, «Զանգակ-97» , էջ 233):
2. Նշվ. աշխ., էջ 233-234:
3. «Ճակատամարտը» համարվում է 1909-1915 թվականներին Կ.Պոլսում լույս տեսած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդը, թեև հրատարակվել է արդեն որպես ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգան:
4. Դավաճան Վահե Իհսանին (Եսայանին) 1920 թվականի մարտի 27-ին Կ.Պոլսում սպանել է Արշավիր Շիրակյանը:
5. Տե՛ uhttps://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D5%B4%D5%A5%D5%BD%D5%AB%D5%BD_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 (Մուտք՝ 05.02.2023): Մելքոնյան Ամի, «Դավաճանները հայոց պատմության մեջ» Տե՛ uhttps://horizonweekly.ca/en/%D5%A4%D5%A1%D6%82%D5%A1%D5%B3%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A7%D5%BB/ (Մուտք՝ 05.02.2023):
6. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1920, թիվ 415, թիվ 416:
7. Նույն տեղում, 1920, թիվ 415 («Վահե Իհսան սպանված»):
8. Նույն տեղում, 1920, թիվ 416:
9. «Ճակատամարտի» այս կեցվածքը հասկանալի է այսօր, քանի որ վերջին տարիներին վերհանված արխիվային փաստաթղթերից և արված ուսումնասիրություններից պարզվել է, որ այս օրաթերթի խմբագրատունը «Նեմեսիսի» կազմակերպչական ընդհատակյա կենտրոնատեղիներից մեկն է եղել՝ Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» պարբերականի խմբագրության հետ (տե՛ս Խանումյան Գ., «Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը» («Վեմ», Ե., 2019, թիվ 4 (68), էջ 67): Բնական է, որ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում տպագրվող «Ճակատամարտը» պետք է չափազանց զգույշ լիներ «Նեմեսիս» գործողության ձեռնարկներին անդրադառնալիս, որպեսզի թուրքական հատուկ ծառայությունների թիրախում չհայտվեր և հանկարծ չբացահայտվեր բուն ծրագիրը:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Սայիդ Հալիմը 1913-1918 թթ. Օսմանյան կայսրության վարչապետն էր, եղել է նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղարը: Տե՛ս http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_said_halim (Մուտք՝ 04.02.2023): Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Ե., 1996, «Հակոբ Մեղապարտ» տպագրատուն, էջ 397:
13. Մեհմեդ Թալեաթը 1918 թվականին եղել է Օսմանյան կայսրության վարչապետն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահը, մինչ այդ ներքին գործերի, փոստի և հեռագրության նախարարն էր, ինչպես նաև Հայոց ցեղասպանության կազմակերպիչների եռյակում էր Իսմայիլ Էնվերի ու Ահմեդ Ջեմալի հետ (տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 137):
14. Արամ Երկանյանը Թիֆլիսում 1920 թվականի հունիսի 19-ին գնդակահարում է Ֆաթալի խան Խոյսկուն, իսկ 1921 թվականի հուլիսի 19-ին Միսաք Թոռոլաքյանը Կ.Պոլսում սպանում է Բեյբուդ խան Ջիվանշիրին: Նրանցից առաջինը 1918 թվականի սեպտեմբերին Բաքվում և 1920 թվականի մարտին Շուշիում հայերի կոտորածների կազմակերպիչն էր, իսկ երկրորդը Բաքվի հիշյալ ջարդերի ծրագրողներից էր (տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 234, 235): Վրեժխնդրության այս ձեռնարկների մասին պոլսահայ պարբերականների էջերում հանգամանալից անդրադարձի չհանդիպեցինք մեր ուսումնասիրության ընթացքում:
15. «Թուրքիայի Հանրապետության պատմություն», Ե., 2018, «ՎԱՎ-պրինտ», էջ 16:
16. «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1921, թիվ 4051 («Վրիժառուն»):
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում:
19. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, թիվ 2132 («Թալեաթ»):
20. Նույն տեղում:
21. Նույն տեղում:
22. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, թիվ 708 («Թալեաթ փաշայի սպանությունը հայ ուսանողի մը կողմե»):
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում («Թալեաթի սպանությունը»):
25. Նույն տեղում, թիվ 712 («Գեղեցիկ մահ մըն է դարձյալ իրեն համար»):
26. Պետք է նկատի ունենալ, որ «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը, թեև հերոս էր համարել Սողոմոն Թեհլիրյանին (տե՛ս «Ճակատամարտ», Կ.Պոլիս,1921, թիվ 4120), բայց թռուցիկ էր անդրադարձել նրա դատավարությանը:
27. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, թիվ 2195 («Թեհլիրյան ազատ արձակվեցավ»):
28. Նույն տեղում:
29. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, թիվ 774 («Դատավարությունը սկսած»):
30. Նույն տեղում:
31. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, թիվ 2357 («Թուրք թերթերը հայոց կվերագրեն մահափորձը»):
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում, 1921, թիվ 2371 («Սայիդ Հալիմի դիակը Պոլիս պիտի բերվի»):
35. Նույն տեղում, 1921, թիվ 2357 («Թուրք թերթերը հայոց կվերագրեն մահափորձը»):
36. Նույն տեղում, 1921, թիվ 2362 («Սպանությունը կազմակերպված էր լայն սահմանի մեջ»):
37. Նույն տեղում:
38. Նույն տեղում:
39. «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 1921, թիվ 4260 («Սայիդ Հալիմ փաշայի սպանության շուրջ»):
40. Նույն տեղում:
41. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, թիվ 946 («Ինչ կ՚ըսեն իտալական թերթերը Սայիդ Հալիմի սպանության և սպանիչի մասին»):
42. Նույն տեղում:
43. Նույն տեղում, 1922, թիվ 2864 (Սպանությունը և թուրք մամուլը»):
44. Նույն տեղում:
45. Նույն տեղում:
46. «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1922, թիվ 4367 («Թուրքերուն ողբուկոծը»):
47. Նույն տեղում:
48. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1922, թիվ 2474 («Ձերբակալված հայերուն շուրջ»):
49. Հակոբյան Ա., նշվ.աշխ., էջ 236:
50. Ահմեդ Ջեմալը եղել է Օսմանյան կայսրության ծովային նախարար և երիտթուրքական իշխող եռյակի անդամ՝ Թալեաթ և Էնվեր փաշաների հետ (տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 382):
51. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1922, թիվ 2551 («Ջեմալ փաշա կանասատե Մոսկվայի հրամանին պոլշևիկները սպանել տվեր են զայն»):
52. «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1922, թիվ 4444 («Ջեմալ փաշայի սպանության շուրջ»):
53. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1922, թիվ 2947 («Ջեմալ փաշա սպանված է բոլշևիկներու ձեռքով»):
54. Նույն տեղում, 1922, թիվ 2949 («Ջեմալ փաշայի սպանության շուրջ»):
55. «Ժողովուրդի ձայն- Ժամանակ», Կ.Պոլիս, 1922, թիվ 4443 («Ջեմալ փաշայի սպանությունը»):
56. Տասնապետեան Հրաչ, «Հ Յ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհ. ժողով (1890-1924)», Աթէնք, 1988, «Դրոշակի» տպարան, էջ 163:

Դարձ դէպի հայրենիք

(հեղինակ՝ Մարգար Շարապխանեան, Երեւան, 2003)

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Եօթանասուն տարի երազը կարողացանք պահել.
տեսնենք՝ հիմա իրականութիւնը պիտի կարողանանք պահել:
Մովսէս Պէչաքճեան

Լաւ կառավարուած երկրի մը մէջ աղքատութիւնը բան մըն է, որմէ պէտք է ամչնանք: Գէշ կառավարուած երկրի մը մէջ հարստութիւնը բան մըն է, որմէ պէտք է ամօթ զգանք:
Կոնֆուցիոս

Այս հատորը Մարգար Շարապխանյանի 1977-2003 թթ. Հայաստան ինը այցելությունների, նրա հանդիպումների, ապրումների, խոհերի, ձեռքբերումների, կորուստների պատմությունն է:

Այդ ուղևորությունների ընթացքում հեղինակից անբաժան են եղել տիկին Էլիզը և համաշխարհային, հայ մշակույթի մեծերը…

Խորհրդային Հայաստանն ու Հայաստանի Հանրապետությունը պատմական իրողություններ են, որոնք հայ ժողովրդի համար եղել են դարերով երազած ԱՊԱԳԱ ու հիմա սփյուռքահայի ճակատագրի մատյանում դարձել են ՏՈՒՆ: Հեղինակը հեռու է ինքնախաբեությունից, տեսածը, կարդացածը, լսածը դիտարկում է «Հայաստան ամէն բանէ վեր» (Շավարշ Նարդունի, էջ 5) անխախտ սկզբունքով:

«Ազգովին ո՞ւր կ'երթանք: Ո՞ւր պիտի հասնինք այսպէս, քիչերուն հոգն է կարծես» (էջ 6),— սա Մարգար Շարապխանյան մարդու, հայի ամենամեծ մտահոգությունն է: Հեղինակի միտքն ու հոգին տագնապեցնող այս հարցը, դժբախտաբար, արդիական է նաև մեր օրերում՝ գրքի հրատարակությունից երեսուն տարի անց…

Մարգար Շարապխանյան հայը այս երեսուն տարիների՝ 1977-2003 թթ., եզրագծերում տեսնում է սաղմերն այն ապազգային երևույթների, որոնք այսօր դրսևորվում են որպես քաղաքական ծրագիր… Հեղինակը պնդում է, որ իր գրքի էջերը պիտի դառնան «գալիք պայծառ օրերուն» առաջաբանը (էջ 10):

Տա՜ ԱՍՏՎԱԾ…

Բայց եկեք հեղինակի հետ անցնենք աշխարհի մի ծայրից մյուս ծայրը ձգվող ճանապարհները, տեսնենք ծանոթ ու անծանոթ մարդկանց, լսենք գրողի մտորումները և փորձենք այս ամենից դուրս գալ նույնքան հուսավառ ու խանդավառ, որքան պարոն Մարգարը…

Երևան հասած ամեն սփյուռքահայ կամա թե ակամա ամենուրեք Արարատ է փնտրում, ու նրա գոյությունը մի քանի շաբաթով դառնում է մտովի կամ բարձրաձայն զրույց Լեռան հետ: Չեմ մոռանա լոսանջելեսաբնակ ամուսինների զարմանքը, երբ Մուղնիից վերադառնալիս ցույց տվեցի Արարատը… Օրեր շարունակ մայրաքաղաքում փնտրել ու չէին գտել, ու հիմա չգիտեին՝ հավատային երջանկությանը, թե՞ չէ…

Ծանր խոհեր և լքվածության զգացումն են համակում սփյուռքահային, որը չի ուզում անհաղորդ մնալ Հայրենիքի ու հայաստանաբնակների հոգսերին, երազում է ճակատը մաքրել «հինէն մնացած հընգատառ ու անպատկառ» բառից, «յուսալի հոգիներ» ու «տաք սրտեր» է փնտրում, չի գտնում, բայց չի կորցնում ապրելու և «մանաւանդ ապրեցնելու» հույսը: «Ակնարկդ կը սևեռես ձիւնափառ Արարատին: Կարծես վերջին յոյսդ ըլլար ան» (էջ 310):

Պարոն Մարգարի կենսագրության մեջ արձանագրված բացառիկ երջանիկ պահերից մեկն էլ սա է. «Արարատը կը պսպղայ իր ձիւնածածկ տեսքով: Պանդոկի մեր պատշգամբէն շատ յստակ կը տեսնուի ան: Երկուքով ուրախ տրամադրութիւններու մէջ ենք: Արարատը երբէք այսքան տիրապետող, այսքան մօտ ու այսքան հեռու չենք զգացած: Ապրումներու ժայռակոյտ մըն է արդարև այս լեռը» (էջ 159): Տարիներ անց Երևանում բնակարան գնելու նախապայմանը մեկն է՝ պատուհանից պիտի երևա Արարատը: «Սփիւռքահայի անբուժելի հիւանդութիւն» (էջ 287):

Հայրենիքում նորությունն ազգային գաղափարախոսության տարածումն ու խորացումը չէ. «Նորութիւնը անձնասիրութիւնն է և ոչ թէ՝ ազգակերտումը» (էջ 311): Հանրահայտ ճշմարտություն է՝ ժողովուրդները «չեն մահանար, այլ անձնասպան կ'ըլլան» (էջ 203): «Հայաստանի Հանրապետությունում նորաձև այլանդակութիւններու ականատեսը կ'ըլլաս» (էջ 309),— կարդում ես ու մի պահ տեղափոխվում մեր օրեր, բայց, դժբախտաբար, պատկերը կրկնվող է, այնինչ Գարեգին Նժդեհը (Գարեգին Տէր-Հարությունյան, 1886-1955) «Որդիների պայքարը հայրերի դէմ» (Սելանիկ, 1927) «լրջախոհ գործին մէջ» հայ երիտասարդներին

հորդորում է զգույշ լինել, քանի որ «Դալարների տակ հաճախ մահաթոյն օձ է թաքնուած լինում» (էջ 307):

Մարգար Շարապխանյան մարդը, հայը, գործիչը գիտի մի ճշմարտություն. «Երկիր կառավարելը բնատուր կոչում մըն է: Ժողովուրդիդ ու Հայրենիքիդ համար անսակարկ նուիրում մը» (էջ 312),— առանց որի երկիրն ու ժողովուրդը քայլում են դեպի անդունդ: Սրան գումարվում է «օտարին կապկելու» (էջ 315) հին հիվանդությունը, և եզրակացություն. «Ամէն տեղ իշխողը դրամն է» (էջ 323):

Մարգար Շարապխանյանի «…Ազգովին մենք պատրաստ չէինք այս յեղաշրջման» (էջ 326) կասկած-եզրահանգումը դառն է, բայց երբ հետադարձ հայացք ես նետում անկախության տասնամյակներին, հասկանում ես՝ միակ ասպարեզը, որտեղ «հրաշագործել ենք», թալանն է՝ պարզ գողությունը դարձնելով իշխանության նշանաբան ու գործունեության ծրագիր: Դժբախտաբար հայոց հողի վրա շատ չեն ծնվում նվիրյալներ, բայց նվիրյալ ձևանալու արվեստը կատարելագործել ենք ու պարբերաբար իշխանություն ենք փոխում: Իրականում փոխում ենք թալանի ձևերն ու միջոցները՝ իշխանական լծակները փոխանցելով մի կեղտոտ ձեռքից մյուս անմաքուր թաթին…

Պատմության քառուղիներով «գնում է հայը՝ բոլոքը ճակատին» (Էդուարդ Ակնունի՝ Խաչատուր Մալումյան, 1863-1915, «Դէպի Երկիր», 1911, Պոսթոն): Մարգար Շարապխանյանը Է. Ակնունու այս աշխատությունը երկրորդ անգամ հիշատակելիս (էջ 318-320) մեծ հատված է մեջբերում՝ փորձելով մեծ հայրենասերի՝ ժողովուրդ և Հայրենիք պաշտպանելու դասերը փոխանցել նոր սերունդներին: Մանավանդ դեռևս 1986-ին աշակերտների հետ Խորհրդային Հայաստան էր եկել այն խոր համոզումով, որ իր սաները՝ «դաշնակցականների ճուտիկները», կարող են իրենց հայրերի երկիրը գալ և «Իրենց նպաստը կը բերեն մեր ազգի բազմացման ու զարգացման… չեմ գիտեր՝ ապագան ի՞նչ ցոյց կու տայ» (էջ 60):

Անմոռանալի է այս պատկերը. 1977-ին Մարգար Շարապխանյանն առաջին անգամ Երևանում տեսավ հայ մուրացկանին (էջ 55): Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) և Արամ Հայկազի (Զեքեմյան, 1900-1986) գրական ժառանգությունից գիտեմ՝ Խարբերդում, նաև Բարջանճ գյուղում և Շապին Գարահիսարում հայ մուրացկաններ չկային… Գրքի 141-րդ, 151-154-րդ, 244-րդ էջերում նկարագրված են մուրացող մեծահասակներ ու երեխաների մուրացիկության մի քանի դեպքեր… Մենք՝ հայաստանաբնակներս, անցել ենք այդ դժոխքով, հիմա էլ ապահովագրված չենք նման տեսարաններից: Շատ լավ եմ հասկանում գրքի հեղինակի զայրույթը և ցավը. օտարները հայի երկարած ձեռքի մեջ դրամ են դնում ու անցնում… Ձուկ բռնել սովորելու փոխարեն վարժվեցինք ուրիշի բռնած ձուկն ուտելուն ու ազգովին հայտնվեցինք հոգեբանական, բարոյական, նաև շատ հմտորեն սարքած հոգևոր թակարդի մեջ՝ քիչ-քիչ կորցնելով մարդկային ու ազգային արժանապատվությունը, ձեռք բերեցինք աղանդավորի ԱՆՀԱՅՐԵՆԻՔ կեցվածք հենց մեր ՀՈՂԻ վրա…

Տիկին Էլիզը և Մարգար Շարապխանյանը

Մարգար Շարապխանյանի համար անցյալի հիշատակները թանկ են, բայց նա դժվարանում է հասկանալ «բոլշևիզմի կարօտախտով տառապողներին», որոնց անվանում է «յաւիտենական դժգոհները» (էջ 102): Շարապխանյանին դժվար է մեղադրել մեր խայտաբղետ իրականության կուսակցական և միակողմանի ընկալման մեջ, բայց դժվար, անգամ անհնար է կարծել, թե մեր երկրում կատարված փոփոխությունները մի՛շտ տրամաբանական են եղել և ծառայել են առաջադիմությանը: Շատ լավ է այս հեռանկարը. «…Անպայման պիտի գայ օրը, երբ խղճմիտ ու հեռատես մարդիկ պիտի հայտնուին նաև Մեր Երկրին մէջ…» (էջ 223), բայց պայծառ ապագան դեռ շատ հեռու է մեր դառն իրականությունից: «Կ'ապրինք այս օրերուն ազատ կոչուած երկրին մէջ՝ առանց ազատութեան իմաստին ծանօթացած ըլլալու: Ու այս մէկը հայաստանաբնակ հայուն յատուկ չէ միայն» (էջ 145):

«Երևանցին կը սիրէ խօսիլ» (էջ 80),— արձանագրում է Մարգար Շարապխանյանը,—ում աչքից չեն վրիպում «ընկերային ու քաղաքական կեանքը հայացնելու մեծ ճիգը» և «ոգևորիչ երևոյթները» (էջ 88): Թվարկեմ՝ Եռագույնը, «Մեր Հայրենիք»-ը, հեղափոխության առաջնորդի արձանները քանդելը, պայթեցնելը, մայրաքաղաքի ակնառու զարդերից մեկի՝ այդ արձանի պատվանդանի պայթեցումը և նման «ձեռքբերումներ...»: Այնինչ անցյալ չունեցող ժողովուրդները զրկվում են ներկայից ու ապագայից, պատմական հիշողությունն անցյալին վերադառնալու պարտադրանք չէ, այլ ինքնաճանաչման միջոց…

Կանադաբնակ ուսուցիչը «երջանիկ սերունդի»՝ սաների հետ տեսնում է մայր երկրի անկախացումը, բայց թարմ է «Առաջին հանրապետութիւնը կերտած ու տեսած» մարդկանց հուսախաբությունը:

Պատմությունը կրկնվո՛ւմ է:

ԱՅՈ՛:

Ու հիմա Մարգար Շարապխանյանը զուր է փորձում մտքում համատեղել «Հայաստանի հող, Հայաստանի զինանշան ու այս մեծ մայրիկը՝ հայերէն չխոսող իր թոռներուն» հետ (էջ 171), չէ՞ որ «Հայերէնով Ամերիկայի մէջ դրամ չես կրնար վաստկիլ» (էջ 170) չմեղանքը կա ու գործում է, ավելին՝ արդեն տարածվում է Մայր Հայրենիք ներկայացող Հայաստանի Հանրապետությունում:

Ճիշտ է, «Մեր սարերի նման տղերքը» (էջ 224), փառք ԱՍՏԾՈ, կան, կովում են, բայց «Տա-

ոօրինակութիւնների երկիր մըն է մեր երկիրը» (էջ 224)՝ հիասթափություններով ու խանդավառ ոգևորությամբ… Սարսափելի է այն երկրի ապագան, որտեղ «Սովորելը համարում են երկրորդական, անտեղի ու անիմաստ: Եթէ փող ունենան, բարձրագոյնն էլ կ'աւարտեն, լաւ գործ էլ կ'ունենան, լաւ կ'ապրեն և ամենակարևորը՝ դիրք ու «ճիփ» կ'ունենան: «Ճիփը» դարձել է անձի ուժի, խելքի և հարստութեան չափման միաւոր: Ահա՛ մեր ապագան…» (էջ 240):

Այսքանից հետո մնում է պարզապես ասել՝ փառք ԱՍՏԾՈ, որ դեռ կան այս հողատարածքը իրենց երկիրը համարող մարդիկ, որոնք երկրի ՏԵՐ ու ԾԱՌԱ են. մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: Ահա թե ինչու այսքան ծանր պատմական շրջան ապրելուց հետո ՀՈՂՍ (թեկուզ վիրավոր ու մասնատված) կա՛: Ուրիշ հարց, որ հայի այս ՀԱՅ տեսակը, որպես օրենք, անտեսված է: Սա՛ է հազար երանգ ունեցող ու այդպես էլ անճանաչելի մնացած ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ:

Բայց կա ազգային ողբերգության ևս մեկ ու չբացահայտված դրսևորում. Թարգմանչաց տոնը «Սփիւռքի մէջ է, որ իմաստ ունի: Մենք Սփիւռքի մէջ այսօր կ'ապրինք 4-րդ դարու ճգնաժամը: Կը կորսնցնենք գիր ու լեզու» (էջ 131):

Չեմ ուզում միջամտել, բայց նաև անզոր եմ լռել, տասնամյակներ շարունակ չափազանցրինք մեր մշակույթի դերը՝ այն համոզումով, որ մեր հզոր մշակույթը մեզ հայ կպահի աշխարհի չորս ծագերում: Չպահե՛ց: Ավելին, մաս-մաս կորցրինք մշակույթը և հասանք մեր օրերին, երբ ՀՈՂԻ կորուստն ու հազարավոր պատանիների նահատակությունը դիտարկեցինք սովորական երևութ, չզայրացանք, չզարմացանք, չընդոստացանք…

Ընթերցե՛ք ու վերընթերցեք Համաստեղի «Այծետոմար» երգիծական պոեմը ու այսօր մեր ՀՈՂԻ ճակատագիրը տնօրինող բոլո՛ր «հերոսներին» կտեսնեք իրական դեմքերով, կհասկանաք մեր երկրում պարբերաբար կրկնվող ողբերգության արմատը. ապրեցինք ու ապրում ենք վայրագ ցեղատեսակի կողքին, չճանաչեցինք նրա իսկական էությունը: Համաստեղի պոեմում էլ խաղաղության կոչ արեցին հարևաններին, ու Չոր գյուղից մնացին միայն ավերակներ…

Մի՞թե մենք ի վիճակի չենք մեր անցյալից դասեր քաղել…

Պատասխան չունեմ:

Տաթևի վանքի սրբազան կամարների տակ ապրում են անցյալի հիշատակները, և սփյուռքահայն զգում է «հողի քաշողական անուրանալի ուժը» (էջ 95): Ընդգծում եմ անուրանալի բառը. ինչպե՞ս եղավ, որ մենք՝ Տաթև պարբերաբար ուխտի գնացող հայաստանաբնակներս, կորցրինք այդ ուժի կենդանի զգացողությունը…

Չգիտեմ:

Առաջին հայացքից թվում է՝ Զանգեզուրը «տարբեր Հայաստան» է (էջ 93)՝ Գարեգին Նժդեհի ու Անդրանիկ Զորավարի (Օզանյան, 1865-1927) փառքով ճաճանչավորված, բայց տեսեք՝ ինչ է մտածում Խնձորեսկի անհույս աղքատությունը տեսած հայ մարդը: «Իմ տեսած ժողովուրդին կենսամակարդակը սակայն ինծի համար այդ գիշեր (և շատ մը ուրիշ գիշերներ) հակառակ ամէն օր հոգեպէս ուրախ զգացած ըլլալուս՝ ենթագիտակցութեանս մէջ երբէք չդադրեցաւ մտատանջ ընելէ: Ձիս անհանդարտեցնող բան մը կար մթնոլորտին մէջ, որ կը կրծէր հոգիս:

Արդեօք ժողովուրդիս մէջ օտարական մը զգալու անպատուաբեր զգացո՞ւմն էր: Վստահ չէի» (էջ 99-100):

1990-ի աշնանը Հայաստանի Հանրապետությունում, որտեղ «ազատ խօսքը, ազգային ոգին» (էջ 105) էին իշխում, գոնե Երևանի սահմաններում փոխվում են «օտարաբոյր անունները»: Դժվար է հավատալ, որ այդ տարիներին իբր թե կրթություն ստացած «հայերի» ռիմակն այսօր կարող է սահմանամերձ ու ոչ սահմանամերձ բազմաթիվ տարածքներ անվանել թուրքական վաղուց մոռացված անվանումներով, նվիրել թուրքին. 1990-ականների «հայամետ» իշխանության այս ժառանգները չեն էլ ամաչում թուրք անունը կրելուց:

Համոզված եմ՝ Մարգար Շարապխանյանը, թեկուզ և ոչ հստակ ձևակերպումով, Հայաստանի Հանրապետություն իր այցելությունների ընթացքում ավելի ու ավելի խորն է զգացել այն անդունդը, որի մեջ ենք հիմա ազգովին՝ անկախ բնակության վայրից: Ի պատիվ Մարգար Շարապխանյանի՝ հավաստեմ՝ նա դեռևս 2003-ին արձանագրում էր, որ օտարամոլությունը, հատկապես վարակի արագությամբ տարածվող «ճաշակէ զուրկ ամերիկեան բաները» վկայում են՝ ազատությունն ընկալել ենք որպես «դոնբաց արտօնագիր մը», և «որ ամէն մարդ իր ուզածը ընէ՝ իր ուզած ու հասկցած ձևով» (էջ 117): Սա անբուժելի հիվանդություն է, ու ծերունի հայի ձևակերպումը ցավոտ է ու ցավի պես կենդանի. «Վստահ, Հայրենիքին համար մեռնողները աւելի երկար պիտի ապրեն մեզի նման մեղկ ապրողներից» (էջ 260): «Անցեալով հպարտացող ժողովուրդ մըն ենք մենք, կը սիրենք մեռելներով ոգևորուիլ, տուն կանչել, իսկ ողջե՞ր հապա» (էջ 220): Հարցի պատասխանը մեկն է՝ Հայրենիք կառուցելու համար պետք է հրաժարվել «քաղաքական ապիկարութիւնից», «ազգային անմիաբանութիւնից» (էջ 222):

Հնարավո՞ր է:

Համառ հայրենասեր Մարգար Շարապխանյանը համոզված է. «Անտեսանելի կապեր կան հոգիէ հոգի, որոնք միայն հայերուս յատուկ են: Անշօշափելի ու անքակտելի կապեր: Տարբեր է հայը ու այդպէս ալ պիտի մնայ, որքան ատեն որ Սփիւռք և Հայրենիք գոյութիւն ունենան» (էջ 97-98):

Ծանր է Մարգար Շարապխանյանի հիասթափությունը հայաստանաբնակ մի քանի մտավորականներից (մեկին նկարագրում է տխրահռչակ «ջիփով», մյուսին՝ հմտորեն ստելու պահին…): «Արդեօք նոյն ժողովուրդի զաւակներն ենք մենք» (էջ 215) կասկածը կրծում է ՀԱՅ մարդու սիրտը: «Ճիշդ է նաև, որ մտաւորականութիւնը դեռ չէ ստանձնած առաջնորդի իր դերը և չէ դրսևորած իր հաւաքական ուժականութիւնը» (էջ 329): Հույսով շնչող տողերը պարզապես լավատեսություն են… Ճշմարտությունն այն է, որ մեր երկրում հերթական ապիկար իշխանությունը միշտ իր կողքին ունի, այսպես կոչված, մտավորականներ: Պատճառն այն է, որ մենք ազգովին չենք տարբերակում դիպլոմավորին (վերջին տարիներին՝ նաև դիպլոմ չունեցողներին) և իսկական մտավորականին՝ անկախ զբաղմունքից: Փաստորեն «սրտբաց ու համարձակախօս» (214) թվացող այս մարդիկ էլ են վարակված Հայաստան աշխարհում տարածված շահամոլության բացիլներով…

Հավելեմ՝ նաև տարածում են այդ վարակը հենց միայն իրենց գոյության փաստով…

Մարգար Շարապխանյանն անդրադառնում է նաև 1940-ական թվականների ներգաղթի թեմային: «Ոմանք կեղծ հայրենասիրութեամբ վարակուած էին և մեծ ակնկալութիւններով ճամբայ ելան, իսկ ուրիշներ անբիծ հայրենասիրութեամբ տոչորուած էին: Այս վերջինները դժբախտութիւնը ունեցան զըրկանքներու և տառապանքներու ենթարկուելու» (էջ 26),— սա է առաջին մեկնությունը: Ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում իրար չհասկանալու պատճառը Մարգար Շարապխանյանն անվանում է ոմանց «կարմրախտէ» վարակված լինելը: Հայկական օդանավի վրա նկարած եռագույն Արարատը ոգևորում է սփյուռքահայերին. «Էհ, Մարգար, ժողովուրդ էինք, ազգ դարձանք» (էջ 115): Հանդուրժողականության ոգին չկա հայության մեջ, և դա շատ վառ դրսևորվում է մեր կյանքի բոլոր ոլորտներում, իսկ կորուստների համար զղջալու օրը հեռու չէ… «Ժամանակը մեր դէմ կ'աշխատի» (էջ 284),— նախազգուշացնում է Մարգար Շարապխանյանը, որին պարզապես հունից հանում են «Ասիկա մեր երազած Հայրենիքը չէ» (էջ 314) արտահայտությունը, «մակերեսային հայրենասիրութիւնը, աժան տգիտութիւնը» (էջ 314),— ինչպես բնորոշում է հեղինակը:

Առաջին սիրո հետ հանդիպման ջերմություն ուներ առաջին այցը Արցախ: Անկողնուն գամված ազատամարտիկ Մխիթարի անմխիթար վիճակը հունից հանել է պարոն Մարգարին… Այստեղ էլ նույն անհույս իրավիճակն է, աղաղակող անտարբերությունը, սոցիալական անհավասարությունը… Մարգար Շարապխանյանը ստեղծված վիճակից ելք է փնտրում ու մտորում, թե. «Հիմա ժողովուրդը աւելի մեծ թափով Հայաստան կ'երթար ու այս արտագաղթի խայտառակութիւնը տեղի չէր ունենայ» (էջ 232), եթե 1940-ականների ներգաղթը կազմակերպված չլիներ. «Ստալինի այս փտախտը կը փորձէին մեզի ներկայացնել որպէս փայլուն և հզօր վարչակարգ» (էջ 253):

Համաձայն եմ:

Բայց ինչպե՞ս հասկանալ խորհրդային երկրի քննադատության մեջ չափ ու սահման չճանաչող գաղափարամոլությունը. սա հիմա էլ է խանգարում հայության միասնությանը:

«Զրկանքի օրեր են» (էջ 31) ապրել հայության զանգվածները 1990-ականներին, երբ հերթ էին կանգնում հացի ու ամեն ինչի համար: Մեկ անգամ հացի փուռ գնացի ու հազիվ փրկվեցի փոի կրակների մեջ այրվելուց: Տանը լուսահոգի մայրս նայեց խանձված դեմքիս ու մազերիս, անգամ չնկատեց ձեռքիս երկու փոքրիկ հացերը և գոռաց վրաս, որ հաց հայթայթելը իմ գործը չէ: Դրանից հետո ի՞նչ դժվարությամբ ու ի՞նչ գնով (բառացիորեն՝ ոսկու) ձեռք բերած մի պարկ ալյուրից ամեն օր հաց էր թխում՝ կոտրված դաստակների ցավն արհամարհելով, որպեսզի թոռների հետ հաց հասցնի մենակ ապրող հարևաններին ու հայրերի լքած փոքրիկներին կողքի շենքի տասնչորսերորդ հարկում՝ նաև ցերեկը անլույս աստիճանները բռնած բարձրանալով (հավելեմ՝ երկու անգամ սրտի շատ լուրջ խնդիրներ ունենալուց հետո)…

Սա մե՛ր կյանքն էր, մենք սա՛ ստացանք «նվեր», երբ անխնա քանդեցինք մեր պապերի ու հայրերի կառուցած երկիրը՝ բարեկարգելու փոխարեն… Հետո մեզ հաջորդող սերունդները քանդեցին մեր իբր թե սարքածը, ինչի հետևանքով ունենք այն, ինչ ունենք:

Խոստովանեմ՝ լավ չէի հասկանում Արամ Հայկազին, երբ ոչ միայն ինքը չէր ուզում տեսնել ծննդավայր Շապին Գարահիսարը, այլև մյուսներին էլ խորհուրդ էր տալիս չայցելել կորցրած Բնօրրանի ավերակներ: Մարգար Շարապխանյանը գրում է, որ ինքնաքսորի մեջ ապրող հույն բանաստեղծներից մեկը (անունը չի հիշատակվում) «Յաճախ կը թելադրէր իր շուրջինները, որ չայցելեն այն վայրերը, զորս սիրած են ժա-մանակին, և որոնք որպէս աղբիւր ծառայած են իրենց երևակայութեան՝ այն վախով, որ անոնց իրականութիւնը կրնայ յուսախաբ ընել զիրենք» (էջ 154):

Հայ և հույն գրողները հավանաբար ճիշտ են վարվում, բայց Մարգար Շարապխանյանը ոչ միայն շարունակաբար այցելում էր, այլև արդեն քանի՞ տարի ապրում է Հայրենիքում: Ճիշտ է, ինչ-որ չափով վիրավորական է, որ հունարենի՝ Շ գիրը չունենալու պատճառով ազգանունն աղավաղվում է… Ոչինչ, ահա՛ Մեսրոպ Մաշտոցի հիշատակին անդրադառնալու ևս մի առիթ. «Հոգի՛դ սիրեմ, Մեսրո՛պ Մաշտոց, գիր ստեղծելը այդպէս կ'ըլլայ…զոյգ-զոյգ…հապա ի՞նչ կը կարծէք» (էջ 246):

Բայց Մաշտոցին հասցեագրված գոհաբանությունը նաև լրացուցիչ ազդակ է՝ արևելահայերենի ուղղագրությանն անդրադառնալու. դեռ 1900-ականներին քանի՞ անգամ եմ փորձել զրուցել, բացատրել ուղղագրության դաշտում «պատերազմողներին», որ ՀԱՅ

մարդը պարտավոր է երկու ուղղագրություններին էլ տիրապետել: Ամենակարևորը՝ ուղղագրության համար մղվող անսահանջ մարտերում կամաց-կամաց թուլացրինք արևելահայերենի դիրքերը:

Առանց տիկին Էլիզի անավարտ կլինեին ոչ միայն Մարգար Շարապխանյանի գիրքը, այլ նաև իմ խոսքը: Գրքում տասնյակ անգամ հանդիպում ենք այս ՀԱՅ տիկնոջը, և ուզում եմ կրկնել պարոն Մարգարի խոսքից մի հատված, այն էլ ինչ հատված. ««Ինչ լաւ է,— կը մտածեմ՝ մեղմ ժպիտ մը դրոշմելով շրթներուս,— այսքան տարի ետք տակաւին նոյն ալիքին վրայ կը գտնուինք», ու մտածածս ինքնասիրաբար կը պահեմ մէջս:

— Նորէն բաներ մը անցան մտքէդ,— կը յարէ ան՝ դէմքիս նայելով:

Չեմ պատասխաներ: Բայց դուն, ընթերցո՛ղ, այլևս կը ճանչնաս զիս. երբ մեղմ ժպիտ մը դրոշմեմ շրթունքներուս, կը նշանակէ, որ … բաներ մը կ՚անցնին մտքէս …»» (էջ 229):

«Ազգիդ ու քո գերեզմանը Սփիւռքն է: Լա՛ւ իմացիր» (էջ 329) և «Հայրենիքն է մեր օրրանը, մեր օճախը, մեր յաւերժութիւնը: Իրմէ դուրս ելք չկայ, հանգիստ չկայ, փախուստ չկայ» (էջ 320) հորդորխնդրանքներով է ավարտվում այս գիրքը:

Կարդում եմ ու մտածում՝ այս ամենը շատ լավ գիտեն նաև նրանք, ովքեր տասնամյակներ շարունակ բռնել են ու հիմա էլ բռնում են պանդխտության անհույս ճամփաները…

Սիմոն Վրացյանի (Գոռուզյան, 1882-1969)՝ «Հին թղթեր նոր պատմութեան համար» (1962, Պէյրութ) գրքում ձևակերպած «…Այն ժամանակ հաւանական է, որ շատ բաներ չանէինք այնպէս, ինչպէս արինք» (էջ 9) արժանապատիվ ու ցավոտ ափսոսանքը Հայաստանի Հանրապետության այսօրվա վայրեկվարների համար մտքի ու խղճի անհասանելի բարձունք է. չէ՞ որ նրանց կառավարող միջազգային կառույցները չեն կարող վրիպել, ուրեմն ամեն ինչ ճիշտ է, և անսխալ են խաղաղություն մուրալու անզիջող ջանքերը, ամեն օր եղած-չեղածը քանդելու մոլուցքը ու դարավոր թշնամուն պարզապես նվիրվող ՀՈՂԻ նկատմամբ դրսևորած անհոգ անտարբերությունը …

***

Տասնամյակներ անց Շարապխանյան ամուսինների հետ փորձում ենք ճշտել՝ ե՞րբ ենք առաջին անգամ հանդիպել: Պահպանված լուսանկարներն անգամ չեն օգնում…

Հավանաբար կարևոր էլ չէ, պարզապես հետաքրքիր է:

Արդեն քանի՞ տարի հայաստանաբնակ ամուսինների հետ վիճաբանում ենք, քննարկում մեր իրականության ամենատարբեր հարցերը: Պատահում է՝ իրար չենք հասկանում, բայց երբեք չենք նեղանում, որովհետև մեզ համար չգրված օրենք է բաժանվելուց հետո էլ քննարկած հարցի մասին մտածելը, արտահայտած կարծիքները փորձել հասկանալը, որպեսզի հաջորդ հանդիպման ժամանակ է՛լ ավելի խորքից քննենք ու գտնենք խնդրի լուծման ընդունելի տարբերակը:

Բարեբախտաբար, Շարապխանյան ամուսիններին ինձ միավորող արժեքների շարքում առաջնայինը դպրոցն է՝ անունով Մուղնու կամ Ուշիի, բայց իրականության մեջ՝ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ:

Ռուսերեն սովորելու հարկադրանքը հիմա դարձել է հետաքրքիր զբաղմունք և հայաստանաբնակների հետ զրուցելու ընթացքում մեկ-երկու ռուսերեն բառերով զարմանքի ու հիացմունքի խոսքեր լսելու հաճելի առիթ:

Խորհրդային դպրոցի շրջանավարտիս համար նույնքան բնական է ռուսերենի լավ իմացությունը և դրա շնորհիվ ռուս գրականության մեծերին բնագրով կարդալու հաճույքը, որքան տիկին Էլիզի կամ պարոն Մարգարի համար եվրոպական լեզուներով գիրք կարդալը: Հետաքրքիր է տեսնել, թե Ուշիի երեխաներն ինչպես են դասերից հետո այցելում Շարապխանյաններին, փորձում նրանց օգնությամբ լուծել մեր ազգային կոչվող դպրոցի հայոց լեզվի դասագրքերում առաջադրված հանելուկները… Տիկին Էլիզը վրդովվում է, երբ խոսում է այդ «առաջադրանքների» մասին…

Լավ գիտեմ, թե ազգային դպրոցի անկումը սկզբնավորող դպրոցական «նոր» ծրագրերն ինչպես են հաստատվել, այն օրերի նախարարն ու փոխնախարարուհին ինչպես էին խուճապի մատնվել, երբ լսել էին, որ հայ գրականության ներկայացված ծրագրերը և դասագրքերը մերժելու ենք: Մերժումից հետո գտան «ելքը», և կրթական գործը գլորվեց ու գլորվում է դեպի անդունդ… Ապազգային այս գործով քանդեցին և՛ ազգային հռչակված դպրոցը, և՛ ՀԱՅ ընտանիքը. պապիկ-տատիկները սարսափեցին դասագրքերից, հայրիկ-մայրիկները սկսեցին փող աշխատել՝ որպես իրենց սիրասուն բալիկների լրացուցիչ պարապմունքների վճար… Դպրոցներում բազմացավ ու իշխող դարձավ «դաս+ա+տու+ներ»-ի տեսակը. սրանք են տնօրինում երկրիս ճակատագիրը՝ հերթական անգամ փոխելով կուսակցական պատկանելությունը ու ապահովելով նոր տերերի հաղթանակը….

Ազգովին հայտնվեցինք բացառիկ, իսկապես անանախադեպ իրավիճակում, երբ վճարում ենք չսովորելու համար:

Պատկերացրեք Շարապխանյան ուսուցչի վիճակը, երբ հայտնվեց այս իրավիճակում: Ի պատիվ նրա ասեմ՝ խուճապի չմատնվեց, և Շարապխանյան ամուսիններն սկսեցին աշխատել Ուշիի դպրոցում՝ իրավիճակը շտկելով, հարուստ փորձն օգտագործելով: Այսօր Շարապխանյան ամուսինները հետևորդներ ունեն, ուրեմն արդյունքներ կլինեն:

ԳՅՈՒՂԸ մարդկության, ժողովուրդների հարատևման ակունքներից է:

Ժամանակները փոխվում են, փոխվում է նաև գյուղի դիմագիծը, բայց ԱՐԱՐՄԱՆ ոգին կենդանի է պահում ավանդույթները, որոնց միջավայրում պիտի մեծանան այսօրվա ու վաղվա հայության սերունդները, որոնց համար թուրք կոչվելը վիրավորանք է … ■

Կուսակցական, անկուսակցական եւ նման եզրեր. փորձ՝ լաւ հասկնալու համար

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Մեր հասարակական կեանքին մէջ կան շարք մը բառեր, որոնց իմաստը ժամանակի ընթացքին կը ստանան այնպիսի դարձուածքներ, կը մեկնաբանուին այնպիսի զարտուղի ձեւերով, որ անհրաժեշտ է պարբերաբար վերադառնալ անոնց ու փորձել հասկնալ զանոնք ու ըմբռնել իրենց սկզբնական, հարազատ առումով:

Այդ եզրերէն մէկն է «կուսակցական» բառը՝ իր առնչակից քանի մը բառերով, որոնք կը կարօտին ճշգրտումի:

Բառին արմատը «կոյս»-ն է, ոչ մեր գործածած սովորական իմաստով, այլ իր միւս՝ «կողմ» նշանակութեամբ, որ աշխարհաբարը գրաբարէն ժառանգած է ու կ'երևի այնպիսի արտայայտութիւններու մէջ, ինչպէս՝ «յայս կոյս» կամ «յայն կոյս» («այս կողմ» կամ «այն կողմ») կամ բարդ բառերու, ինչպէս՝ «մեկուսի», «քառակուսի» և այլն:

Արդ, իր այդ «կողմ» իմաստէն է, որ յառաջացած է նաև «կուսակցութիւն»-ը, որ նոյն կողմի պատկանողներու հաւաքականութիւն մըն է և այսօր առանձնաբար կը գործածուի մասնաւորաբար «երկրի մը քաղաքական կեանքին բաղադրիչ կազմակերպութիւն» իմաստով, մինչ այլ լեզուներ, ինչպէս՝ անգլերէնը կամ ֆրանսերէնը, երկու բառով կ'արտայայտեն այդ իմաստը (political party, parti politique) կամ կը կցեն անոր անուան (Liberal party, Parti conservateur և այլն):

Նոյնն է պարագան «կուսակցական» բառին, որ կողմի մը մաս կազմող կամ պատկանող կը նշանակէ, այսօր՝ քաղաքական կուսակցութեան մը անդամ և կը գործածուի իբր առանձին եզր, մինչ միւս երկու լեզուներու պարագային պէտք է նշել անդամ եզրին հետ (political party member, New Democratic Party member, membre d'un parti politique, membre du Parti québecois և այլն):

Քաղաքակիրթ ու ժողովրդավար համարուող կամ ինքզինք այդպիսին յաւակնող պետութիւններու քաղաքական կեանքը կազմակերպուած է տարբեր ուղղութիւններ որդեգրող կամ գաղափարականներու հաւատացող կուսակցութիւններու ճամբով: Կուսակցութիւններ, որոնք երկրին սահմանադրութեան համաձայն՝ պարբերաբար կը մասնակցին ընտրութիւններու, և ըստ իրենց ստացած քուէներուն ու ձեռք ձգած աթոռներուն՝ կը կազմեն խորհրդարանը և առանձնաբար կամ իրարու հետ դաշնակցելով՝ կառավարութիւնը: Կառավարման այս ձևով կը գործեն նաև շատ երկիրներ, որոնք ոչ այնքան ժողովրդավար են, սակայն այդպէս կը ձևանան, բազմակուսակցական կ'ուզեն երևիլ, սակայն իրողութեան մէջ յաճախ կը գտնուին իշխող բռնապետական ուժի մը տիրապետութեան տակ, ուր կուսակցութիւնները անուանական գոյութիւն մը կը պահեն: Գիտենք նաև, որ խորհրդային

վարչակարգի ներքև կը գործէր միակուսակցական համակարգ:

Կուսակցութիւնները քաղաքական կեանքին ծառայելու միջոց են, անշահախնդրաբար, ոչ աւելին: Անոնք նոյն երկրի գործերը լաւագոյնս վարելու և երկիրը զարգացնելու իրենց ծրագրերով կը ներկայանան հանրութեան, կը վաստկին անոր վստահութիւնը ու կը գործեն:

Զարաշահումները, սեփական (կուսակցական, յաճախ նաև անհատական) և ոչ հաւաքական շահերու հետապնդումները մարդկային յոռի երևոյթներ են, որոնք կը պատահին, երբ տուեալ հաւաքականութիւն մը նախանձախնդիր չ'ըլլար երկրի ղեկավարութիւնը յանձնելու այն կուսակցութիւններուն, որոնք ծառայելու փոխարէն իշխել կը ձգտին:

Աւելցնեմ, որ բնական պայմաններու մէջ պետութեան մը բաղադրիչ կուսակցութիւնները թշնամիներ չեն, կրնանք ըսել հակառակորդներ են, թէև հիմա այդ բառն ալ աւելի ժխտական կը հնչէ, ուստի կը գործածուին «ընդդիմադիր» կամ «մրցակից» եզրերը: Ի վերջոյ, նոյն երկրի քաղաքացիներ են անոնց անդամները, երբեմն նոյնիսկ սերտ բարեկամներ, խնամիներ և խորհրդարանէն դուրս կրնան ունենալ մարդկային սովորական, սիրալիր, սերտ կամ այլ յարաբերութիւններ:

Կայ նաև այլ բառ մը, որ շատ չի գործածուիր մեր լեզուին մէջ, նաև կրնայ շփոթուիլ յաճախ «կուսակցական» բառին հետ, այդ «կուսակից» բառն է, որ կը տրուի ոչ թէ կուսակցութեան անդամին, այլ անոր, որ կուսակցութեան մօտ է. անգլերէնին ու ֆրանսերէնին մէջ այդ «partisan» եզրն է, որ կը նշանակէ «համախոհ» կամ «կողմնակից», ու ներկայիս հայերէնին մէջ

փոխարինուած է «համակիր» բառով:

Կուսակցութեան մը հիմնական ուժը իր անդամներն են՝ կուսակցականները, սակայն կուսակցութեան ներուժը իր համակիրներուն մէջ կը կայանայ, քանի որ անոնց անմիջական ու անսակարկ մասնակցութեամբ ու աջակցութեամբ է, որ կուսակցութիւն մը կրնայ իրականացնել իր ծրագրերը:

Այստեղ կ'ուզեմ նշում մը ընել: Հայ կեանքին մէջ և ոչ միայն հայ կեանքին, ոմանք ժխտական աչքով կը տեսնեն կուսակցական ըլլալու գաղափարը: Կը մեկնաբանեն կողմնակալութեամբ ու կը կարծեն, թէ մաս չկազմելով կուսակցութեան մը՝ իրենք աւելի առաքինի կ'ըլլան, աւելի՛ հայ... Իրականութիւնը, սակայն, հակառակն է: Այստեղ երկու եզրեր նկատի առնենք՝ անկուսակցական և չէզոք: Անկուսակցական ըլլալ կը նշանակէ կուսակցութեան մը չպատկանիլ, սակայն չի նշանակեր կուսակցութեան մը համակիր չըլլալ: Համակիրը չ'ենթարկուիր կուսակցութեան մը կանոնագրին, անոր անդամակցութեան պայմաններուն ու որոշումներուն: Սակայն ընդհանրապէս համախոհ կ'ըլլայ անոր, յատկապէս գործունէութեան այս կամ այն երեսին, մանաւանդ անոր գաղափարականին: Չէզոքը (այսինքն՝ ոչ ոք եղողը) ոչ մէկ կուսակցութեան համակիր է, ոչ մէկ կուսակցութեան օժանդակելու հակամէտ: Չի նշանակեր, որ ի՛ր ճամբով, իր հասկցած ձևով չի կրնար ծառայել հանրութեան, իր ազգին, սակայն մաս չի կազմեր քաղաքական կողմնորոշում ունեցող հաւաքականութեան մը: Չունի յանձնառութիւն, գէթ ընդհանրապէս չունի՝ որևէ կազմակերպութեան նկատմամբ, որևէ կազմակերպութեան հետապնդած նպատակներուն իր մասնակցութիւնը բերելու առնչութեամբ:

Մինչդեռ կուսակցականը ի սկզբանէ, դաշնակցականին պարագային նաև հաւաքականութեան առջև հանդիսաւոր երդմամբ՝ յանձնառո՛ւ անձ մըն է: Այդ



Խորհրդարանի բաժանումն ըստ կուսակցական պատկանելութեան

յանձնառութեամբ է, որ ան կը տարբերի համակիրէն, անկուսակցականէն ու չէզոքէն:

Կ'արժէ ընել նաև երկրորդ նշում մը: Իմ տեսածովս՝ Գանատայի մէջ տեղական կուսակցութեան մը անդամ ըլլալը կը սահմանափակուի տարեկան խորհրդանշական անդամավճար մը կատարելով (որուն մէկ մասն ալ ան ետ կը ստանայ տրաքերծման ճամբով), մինչդեռ մեր պարագային գոնէ դաշնակցականին համար կան այլ պարտաւորութիւններ՝ ժողովներու և աշխատանքներու մասնակցութիւն և այլն: Իսկ որոշումները վարէն վեր կ'երթան, ոչ թէ՝ վերէն վար: Գանատայի կուսակցութիւններու անդամներու մեծամասնութիւնը մասնակից անգամ չէ որոշումներու կայացման մէջ, կ'ընդունի ինչ որ փոքրամասնութիւնը կ'որոշէ: Եթէ չընդունի, համաձայն չըլլայ, կրնայ հրաժարիլ, այլ կուսակցութեան մը միանալ կամ նոր կուսակցութիւն մը հիմնել, բայց չի կրնար դաւանիլ, պատկանիլ նոյն կուսակցութեան, մանաւանդ գործել անոր անունով:

Յաւելուածաբար, շատերու համար կուսակցութեան մը նիւթապէս օգնելը միջոց կը նկատուի՝ պետական գանձէն օգտուելու, անձնական առաւելութիւն մը ձեռք ձգելու համար: Ոչ մեր, գոնէ Դաշնակցութեան պարագային, ուր նման ակնկալութիւններով եկողը սխալ դուռ զարկած պիտի ըլլայ, իսկ նման ակնկալութիւններ մնուցող մարմինը կուսակցութեան անյարիր կեցուածքի մէջ պիտի գտնուի: Անշահախնդիր ծառայութեան համար դաշնակցական կ'ըլլան, պէտք է ըլլան, միայն, ոչ այլ նպատակներով:

Մէկ նկատառում ևս՝ փակելէ առաջ այս մտորումները:

Հայ ազգային կուսակցութիւնները իրենց գործելակերպի ու գաղափարականի տարբերութիւններով հանդերձ՝ նոյն ազգին գերագոյն նպատակին՝ գոյապահպանման ու զարգացման կը ծառայեն: Անոնք մնայուն գործակիցներ են, ըլլալու են, պիտի ըլլան միշտ: Այլապէս ոչ հայ կրնան համարուիլ, ոչ ալ՝ ազգային:

ՈՒԺԸ ԹԷ ԻՐԱՒՈՒՆՔԸ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԿՆՃԻՌԸ)

(Խմբագրական «Ազդակ Շաբաթօրեակ Դրօշակ»ի, ԺԲ Տարի, Թիւ 3, 8 Փետրուար 1981)

(հատուած)

Աւելի յստակ բանաձևումով, ուժ՞ին «իրաւունքը», թէ իրաւունքի՞ն ուժը պիտի վարէ կամ պէտք է վարէ միջազգային յարաբերութիւնները:

Եթէ անցեալին նայինք և ներկան վերլուծենք, իհարկէ, պատասխանը յստակ ու բացայայտ է բոլորին համար: - Միջազգային յարաբերութիւնները կը ղեկավարուին՝ իբրև զսպանակ ունենալով ուժին «իրաւունքը» և ոչ երբէք՝ իրաւունքին ուժը:

Կը հետևի ինքնին, -ո՛վ որ ուժ ունի, նաև իրաւունք ունի: Այս կը թուի տիրական նշանախօսքը ցարդ, որուն կիրարկման հետևանքները ևս սակայն նոյնքան պարզ ու բացայայտ են բոլորին:

Փաստօրէն, ով որ իր մօտաւոր կամ հեռաւոր շահերուն գիտակցութիւնը ունի և այդ շահերուն ապահովումը կ՛ապաւինի բացառաբար ուժի գործածութեան կամ ճնշումին, ինքնաբերաբար տէր կը համարուի պետական առողջ մտածողութեան և քաղաքական իմաստութեան:

Իսկ ով որ սեփական շահերուն գիտակցութիւնը ունի նոյնքան յստակօրէն, բայց անոնց ձեռքբերումը կը փորձէ սկզբունքի հաւատալով կամ իրաւունքի՛ ուժին դիմելով՝ յայտնապէս ցնորատեսներու շարքին կը դասուի և պարզապէս կ՛արհամարհուի քաղաքական աշխարհի թատերաբեմին վրայ:

Ավելի՛ն. ահաւոր կեղծիք մը կը բեմադրուի միաժամանակ և կը գործարկուի առանց դոյզն իսկ խղճախայթի:

Արդարև, տեսականօրէն ամէն մարդ իրաւունքին հետ է, իրաւունքի ուժին անունով կը խօսի, սակայն գործնապէս ուժին «իրաւունքը» կը կիրարկէ:

Ամէն քաղաքագէտ կամ դիւանագէտ ամէն օր սկզբունքէ կը ճառէ ...սկզբունքօրէն, սակայն գործնականօրէն ճիշդ հակառակը կ՛ընէ՝ բացառաբար իր երկրի սեփական և յաճախ եսապաշտական շահերը միայն հետապնդելով:

Ամէն մարդ, քաղաքական կամ զինուորական ամէն ճակատ, մանաւանդ ամէն գերպետութիւն մարդկային իրաւանց երկրպագուն կը ձևանայ միշտ և իբրև դրօշակի՛ր կը ներկայանայ բոլոր ժողովուրդներու ազգային ազատ ինքնորոշման և ընկերային ազատագրութեան դատին, սակայն չկայ ճակատ մը, ուր թէ՛ ընկերային և թէ ազգային ազատագրական իրաւունքներն ու ազատ ինքնորոշման սկզբունքը օր ցերեկով չոտնակոխուին ամէնէն անողոք եղանակներով:

Արդ, աւանդական ու դասական այս «ռազմավարութեամբ», սակայն շղթայական հակազդեցութիւն մը կը զարգանայ իրողապէս, որ անխուսափելիօրէն կը յանգի մարդկային ահարկու աղէտներու, ընկերային ու բարոյական նոյնքան աւերիչ այլասերման մը զուգահեռ:

Պատմական փաստական իրականութիւնը այն է, որ պետութիւն մը ո՛րքան մեծ ուժ կուտակէ իր սեփական շահերու պաշտպանութեան համար, այնքան աւելի կը լայնայ ծիրը նաև սեփական շահերուն:

Եւ հակադարձաբար, ո՛րքան աւելի լայնայ ծիրը սեփական շահերուն, նոյն համեմատութեամբ ալ կը շեշտուի անհրաժեշտութիւնը յաւելեալ նո՛ր ուժի կուտակման և այսպէս շարունակաբար, մինչև որ միևնոյն պետութիւնը, իր իսկ կուտակած վիթխարի ուժին կամ արտաքին նոր ուժերու ճնշման տակ աստիճանաբար քայքայուի կամ գահավէժ իյնայ իր զօրութեան զէնիթէն:

Գերազանցօրէն աշխարհակալական և էապէս շահագործական այս գործընթացը անխուսափելիօրէն կ՛առաջնորդէ բռնութեան, ճնշումի և պարբերական արիւնահեղութեանց ոչ միայն հարևան ազգերուն, այլև յաճախ հարազատ ժողովուրդին նկատմամբ:

Կ՛առաջնորդէ ոչ միայն ֆիզիքական և նիւթական անհաշիւ կորուստներու, այլև բարոյական ու ընկերային այլասերման, հոգեմտաւոր անսահման ուժերու մսխումի ու սնանկութեան:

Այս կացութեան մէջ, ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը, մարդկութիւնը, մարդկային կեանքի հոլովոյթը կը դառնայ նոյն մոգական շրջանակին մէջ.- աշխարհակալական նորանոր կառոյցներու բարձրացում և պարբերական անկում՝ տագնապէ տագնապ առաջնորդելով մարդկային բովանդակ ընկերութիւնը, հերթափոխաբար:

Այս ընթացակերպով՝ խաղաղութիւնը, խաղաղութեան դաշնադրութիւնները ժամանակաւոր միջնարարներ կը հանդիսանան միայն, նոր և աւելի արիւնոտ և աւելի աւերիչ գօտեմարտերու իբրև նախապատրաստական հանգրուան:

ՍԱՐԳԻՍ ՋԷՅԹԼԵԱՆ, ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, Հայրոր առաջին, էջ 383-384, Երևան և Լոս Անճելէս, 1995 թ.

ԴՐՕՇԱԿ

Արցախ